Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

4-5(397-398)
28.02.2015
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԴԱՍ, ՈՐ ԵՐԲԵՔ ՉԻ ՓՈԽՎՈՒՄ

Կան պատմարժեք իրադարձություններ, որոնց ժամանակը ոչ թե հեռացնում է մեզանից, այլ հակառակը՝ ավելի է մոտեցնում: Այն պարզապես դառնում է մեր մշտական ուղեկիցն իր անտրոհելի գաղափարաբանությամբ ու խորհրդով, թրծվելով և ամրապնդվելով՝ փոխանցվում սերնդեսերունդ:

Ավելի քան քառորդ դար է անցել այն բոցաշունչ օրերից, երբ Արցախի ժողովուրդը ոտքի ելավ ու ջարդելով խորհրդային «ինտերնացիոնալիզմի» տաբուն՝ ազատության դրոշ բարձրացրեց: Անկասկած, պատմական արդարությունը վերականգնելու ձգտումը և ադրբեջանական տևական լծից ազատվելու մղումը ազատության իսկական պայքար էր, որից վախեցած՝ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունը Ադրբեջանի ղեկավարության հետ միասին նախաձեռնեց պատժիչ գործողություններ Ղարաբաղի ժողովրդի դեմ:

Ինքնորոշման գաղափարը Խորհրդային Միության համար անընդունելի էր, քանզի դա կնշանակեր «կանաչ լույս» վառել կայսրությունում բնակվող մյուս ազգերի ու ազգությունների առջև, ինչն իր հերթին նշանակում էր հսկա երկրի աստիճանական փլուզում: Իհարկե, դա այդպես էլ եղավ հետագայում, սակայն այդ գործընթացում ամենածանր հարվածը տարավ արցախահայությունը:

ԽՄԿԿ Քաղբյուրոն ոչ միայն չընդունեց հայկական ինքնավար մարզը ԱդրԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու խնդրի վերաբերյալ ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի նիստի որոշումը, այլև նույնիսկ դա անվանեց «էքստրեմիստների» ձեռքի գործ: Նման մոտեցումը հանգեցրեց նրան, որ այդուհետև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում օրինական իշխանությունը վերացվեց: Փոխարենը ստեղծվեց Հատուկ կառավարման կոմիտե, որը գլխավորում էր Մոսկվայից ուղարկված Արկադի Վոլսկին: Ժամանակավոր կառավարման այդ ձևը, սակայն, չարդարացրեց իրեն, որը հետայդու փոխարինվեց ավելի վատ կառույցով՝ հանրապետական կազմկոմիտեով՝ հայատյաց Վիկտոր Պոլյանիչկոյի ղեկավարությամբ: Թե ինչ բերեց Պոլյանիչկոյի նշանակումը՝ քաջ հայտնի է բոլորիս. հենց նրա օրոք սկսեց մեծանալ ճնշումը Արցախյան շարժման ակտիվիստների, և առհասարակ, արցախաբնակ հայերի վրա: Ինքնավար մարզում ծայր առան սադրանքները, բռնություններն ու սպանությունները՝ ավելի խորացնելով երկու ազգերի միջև ատելություն ու թշնամանքը: Այդ ամենի օրինաչափ հետևանքը ղարաբաղյան պատերազմն էր, ցավոք, հազարավոր մարդկային կորուստներով:

Եթե ժամանակին Մոսկվայում ճիշտ ըմբռնեին ու համարժեք վերաբերմունք դրսևորեին արցախցիների ազատ կամարտահայտությանը, ապա հնարավոր կլիներ խուսափել մեզ համար թանկ մարդկային կորուստներից: Տասնամյակներ են անցել, սակայն հիմնախնդիրը մնում է չլուծված, և տեսանելի ապագայում հազիվ թե այն արդարացի լուծում ստանա: Դարձյալ ստիպված ենք հույսներս դնել մեզ վրա՝ ունենալ ուժեղ պաշտպանական բանակ և հաստատակամորեն կերտել մեր պետականությունը:

88-ի փետրվարը մեզ անփոխարինելի դասեր է տվել, որոնք պարտավոր ենք ուղենիշ դարձնել: Եվ դրանց մեջ ամենագլխավորը, թերևս, միասնության դասն է, որը երբեք և ոչ մի պարագայում չի փոխվում:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԼՐՋՈՐԵՆ ՎԵՐԱԲԵՐՎԵԼ ԾՐԱԳՐԻՆ

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի մոտ տեղի ունեցավ ընդլայնված խորհրդակցություն՝ նախարարության պատասխանատու աշխատողների, կրթության բաժնի վարիչների, «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինություն» նորաստեղծ ՊՈԱԿ-ների տնօրենների մասնակցությամբ:

Օրակարգի առաջին հարցը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված՝ կրթության և գիտության բնագավառներում իրականացվելիք միջոցառումների մասին էր: Նախարարը նախ տեղեկացրեց պաշտոնական միջոցառումների մասին, որ նախատեսվում են Հայաստանում և Արցախում: Համահայկական այդ իրադարձությունը բարձր մակարդակով կազմակերպելու համար երկու հանրապետություններում ստեղծվել են պետական հանձնաժողովներ: Երևանում կանցկացվի միջազգային գիտաժողով, որին կմասնակցեն ներկայացուցիչներ տարբեր պետություններից: Ապրիլի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ժամը 16.00-ին կկատարվի Սրբադասման արարողություն: 19.15-ին հայկական եկեղեցիներում կդողանջեն զանգերը: Հնչելու է հարյուր զարկ: Հայտարարվելու է լռության րոպե, որի ժամանակ կհնչի «Հայր մեր»-ը: Ապրիլի 24-ին կկազմակերպվի տարբեր պետությունների պատվիրակությունների և բնակչության երթը դեպի Ծիծեռնակաբերդ:

Արցախում կազմակերպվող միջոցառումների շարքում կանցկացվի միջբուհական գիտաժողով ԱրՊՀ-ում, Ցեղասպանության թանգարանի տրամադրած լուսանկարների ցուցադրություն, համապատասխան նյութեր կտրամադրվեն նաև դպրոցներին: Նախատեսվում են գրական-երաժշտական երեկոներ (ցերեկույթներ) ուսումնական հաստատություններում՝ մանկավարժների և աշակերտների մասնակցությամբ: Պետք է նախապատրաստական լուրջ աշխատանքներ տարվեն, որպեսզի դրանք լինեն հագեցած և նպատակային: Կանցկացվի շարադրությունների մրցույթ՝ «Հարյուրամյա չսպիացող վերք» թեմայով: Լավագույնները կտպագրվեն «Լուսարար»-ում, որը նաև հատուկ համար կթողարկի:

Ինչպես հայտնի է, կառավարության որոշմամբ՝ մայրաքաղաքի, ինչպես նաև որոշ դպրոցներ շրջաններում դարձել են ՊՈԱԿ-ներ, իսկ գյուղերի դպրոցները միավորվել են ընդհանուր ՊՈԱԿ-ներում: Կրթության բաժնի վարիչները տեղեկատվություն ներկայացրին գործընթացի մասին, պարզաբանվեցին հնարավոր խնդիրները, գործառույթները: Կրթության բաժինները կզբաղվեն բացառապես կրթական հարցերով, ՊՈԱԿ-ները՝ ֆինանսատնտեսական: Կրթության բաժինները հանդես կգան որպես լիազոր մարմիններ և կիրականացնեն ընդհանուր վերահսկողություն:

Առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի և ուսուցիչների նախաատեստավորման առաջիկա վերապատրաստման մասին հրահանգները ներկայացրեց ԿԳ վարչության պետ Ռ. Մուսայելյանը: Նախարարը հորդորեց այս օրերին ավելի կենտրոնացնել ուսուցիչների ուշադրությունը հանրապետական և եզրափակիչ փուլ անցած երեխաների հետ անհրաժեշտ աշխատանք տանելու և լավագույն արդյունքներ ապահովելու համար:

Փոխնախարար Մ. Համբարձումյանը տեղեկատվություն ներկայացրեց «dasaran. am» ծրագրի ընթացքի մասին: Ինչպես հայտնի է, ցանցին միացած են Արցախի 90 դպրոցներ: Ստեփանակերտի երեք դպրոցներ՝ հ.2, հ.5, հ. 12, ապահովում են 100, 3-րդ, 6-րդ,10-րդ դպրոցները՝ 80-90 տոկոսյա արդյունքներ, Շուշիի շրջանի Քարինտակի, Քաշաթաղի շրջանի մի քանի դպրոցներում նույնպես առկա է 100 տոկոսյա արդյունք, իսկ մյուս դպրոցներում վիճակը բավարար չէ: Փոխնախարարի կարծիքով՝ ընդհանրապես չի կարելի որևէ դպրոցի արդյունք լավ համարել հ. 2 դպրոցի համեմատությամբ, որովհետև վերջինս տեխնիկապես լավ վիճակում չէ: Եթե այստեղ կարողանում են ապահովել գերազանց արդյունք, ապա ցանցին միացած ցանկացած դպրոց, որը տեխնիկապես հագեցած է, առավել ևս կարող է:

Նախարարը բաժնի վարիչներին խիստ զգուշացրեց դպրոցների նկատմամբ հետևողական լինել այս հարցում: «Սա ուսումնական գործընթացին օժանդակող ծրագիր է, և եթե չի կատարվում, նշանակում է պարտականությունները չեն կատարվում: Ինչու՞ դպրոցների մի մասը ծրագիրը կարողանում է կատարել 100 տոկոսով, իսկ մի մասը՝ ոչ: Սա անպատասխանատու վերաբերմունք է, և պատճառաբանություններն անհիմն են»: Նախարարը մեկ ամիս ժամանակ տվեց՝ գործընթացը կարգավորելու՝ շեշտելով, որ անձամբ է հետևելու դրան: Դա հրաման է, և այն չկատարողները պատասխանատվության կենթարկվեն, ընդհուպ՝ կլինեն կադրային փոփոխություններ: Ս. Ասրյանը մի անգամ ևս պարզաբանեց ծրագրի նպատակը. նախ՝ ապահովվում է դպրոց-ծնող կապը: Յուրաքանչյուր դասղեկ պարտավոր է երեխայի ուսումնական արդյունքների մասին ծնողին տեղեկացնել: Կան դպրոցներ, որոնք դեռևս այդ ցանցի մեջ ընդգրկված չեն: Աստիճանաբար բոլորը կմիանան: Աշակերտների գնահատականները փոխանցելը այդ ծրագրի միայն մի մասն է: Ցանցը նաև ուսումնական ծրագրեր է պարունակում. որոնցից պետք է օգտվել: Ի վերջո, վաղ թե ուշ էլեկտրոնային կառավարում է ներդրվելու համակարգում, և դպրոցների հետ կապը այդ ձևով է իրականացվելու: Սկսածը հիմք է ծառայելու նորագույն տեխնոլոգիաներով հետագա աշխատանքների համար: Ետ մնացողների համար խնդիրների լուծման տարբերակները շարքից դուրս են գալիս:

Օրակարգը ներառում էր նաև այլ հարցեր, մասնավորապես՝ ուժեղացնել դպրոցականների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելման աշխատանքները, ուշադրության կենտրոնում պահել շրջանավարտների մասնագիտական կողմնորոշումը: Մանկավարժական կոլեկտիվներին հանձնարարվեց աշակերտների հետ բացատրական աշխատանք տանել այդ ուղղությամբ, պարզաբանել մեր երկրի առաջնահերթությունները, թե ինչ մասնագետների կարիք կա: Խորհուրդ տվեց հատկապես նրանց հորդորել կողմնորոշվել մանկավարժական մասնագիտությունների և ռազմական գործի ուղղությամբ, խրախուսել, որ լավ աշակերտները ընտրեն մանկավարժական մասնագիտություններ, ինչպես նաև գնան ռազմական ուսումնարաններ և բուհեր, հատկապես այս վերջինները շատերն ընտրեն, որովհետև մեր երկրի պաշտպանությունը ամենակարևոր հարցն է:

Սեփ.լրատվություն

ՍԻՐԵԼ ՄԱՅՐԵՆԻՆ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՍԻՐԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Մայրենի լեզվի տոնի կապակցությամբ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հունվարի 21-ից փետրվարի 21-ը ուսումնական հաստատություններում հայտարարվել էր միամսյակ: Այդ շրջանակում անց են կացվել բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներ. բաց դասեր, պատի թերթերի, շարադրությունների, ասմունքի, նկարչական մրցույթներ և այլն: Այդ օրերին հայոց լեզվի փառաբանումը, Մեծն Մեսրոպ Մաշտոցի քաղաքական ու մշակութային սխրանքի նշանակությունը հասցվել են մեծից մինչև փոքրի գիտակցությունը: Չորրորդ դարում հայ ժողովրդին պատուհասած մարտահրավերները, որոնց դեմ դուրս եկան Մաշտոցի 36 զինվորները, այսօր էլ արդիական են և ավելի մեծ իմաստնություն են պահանջում յուրաքանչյուրից:

«Լուսարար»-ում ներկայացվող նյութերը հաստատումն են այն բանի, որ մեր դպրանոցներում պատվով շարունակում են Հայերենի առաջին ուսուցչի վեհ գործը:

ԽՈՍԵԼ ՀԱՅԵՐԵՆ, ԱՊՐԵԼ ՀԱՅԵԾԻ

Մայրենիի միջազգային օրը Արցախի մայր բուհում նշանավորվեց նրա երախտավորներից մեկի՝ լեզվաբան Կարո Դավթյանի անվան հայոց լեզվի կաբինետի վերաբացումով: Ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, փոխնախարար Արմեն Սարգսյանը: Հայոց լեզվի և գրականության, օտար լեզուների ֆակուլտետի դեկան էլեոնորա Հայրապետյանը, շնորհավորելով օրվա առթիվ, նշեց, որ հայոց լեզվի և նրա մեթոդիկայի ամբիոնը համալսարանում մեծ դեր ունի մայրենի լեզվի ուսուցման, զարգացման և պահպանման գործում:

1969թ. երբ բացվեց մանկավարժական ինստիտուտը (հետագայում՝ համալսարան), ուներ երկու բաժին՝ հայոց լեզու և գրականություն ու մաթեմատիկա: Եվ հենց սկզբից էլ հայոց լեզվի ուսուցումը դարձավ բուհի համար ուղենշային հայերենի մասնագետներ պատրաստելու գործում:

☞ 2

ԻՄ ՔԱՂԱՔԻՐԱԲԱՌ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Այս խորագիրն էր կրում Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի 5-րդ «դ» դասարանի ցերեկույթը, որը կազմակերպել էր դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորման նախագահ Նելլի

Մկրտչյանը: Ներկա էին մայրաքաղաքի դպրոցների փոխտնօրենները, հյուրեր, ծնողներ:

☞ 2

ՄԱՅՐԵՆԻ

ԽՈՍԵԼ ՀԱՅԵՐԵՆ, ԱՊՐԵԼ ՀԱՅԵԾԻ

1 ☞ Եվ զարմանալի չէ, որ առաջին օրից էլ այստեղ աշխատել են գիտնականներ Գուրգեն Անտոնյանը, Գուրգեն Բաղդասարյանը, Կարո Դավթյանը: Հենց սկզբից էլ մայր բուհի գլխավոր առաքելությունը եղել է հայերենագիտության ուսումնասիրությունը և զարգացումը: Հայոց լեզվի և գրականության ամբիոնը քառորդ դար ղեկավարած, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանի բնորոշմամբ՝ Կարո Դավթյանը նրան ճանաչողների հիշողության և համալսարանի պատմության մեջ կմնա որպես Հայոց եղեռնի սարսափները տեսած, նրա ցավերը, ճիչերը հոգու մեջ առած, մաքառումների միջով դեպի գիտելիքների բարձունքը քայլող գիտնական-մանկավարժի, հայ մարդու, քաղաքացու խտացում: Նրա անունով հայոց լեզվի կաբինետը առաջին հերթին պատիվ է բերում համալսարանին: Բոլորի ցանկությունն էր, որ այդ կաբինետը դառնա և՛ հայերենագիտության կենտրոն, և՛ դասախոսների, ուսանողների համար հաճելի վայր, որի պատերն էլ տրամադրում են ուսումնասիրություններ կատարելու, գիտությամբ զբաղվելու: Մնում է, որ այն հագեցվի ուսումնական նյութերով: Կարո Դավթյանի աշխատությունները նոր ճանապարհ են բացել առանձնապես Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության գծով: Նա կազմել է Ղարաբաղի բարբառի քարտեզը, որը նոր էջ է բացել այս ասպարեզում: Ներկաները համոզված էին, որ այժմ էլ ամբիոնը գտնվում է հուսալի ձեռքերում և ունի անհրաժեշտ ներուժ՝ հայերենագիտության զարգացման համար:

Միջոցառման շարունակությունը համալսարանի մեծ դահլիճում էր, որտեղ հայոց լեզվի և նրա մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ ներկայացվեց Մայրենիի միջազգային օրվան նվիրված՝ հայոց լեզվի փառաբանություն: Սկզբում ցուցադրվեց ամբիոնի անցած ուղու մասին տեսաֆիլմ: Իր գոյության 45 տարիների ընթացքում ամբիոնը ձևավորել է լավագույն ավանդույթներ սերունդներին հայեցի կրթելու և մասնագետներ պատրաստելու գործում:

Մայրենիի օրվա առթիվ շնորհավորանքի խոսք ասաց ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը՝ ընդգծելով, որ Արցախյան ազատագրական պայքարի ձեռքբերումներից մեկն էլ պետք է համարել այն, որ մեր պայքարը հնարավորություն տվեց հայերենը դարձնել մեր հանրապետությունում հիրավի պաշտոնական լեզու, և երբ հետադարձ հայացք ենք ձգում, տեսնում ենք՝ ինչպիսին էր այդ առումով վիճակը մեր երկրամասում, ձեռքբերումներն ավելի ակնհայտ են դառնում: Իհարկե, մենք այսօր նաև խնդիրներ ունենք հայերենն անաղարտ պահելու, ավելի ճիշտ գործածելու առումով: Մ. Մինասյանի համոզմամբ՝ մեծ մանկավարժ Ղ. Աղայանի խոսքերը՝ «Բավական չէ լինել ազգասեր ու հայրենասեր, պետք է մի քիչ էլ լեզվասեր լինել, պետք է սիրել ու պաշտել հարազատ մոր հարազատ լեզուն, և միայն

այդ սերը կարող է նրա առջև բացել մեր լեզվի անհատնում ճոխությունը, նրա գեղեցկությունն ու նրբությունը» յուրաքանչյուր հայի կարգախոսը պետք է լինեն: Ասվածը, իհարկե, չի նսեմացնում այլ լեզուների իմացության արժեքը. համալսարանում մեծ տեղ է հատկացվում օտար լեզուների իմացությանը, քանզի ինչքան լեզու գիտես՝ այնքան մարդ ես իմաստախոսությունը խիստ արդիական է մեր օրերում, բայց ամեն դեպքում յուրաքանչյուր հայ պարտավոր է մտածել հայերեն, ապրել հայեցի: Իսկ Մայրենիի օրը որպես տոն նշելը կարևորվում է նրանով, որ մեկ անգամ ևս առիթ է լինում խոսելու մեր լեզվի կարևորության, նրա արժանիքների մասին, ինչու չէ նաև արծարծելու առկա խնդիրները:

Մ. Մինասյանը պատվոգրերով պարգևատրեց բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտներ Շ. Սաղյանին և Ա. Զաքարյանին: Պարգևատրության արժանացան նաև հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողուհիներ Հ. Բաղդյանը, Ա. Բաղդյանը և Ա. Հարությունյանը (օտար լեզու):

Այնուհետև հայոց լեզվի և նրա մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ Ղազարյանը ելույթ ունեցավ հայոց լեզվի՝ որպես հայի ինքնության պահպանման և մշտագոյության երաշխիքի և նրա անաղարտ պահպանման հարցերի արծարծումով: «Ես ուզում եմ, որ մեր ժողովրդի մշակութային ժառանգության ամենամեծ և թանկագին հրաշալիքը՝ հայոց լեզուն, լինի ոչ միայն փառաբանման, գովերգման, հպարտության ու հիացմունքի առարկա, ինչին նա իսկապես արժանի է, այլև ոգեշնչի մեր ժողովրդին ազգային արժանապատվության, հայրենասիրության, հայապաշտության վեհ զգացումներով»,-ասաց նա:

Լեզուն, հավատը ազգային ինքնագիտակցության, սեփական արժանապատվության պահպանման իրական ու գործուն դրսևորումներն են: Մեր լեզուն մեր գոյության հիմնասյունը լինելով՝ նաև մեր ազգային միաբանության կարևոր առհավատչյան է: Այս գաղափարի օրենսդրական ու իրավական հիմքերը ստեղծվել են մեր անկախ պետության առաջին իսկ օրերից: Սակայն օրենսդրական նորմերի իրավախախտումները, ցավոք, դարձել են համատարած. սովորական են դարձել գրական լեզվի աղավաղումները, որոնք թափանցել են ինչպես լրատվամիջոցների, այնպես էլ հասարակության որոշ շերտերի և որ ավելի ցավալի է, մտավորականության լեզու: Բանախոսի կարծիքով, հարկավոր է գործուն միջոցներով ազդել նրա լեզվական ինքնագիտակցության վրա՝ այդ գործին ծառայեցնելով ողջ կրթական համակարգը, հեռուստահաղորդումների շարքերը, հրապարակային ելույթները, հանդիպումները, տարաբնույթ միջոցառումները: Լեզվի անաղարտության պահպանումը մի խումբ մարդկանց գործ չէ: Բոլորը պետք է շահագրգռություն ցուցաբերեն այս գործում՝ իրենց օջախներում բարի լույսը սկսելով հայերենով ու բարի գիշերը ավարտելով հայերենով: Եվ միայն այսպես անելու դեպքում հաջողություններ կունենանք հայերենի պաշտպանության, հայերենի իմացության համար պայքարում, որով էլ հասարակության յուրաքանչյուր անդամ իր ներդրումը կունենա հայապահպանության սուրբ գործում. այս գաղափարն էին միջոցառման ընթացքում արծարծում թե՛ հայերենի անխոջ մշակը, թե՛ ուսանողները՝ հնչեցնելով հայ և համաշխարհային դեմքերի մտքերը հայոց լեզվի մասին, բանաստեղծություններ, գեղեցիկ երգ ու պար՝ հանդիսատեսին հրապուրելով ոչ միայն մեր լեզվի շքեղությամբ, այլև իրենց հայեցի տեսքով:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՆԴԵՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Հայրենյաց պաշտպանի տոնի կապակցությամբ Ստեփանակերտի հ. 1 մանկապարտեզում կազմակերպվեց միջոցառում: Ներկա էին քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Կ. Մարգարյանը, ծնողներ և հյուրեր:

Միջոցառումը բացեց մանկապարտեզի տնօրեն Ժ. Զաքարյանը՝ Հայրենյաց պաշտպանի օրվա կապակցությամբ շնորհավորանքի խոսքով:

Այնուհետև դահլիճ մտան փոքրիկները՝ 3-4 տարիքային խմբի երեխաներ, որոնց մի մասը այս տարի արդեն

կհաճախի դպրոց: Փոքրիկ էդգարի կոչով ներս բերվեց Արցախի դրոշը: Հնչեց Արցախի հիմնը, և դահլիճը հոտնկայս ծայնակցեց փոքրերին: Մանկապարտեզի սաները անկաշկանդ ու հարենասիրական ոգով արտասանեցին հայրենիքին ու հայրենյաց պաշտպանին նվիրված բանաստեղծություններ, դաշնամուրի նվագակցությամբ երգեցին ու պարեցին՝ երգի տողերում հավաստելով հայ մնալու կարևոր երաշխիքը՝ «Պիտի բարձր պահենք դրոշը հայկական»:

Միջոցառման ընթացքում փոքրիկ Ավետն ու Հայկը հիացրին իրենց զորավարժություններով՝ դրանով արտահայտելով հայ մարտիկի մարտական պատրաստվածության ու խիզախության առաքելությունը:

Միջոցառմանը իրենց մասնակցությունն ունեցան նաև ծնողներ Ա. Գրիգորյանն ու Զ. Աղաբաբյանը, որոնք արագ ու ճիշտ ցուցադրեցին ինքնաձիգի քանդում-հավաքումը:

Միջոցառման ավարտին իրենց ամփոփ խոսքով հանդես եկան ԿՍ բաժնի վարիչ Կ. Մարգարյանը, ծնող Ա. Գրիգորյանը:

Մանկապարտեզի տնօրեն Ժ. Զաքարյանը նշեց, որ միջոցառումը նպատակ ունի մանկապարտեզի սաների մեջ փոքրուց սերմանել հայրենասիրություն, խիզախություն և ընկերասիրություն: Վերջում նա բարեմաղթանքի ջերմ խոսքեր հղեց բոլորին. «Ինքս եղբայր եմ կորցրել պատերազմի ժամանակ, ծնողներս չեն դիմացել այդ ցավին, ուստի կցանկանամ, որ հայ ազգը այլևս կորուստներ չկրի, ապրի խաղաղ ու երջանիկ»:

Հասմիկ ՀԱԿՈԲՅԱՆ

ԻՄ ՔԱՂՑՐԱԲԱՌ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

1 ☞

Աշակերտները ցուցադրեցին Մաշտոցի ստեղծած երբևէ մեր ունեցած ամենաուժեղ զենքի ուժը, գեղեցկությունը, որը ածող սերնդին փոխանցելու համար ջանք ու եռանդ չեն խնայում հայերենի ուսուցիչները: Երեխաների շուրթերով ինքը իմաստությունն էր խոսում, որը թափանցեց բոլորի հոգիները՝ ներարկելով եռանդի լիցքեր, հավատ, հպարտություն: Մեր ժողովրդի հանճարի, հոգևոր գեղեցկությունները նրանք ներկայացրին ասույթների, ասմունքի, երգ ու պարի, փոքրիկ բեմականացման միջոցով:

Դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը շնորհակալություն հայտնեց դպրոցականներին, միջոցառմանը օժանդակած անձանց, այդ թվում՝ ծնողներին, որոնք նպաստել են, որպեսզի երեխաները կարողանան դարերից եկած ու դեպի դարերը գնացող մեր հայ լեզուն այնքան գեղեցիկ ներկայացնել: Նման ոգով դաստիարակված սերունդը վաղը ավելի է շենացնելու մեր երկիրը, ավելի ամուր պաշտպանելու այն, ինչի առհավատչյան դպրոցում կազմակերպված մեկ այլ ոգեղեն միջոցառումն էր Հայրենյաց պաշտպանի օրվա կապակցությամբ՝ «Փոքրիկ զինվորն եմ հայոց բանակի» վերտառությամբ (բեմագրի հեղինակ՝ 2-րդ դասարանի դասվար Լիանա Սարգսյան): Հատկանշական է, որ այսօրվա մանուկը, հանձին իրեն, տեսնում է

ապագա հայրենյաց պաշտպանին: Մեկի համար ոգեշնչման աղբյուր է Մոնթե Մելքոնյանը, մյուսի համար՝ Աշոտ Բեկորը, Պետոն կամ մեկ այլ հերոս, պարզապես՝ իր պապը, հայրը, հարազատը: Վաղվա հայրենյաց պաշտպանները, որոնք սովորում են դպրոցում, գիտակցում են, որ հայրենյաց պաշտպանը նա է, ով իր գիտակցական կյանքը լիովին նվիրում է հայրենիքի բարգավաճմանը, հայրենի հողի , հայրենի տան շենացմանը, պետականության կայացմանը, իսկ առայժմ իրենց խնդիրն է լավ սովորել, սիրել մայրենին, հայրենիքը:

Տնօրեն Ա. Պողոսյանը շնորհակալություն հայտնեց երեխաներին և ուսուցչուհուն՝ խրոխտ, հպարտություն առաջացնող միջոցառման համար: Իսկ պատվավոր հյուր, դպրոցի շեֆ զորամասի հրամանատար պարոն Գաբրիելյանն ասաց, որ խոսքեր չի գտնում ասելու երեխաներին, որովհետև դրանք ավելորդ են, քանզի մանուկները իրենց փոխարեն ասացին ամեն ինչ՝ ինչ է սերը հայրենիքի նկատմամբ, ով է հայրենյաց պաշտպանը: «Տեսնելով այս մանուկներին՝ կարող եմ հավաստիացնել, որ մեր ժողովուրդը եղել է, կա ու կլինի՝ շնորհիվ այսպիսի սերնդի»,-ասաց նա:

Ծնողական կոմիտեի նախագահը շնորհակալություն հայտնեց ուսուցչուհուն՝ իրենց երեխաների մեջ հայրենասիրություն սերմանելու համար:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ՄԵՆՔ

Հունվարին լրացավ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության լեզվի տեսչության գործունեության տասնամյակը: Արդեն 10 տարի Արցախում գործում է մի տեսչություն, որն իրականացնում է օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթներ և կիրառում պատասխանատվության միջոցներ լեզվական քաղաքականության բնագավառում: Հոբելյանի և Մայրենիի միջազգային օրվա կապակցությամբ հարցազրույցի հրավիրեցինք ԼՂՀ կրթության և գիտության նախարարության լեզվի տեսչության պետ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արտակ ՂՈՒԼՅԱՆԻՆ**:

- Պարոն Ղուլյան, նախ թույլ տվեք շնորհավորել Ձեզ՝ Լեզվի տեսչության տասնամյակի, Փետրվարի 21-ի՝ Մայրենիի միջազգային օրվա առթիվ, և տալ առաջին հարցը: Գիտենք, որ Լեզվի տեսչության նպատակներն ու խնդիրները շատ են ու բազմազան, սակայն գլխավորներից որո՞նք կառանձնացնեիք:

-Կցանկանայի առանձնացնել դրանցից երկուսը. հանրապետությունում լեզվի բնագավառում միասնական քաղաքականության իրականացում և «Լեզվի մասին» ԼՂՀ օրենքի և լեզվական քաղաքականության վերաբերյալ այլ իրավական փաստաթղթերի պահանջների կատարման ապահովում:

Ամեն տարի, համաձայն Կրթության և գիտության նախարարի հաստատած պլանի, տեսչությունը պարբերական ստուգայցերի միջոցով իրականացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական լեզվական քաղաքականությունը, կրթական համակարգում՝ դասավանդման և դաստիարակության լեզվի՝ գրական հայերենի գործածության, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ հայոց լեզվի ընդունելության քննության և հայոց լեզվի ուսուցման պարտադիր, գործավարությունը հայերեն կատարելու, ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները, գովազդները հայերեն ձևավորելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դրանք այլ լեզուներով զուգակցելու, գրական հայերենի կանոնարկմանը վերաբերող գերատեսչական նորմատիվ ակտերի պահանջների կատարումը և այլն:

Տեսչության 10-ամյա գործունեության արդյունավետության մասին գնահատականները թողնենք հասարակությանը, բայց միաժամանակ արժանին պետք է մատուցել. այսօր հանրապետության տարածքում գործող հիմնարկ-ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների, առևտրային օբյեկտների գործավարության, ցուցանակների, գովազդային վահանակների, տարաբնույթ հայտարարությունների գրական հայերենով ձևավորման գործում մեծ է Լեզվի տեսչության ներդրումը: Միաժամանակ ձեռք ենք բերել տնտեսվարողների և հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների վստահությունը: Նրանցից շատերը տարիներ ի վեր համագործակցում են մեզ հետ, տեսչության հեռախոսային թեժ գիծը հնարավորություն է ընձեռում անընդհատ տալ մեր քաղաքացիների՝ լեզվական խնդիրների կարգավորմանը վերաբերող հարցերի պատասխաններ և այլն:

-Ինչպիսի՞ն կգնահատեիք մայրենիի պահպանման դրվածքն Արցախում:

- Եթե լեզուն ընդունված է համարել հասարակության հաղորդակցման հիմնական և կարևորագույն միջոց, ապա հայերիս համար լեզուն առաջին հերթին եղել է ինքնության պահպանման գործոն: Հայոց լեզուն հայ ազգի հոգեբանությունն է, հայ ցեղի առասպելական պատմությունն ու բազմադարյա հարուստ մշակույթը:

Հիշու՞մ եք՝ ինչպես էր բնութագրում հայոց լեզուն Հրանտ Մաթևոսյանը. «Մեր լինելիության, գոյության անժխտելի պայմանն է լեզուն: Աշխարհի քարտեզի վրա ու երկրի հսկա տարածքում գրված իրենց մի պստիկ տեղը, դարերի ճակատին գրած հայ ու Հայաստան անունը այս փոքրիկ հողն ու ժողովուրդը նվաճել են լեզվով: Լեզուն ապրելու ձև է, լեզուն աշխարհ է, սնունդ ու պայքարի միջոց, ինքնարտահայտման ու ինքնադրսևորման եղանակ»: Որքա՜ն դիպուկ է ասված: Այսօր Արցախում մայրենիի ոչ միայն պահպանման, այլև պաշտպանության մասին է անհրաժեշտ խոսել: Ճիշտ է, և՛ երկրի գլխավոր օրենքով՝ Սահմանադրությամբ, և «Լեզվի մասին» ու այլ օրենքներով հանրապետությունում պետական լեզուն հայերենն է, բայց, չգիտես ինչու, ազատ ու անկախ ապրելու իրավունքը նվաճելուց հետո մենք մեր լեզվի հանդեպ չցուցաբերեցինք այն սերն ու հոգատարությունը, ինչը ըստ ամենայնի ադրբեջանական 70-ամյա լծի տարիներին յուրաքանչյուր արցախցու երազանքն էր: Միանգամայն իրավացի էր բանաստեղծը.«Լեզուն ազգի հոգին է: Կենդանի է այդ հոգին, կենդանի է ազգը, կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է և երկրորդը»:

Հայոց լեզուն Արցախում, հատկապես մեր օրերում, անհրաժեշտ է դիտել որպես հայապահպանության գլխավոր երաշխիք, այն մեր ինքնության ողնաշարն է: Իհարկե, այս համատեքստում անելիքներ շատ ունենք, սակայն սխալ է կարծել, թե դա միայն ԿԳՆ լեզվի տեսչության խնդիրն է: Լեզուն բոլորինս է և յուրաքանչյուրինս, հետևաբար, մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է գիտակցել լեզվի դերը իր իսկ կյանքում, պարտավոր է սիրել ու փայփայել մայրենի լեզուն:

-Կա՞ն ուսումնասիրություններ, թե որ բնագավառներում են առավել շատ խախտվում «Լեզվի մասին» ԼՂՀ օրենքի պահանջները:

-Օրինակ՝ մի քանի ամիս առաջ մայրաքաղաքի ներքաղաքային ավտոբուսներում մեծ տառերով գրված էր. «Ուղևորավարձը՝ 100 դրամ»: Մեր դիտողությունից հետո պատասխանատուները անմիջապես ուղղեցին սխալը, և այսօր արդեն ուղևորները մուծում են ոչ թե ուղևորավարձ, այլ ուղեվարձ: Առաջին հայացքից այնքան էլ մեծ թերություն չէ, սակայն հաշվի առնելով, որ տրանսպորտից ամեն օր, ամեն ժամ օգտվում են հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ, ինչպես նաև մեծ թվով դպրոցականներ, սխալ բառը սխալ էլ տպավորվում է նրանց հիշողության մեջ, բնականաբար, այս համատեքստում չեն լինում մեծ ու փոքր սխալներ: Օրինախախտումը դատապարտված է վերացնելու, հակառակ պարագայում դիմում ենք օրենքով նախատեսված միջոցների:

Հիմնական օրինախախտումները կատարում են տնտեսվարող սուբյեկտները՝ ցուցանակները կամ լուսամուտագոգերը ձևավորելով ոչ հայերեն, ինչն էլ, իր հերթին, հիմնականում պայմանավորված է իրավական փաստաթղթերի կամ մայրենի լեզվի չիմացությամբ: Լեզվի տեսչության մասնագետները անընդհատ գործնական աշխատանքներ են տանում տնտեսվարողների հետ, բացատրում, տալիս պարզաբանումներ ոլորտը կարգավորող օրենքների և որոշումների վերաբերյալ: Հայերեն չիմացող քաղաքացիների համար տեսչությունը ամեն տարի կազմակերպում է «Հայերենը՝ ոչ հայախոսների համար» եռամսյա դասընթացները, որոնք, ի դեպ, անվճար են. բոլոր ծախսերը հոգում է կրթության և գիտության նախարարությունը:

-Ինչքանո՞վ է խստապահանջ Լեզվի տեսչությունը: Պատժողական ի՞նչ քաղաքականություն եք վարում խախտողների նկատմամբ:

-Փորձը ցույց է տալիս, որ տնտեսվարողների հանդեպ բարոյական ճնշումն ավելի արդյունավետ է, քան ֆինանսական տույժերը: Խանութի սեփականատերը «скидки»-ն փոխելով «զեղչ»-ի, միևնույն է, մնում է «скидки»-ի հարթությունում: Մեր խնդիրը նրան տուգանելը չէ, այլ թույլ չտալ հեռանալ հայի իր ինքնությունից: Մենք նրան բացատրում ենք, որ մեր լեզուն իր էությամբ աստվածային է, որ պետք է սիրել այն և որ մարդու մակարդակը օտարահունչ բառերով խանութը զարդարելով չի որոշվում, և, ամենակարևորը, օտարամոլությունը բերում է ստրկամտության, իսկ ստրուկներին ոչ ոք չի սիրում: Եվ նրանք վերացնում են սխալը, շտկում թերությունը:

-Բարբառը խանգարո՞ւմ, թե՞ նպաստում է լեզվի անաղարտության պահպանմանը:

-Եթե խոսքը վերաբերում է Արցախի բարբառին, ապա այն միանշանակ խթանիչ դեր ունի մայրենին ճանաչելու գործում, քանի որ գրաբարի ժառանգորդը լինելու և տարածքի՝ տարբեր ժամանակներում մեկուսացված մնալու հանգամանքներով պայմանավորված՝ այն հավատարիմ է մնացել իր մայր լեզվի ավանդույթներին: Բայց մայրենին աղավաղողը ոչ թե բարբառն է, այլ ժարգոնը, գռեհկաբանությունը, շատերի՝ օտար աղճատված բառերով համեմված բառապաշարը: Դա, ըստ էության, պետք է հատուկ լիներ միայն ցածր խավի մարդկանց, սակայն հաճախակի ենք լսում նաև ուսանողներից, նույնիսկ որոշ մտավորականներից, հեռուստատեսության եթերից, ինչը անթույլատրելի է: Բերենք մի փոքր հատված այդ «բառապաշարից». *պացանըս սվերում ա շեստոյ շկոլըմը, պյատի կլասումը, պախատ ընքանում, յավաշ-յավաշ, դոբրի, նաբարոտ,սամնիտելնի* և այլն: Մեր և երկրի ապագայով մտահոգվածների պայքարը պետք է լինի լեզուն աղավաղողների դեմ, մեր ազնվական լեզուն այս անճոռնիություններից մաքրելու համար:

-Լեզվական խախտումների ամենամեծ հարթակը, թերևս, մամուլն է: Պարբերաբար հետևո՞ւմ եք արցախյան տպագիր մամուլի հրապարակումներին ու եթերային թողարկումներին:

-Հետևում ենք: Վերջին տարիներին մամուլում աղաղակող թերություններ չեն արձանագրվել: Լրագրողները, ըստ ամենայնի, տիրապետում են գրական հայերենին: Հիմնական խախտումները կատարում է Արցախի հանրային հեռուստառադիոընկերությունը: Եվ «Լեզվի մասին» և՛ «Հեռուստատեսության ու ռադիոյի մասին» ԼՂՀ օրենքներում հստակ գրված է, որ եթերի լեզուն հայերենն է, սակայն հեռուստատեսության եթերում հաճախակի կարող ենք տեսնել լրագրողի հարցերի ռուսերեն պատասխանող հյուրի, ցուցադրվում են ռուսերեն ֆիլմեր և այլն: Պատասխանատուները խոստացել են կարճ ժամկետում վերացնել թերությունները, սակայն դեռևս նրանց կողմից գործնական քայլեր չեն նկատվում:

-Ի՞նչ միջոցառումներ է իրականացնում Լեզվի տեսչությունը Մայրենիի օրվա կապակցությամբ:

-Ամեն տարի հունվարի 21-ից փետրվարի 21-ը ԿԳՆ լեզվի տեսչությունը հայտարարում է Մայրենիի միամսյակ: Բոլոր ուսումնական հաստատությունները Մայրենիի օրվան նախապատրաստվում են յուրովի: Այս տարի Լեզվի տեսչությունը որոշել է «Մայրենին և մենք» թեմայով դասախոսություններով հանդես գալ նախարարությունների և գերատեսչությունների աշխատակիցների առջև: Միայն այս ամսում արդեն հասցրել ենք մեկ տասնյակ հանդիպում ունենալ: Հանդիպումների ընթացքում պարզաբանվում են լեզվական խնդիրների կանոնարկումը ապահովող նորմատիվ փաստաթղթերը, հայոց լեզվի ծագմանն ու զարգացմանը վերաբերող հարցեր, հայերեն բառերի և դարձվածքների ճիշտ գործածության, ուղղախոսության և ուղղագրության հետ կապված խնդիրներ: Մանրամասնվում են նաև գործնական գրությունները ճիշտ ձևակերպելու եղանակները:

Հանրային կյանքի բոլոր ոլորտներում պետք է զգացվի հայերենի ի գերակա դերը:

-Մայրենիի օրվա առթիվ ի՞նչ կմաղթեիք մեր ընթերցողներին:

-Ինչպես գիտենք, Մայրենի լեզվի միջազգային օրը հավերժացնում է այն քաղաքական պայքարը, որը մղվել է վաթսուներեք տարի առաջ բենգալերենն առանձին լեզու ճանաչելու համար:

1952 թվականին Դաքայում ուսանողների կրակոցներից սպանվեցին բազմաթիվ ուսանողներ, ովքեր դուրս էին եկել բողոքելու ուրդուն միակ պետական լեզու ճանաչելու կառավարության որոշման դեմ:

Ի հիշատակ այդ պայքարի՝ 1999 թվականից ի վեր ՅՈՒՆԵՍԿՕ-ն նշում է Մայրենի լեզվի միջազգային օրը, իսկ 2008 թվականը հռչակել է Լեզուների միջազգային տարի:

Այս պատմությունը շատ բան կարող է հուշել օրվա խորհրդի և նշանակության մասին: Մարդիկ պայքարել են իրենց լեզվի համար, մարդիկ զոհվել են լեզվի համար, որը ցանկանում էին իրենցից խլել: Այսօր ոչ ոք մեզանից չի խլում մեր լեզուն, բայց մենք հոժարակամ լքում ենք նրան, օտարվում նրանից: Ամեն անգամ հայերեն բառերի փոխարեն օտար բառեր գործածելով՝ մենք անտեսում ենք ինքներս մեզ, մենք նվաստացնում ենք մեզ, տեղ տալով օտար բառին, օտարին՝ հիմքեր ենք ստեղծում՝ հեռանալու ինքներս մեզնից, ստեղծում ենք մեր հայրենիքում մեզ օտար զգալու նախադրյալներ:

Եկեք սիրենք մեր լեզուն, մեր ազնվական լեզուն, որը կատարյալ է, աստվածային մի պարգև՝ աներևակայելի գաղտնիքներով լեցուն, այն լեզուն, որ մեր անվտանգության գլխավոր երաշխավորն է, գլխավոր Ազգապահպանն ու Հայակերտողը:

Հարցազրույցը վարեց
Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ԽԻՐՉՆ Է ՈՒ ՀԱՅԸ ՄԵՐ ՍԵՂԱՆԻ

Քաշաթաղի շրջանի Տիգրանավանի Պ.Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Մայրենիի միջազգային օրվան: Դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մ.Սեդրակյանը կազմակերպել էր գրական-երաժշտական ցերեկույթ՝ Պ.Խաչատրյանի «Ասք Մեսրոպ Մաշտոցի» պոեմի մոտիվներով: Դահլիճը ձևավորված էր մայրենիի մասին ասույթներով, բանաստեղծական տողերով, հայոց այբուբենի տառերով և, իհարկե, Մեծն Մաշտոցի նկարով: Դահլիճը լեփ-լեցուն էր ուսուցիչներով, ծնողներով, հյուրերով, աշակերտներով: Միջոցառմանը մասնակցում էին դպրոցի 35 աշակերտները և համայնքի 9 նախադպրոցական տարիքի երեխաներ: Միջոցառումն սկսվեց «Առավոտ լուսոյ» պատարագով: Նրա

հնչյունների ներքո ներս մտան Մաշտոցի «36 զինվորները»՝ 36 աշակերտներ՝ իրենց գլխին կրելով հայոց տառերով թագեր: Նրանք Մաշտոցի նկարի մոտ մոմեր վառեցին, որից հետո ավագ դասարանի աշակերտները ծաղիկներ դրեցին մեծ ուսուցչի նկարի մոտ: Ապա 11-րդ դասարանի աշակերտները ասմունքեցին.

Չորրորդ դարի երկինքը սև
Հանկարծ մի պահ ծիածանվեց,
Հրաշափայլ հենց այդ պահին
Հայոց հողում Մաշտոց ծնվեց:

Աշակերտները ներկայացրին Մաշտոցի կյանքն ու գործը, նրան փառաբանեցին մեծ բանաստեղծների խոսքերով: Այնուհետև ներս մտավ «Մաշտոցը», խոսեց իր զավակների հետ, պատվիրաններ տվեց հայոց տառերին.

Ա-Ազատություն դարձիր, կյանքում,
Բ-Դու, բարություն դարձիր, որդիս,

Ք-Քերթող դարձիր շնորհաշատ...

Այնուհետև բոլորը միասին արտասանեցին այբ, բեն, գիմ-ը և երգեցին «Հայերեն երգենք» երգը:

Միջոցառման վերջում ելույթ ունեցավ փոխտնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մ.Սեդրակյանը և մայրենի լեզուն անաղարտ պահելու ու պահպանելու կոչ արեց: Գրադարանավարուհի Հ.Չաթոյանը նախադպրոցական տարիքի երեխաներին հեքիաթների գրքեր նվիրեց, իսկ տնօրեն է.Միրզոյանը թե՛ կազմակերպիչներին և թե՛ մասնակիցներին հայտնեց իր խորին շնորհակալությունը:

ԸՆԹԱՑՔ

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ «ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՋՈՒԿ» ԵՎ «ՄԵՂՈՒ» ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Այբ» կրթական հիմնադրամը հերթական մրցանակաբաշխությունն անցկացրեց Արցախում: Փետրվարի 13-ին, ժամանակացույցի համաձայն, Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ հիմնադրամի կողմից անցկացվող «Ռուսական արջուկ» և «Մեղու» մրցույթների արդյունքների ամփոփումը և մրցանակների հանձնման արարողությունը, որն իրականացրեց «Այբ»-ի դպրոցական միջազգային մրցույթների ծրագրի ղեկավար Շուշան Կարապետյանը: Դահլիճում հավաքված դպրոցականներին, ուսուցիչներին, ծնողներին ողջունեց ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Միքայել Համբարձումյանը: Շնորհավորելով մրցանակակիր դպրոցականներին՝ նա բարի երթ և հաջողություններ մաղթեց նրանց գիտելիք փնտրելու, գիտելիքին ձգտելու ճանապարհին և լինել միշտ առաջավոր:

Ծրագրի ղեկավար Շուշան Կարապետյանը երեխաներից ոմանց արդեն դեմքով և անուններով է ճանաչում: Եվ դա պատահական չէ: Նրանցից շատերը մասնակցել են նաև «Կենգուրու»-ին, որը «Այբ»-ի առաջին մրցույթներից է և այս տարի 6-րդ անգամ կանցկացվի: «Ռուսական արջուկը» անցկացվեց 4-րդ անգամ, իսկ «Մեղուն»՝ հայերենը բոլորի համար, առաջին անգամ էր: Այս բոլորը միջազգային մրցույթներ են: Ինչպես հայտնի է, դրանք ամեն տարի, հատուկ օր, անցկացվում են տարբեր երկրներում՝ մի քանի միլիոն երեխաների մասնակցությամբ: «Մեղուն», որ տեղական մրցույթ է՝ «Այբ»-ի նախաձեռնությամբ ստեղծված, Շ. Կարապետյանի խոսքով, նույնպես հավակնում է դառնալ միջազգային. հիմնադրամի հեռահար ծրագրերում նախատեսված է հնարավորություն տալ այս մրցույթին մասնակցելու նաև արտերկրում ապրող երեխաներին՝ ոչ միայն հայազգի, այլև հայերեն իմացողներին ու այս այս մրցույթին մասնակցել ցանկացողներին:

Ծրագրի ղեկավարի տեղեկատվությամբ՝ «Այբ»-ը առայժմ 4 մրցույթ է անցկացնում (նաև՝ «Պատանի քիմիկոսների»), ծրագրում են նաև այլ մրցույթներ՝ նպատակ ունենալով ներգրավել Արցախը: Դրա համար նաև պաշտոնական համագործակցության համաձայնագիր կա ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ 2009 թվականից, և Արցախը շատ ակտիվ մասնակցում է «Այբ»-ի մրցույթներին՝ «Կենգուրու», «Ռուսական արջուկ» և արդեն՝ «Մեղու»: Շ. Կարապետյանը հուսով է, որ մի օր Արցախը մեծ հաջողությամբ կմասնակցի նաև «Պատանի քիմիկոսներ» մրցույթին, որն իր ձևաչափով տարբերվում է մյուսներից. այն թիմային մրցույթ է՝ նախատեսված բարձր դասարաններում սովորողների համար: Մյուսը «Այբլաբ» ծրագիրն է, որով հիմնադրամի կողմից ուսումնական առարկայական լաբորատորիաներ են նախագծում և հիմնում տարբեր դպրոցներում: Երևանի ֆիզմաթ դպրոցում են ստեղծել ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաներ, նաև՝ Քաջարանում, Վաղարշապատում, Բերդում:

Շ. Կարապետյանը տեղեկացրեց նաև «Այբ» ավագ դպրոցի մասին, որը մեկնարկել է «Այբ» դպրոցում և բոլորի առաջ դռները բաց են՝ անկախ բնակության վայրից, ովքեր կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին:

Անդրադառնալով մրցույթներին՝ Շ. Կարապետյանը նշեց, որ դրանք մեծապես խթանում են երեխաների հետաքրքրությունը և սերը տվյալ առարկաների նկատմամբ: Իսկ այն, որ դրանք անցկացվում են հետաքրքիր առանձնահատկությամբ՝ առանց որևէ նախապայմանի, ընտրության, կարևոր պայմանը մրցույթին մասնակցելու երեխայի ցանկությունն է՝ անկախ առաջադիմությունից, անցկացվում են անմիջապես երեխայի դպրոցում՝ նրա համար հարազատ միջավայրում, մրցույթները դարձրել են զանգվածային: «Կենգուրու»-ի և «Մեղու»-ի պարագայում 3-12-րդ դասարանցիները կարող են մասնակցել, իսկ «Ռուսական արջուկ»-ին՝ 2-12-րդ դասարանների երեխաները՝ իհարկե, տարիքային տարբեր խմբերով: Առաջադրանքների լուծումը հիմնականում տրամաբանություն է պահանջում: Դրանք օգնում են բացահայտելու երեխաների ներուժը:

«Մեղուն» թեպետ առաջին անգամ էր անցկացվել, մասնակիցների թվով գերազանցեց մյուս մրցույթները: Մասնակցել են 44 411 դպրոցականներ՝ Հայաստանի և Արցախի 961 դպրոցներից:

8010 մասնակից է ունեցել «Ռուսական արջուկը», 290 դպրոց՝ Հայաստանից, 12 դպրոց՝ Արցախից (Ստեփանակերտից): Հիմնականում ընդգրկվել են քաղաքային դպրոցների սովորողները, քանզի կազմակերպչական տեսանկյունից բավական բարդ է աշխարհագրական մեծ տարածքներ ընդգրկելը, սակայն սեփական նախաձեռնությամբ ցանկացողները կարող են միանալ մրցույթին, ինչպես Մարտակերտի շրջանի Առաջածորի և Քաշաթաղի շրջանի մոտ 10 գյուղական բնակավայրերի դպրոցներն են արել:

«Ռուսական արջուկ»-ի մասնակիցներից 410-ը դարձել են մրցանակակիրներ, որոնցից 146-ը արձանագրել են լավագույն արդյունք: Արցախից կա 14 մրցանակակիր, որոնցից 3-ը (հ. 3 դպրոց)՝ լավագույն արդյունքներով: Շ. Կարապետյանն ափսոսանք հայտնեց, որ 5 տարի է՝ Հայաստանում, 4 տարի՝ Արցախում անց են կացնում «Ռուսական արջուկը», դեռ հաղթող չունեն, բայց վստահ է, որ մի օր կունենան: Նշենք, որ հաղթող են համարվում այն երեխաները, ովքեր բոլոր առաջադրանքները լուծում են ճիշտ:

«Մեղու»-ին Արցախից մասնակցել են 25 դպրոցների սովորողներ, մայրաքաղաքի 13 դպրոցների աշակերտներից բացի՝ ևս 12 կրթօջախների երեխաներ շրջաններից: Ընդհանուր մասնակիցներից 1392-ը դարձել են մրցանակակիրներ, որոնցից 709-ը լավագույն արդյունք են արձանագրել, այսինքն՝ հաղթահարել են նշված շեմը: Այս մրցույթում կան երեք հաղթողներ՝ բոլորն էլ Հայաստանից: Իսկ լավագույն արդյունքներ Արցախից դարձյալ ունեն երեք հոգի՝ Ստեփանակերտի հ. 1 հիմնական, հ. 8 ավագ և Բերձորի հ. 1 դպրոցներից: 26 հոգի արժանացել են հատուկ մրցանակի:

Լավագույն արդյունքներով դպրոցականներն արժանացան դիպլոմի և մրցույթի պատկերանշանով նվերների: Բոլոր դպրոցները և մասնակիցները ստացան հավաստագրեր: Հատուկ մրցանակների արժանացան բոլոր դպրոցների ամենաբարձր արդյունքներ ցուցաբերած երեխաները:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է...»

Հայրենապաշտական դաստիարակություն. ահա՛ մեր փրկության խարիսխը...

Գարեգին Նժդեհ

Օրերս Մարտունու հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցում «Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության շրջանի նախաձեռնող խմբի կողմից անցկացվեց «Հայրենասիրությունը սկսվում է...» թեմայի քննարկում, որին մասնակցում էին դպրոցի բարձր դասարանների աշակերտներ, հրավիրված էին կազմակերպության նախագահ Ալբերտ Ոսկանյանը, դպրոցի զինղեկ Արամ Խաչատրյանը: Քննարկումը վարում էր նախաձեռնող խմբի անդամ, նշված դպրոցի պատմության ուսուցչուհի Քնար Բաղալյանը:

Այս հանդիպում-քննարկումը պատահականություն չէր: Ժամանակաշրջանն իր հրամայականն ունի. այն է՝ ամուր կապերով կառչել մայր հողին և միշտ լինել սեփական ժողովրդի հետ: Բազմաթիվ մեծ ու փոքր փորձությունների ենթարկվող մեր ժողովրդի համար ավելի քան կարևոր է միշտ լինել տոկուն, զգոն և միասնական: Այս ամենի համար ամենակարևորը հայրենասիրությունն է. այն միշտ եղել ու մնում է մեր բոլոր հաղթանակների ու ձեռքբերումների գրավականը: Հայրենիքի հանդեպ սերը մարդու մեջ սերմանվում է իր ծնված օրից, ուստի անչափ կարևոր է, որ այն կազմակերպվի ճիշտ ժամանակին, և շրջապատում լինեն արժանի օրինակներ: Բարեբախտաբար, մեր պարագայում երկուսի առկայությունն էլ կա: Մեր երեխաների հետ տարվող աշխատանքը միայն կարող է լինել վաղվա ապահովության երաշխիք: Զրույցի հիմնական նպատակն էր՝ երեխաներին լսել, իմանալ նրանց կարծիքները, քննարկել թեմա, որի մասին այնքան շատ է խոսվում, բայց միշտ մնում է արդիական և հոգեհարազատ:

Միջոցառման սկզբին Ք.Բաղալյանը, հայրենասիրության կարևորությունն ընդգծելով, ասաց. «Հայ մարդու առաջին արժանիքն է հայրենասիրությունը: Իր բազմադարյա ողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը դրսևորել է հայրենասիրության փայլուն օրինակներ՝ սկսած Հայկի ժամանակներից, Ավարայրից, մայիսյան հերոսամարտերից, որոնց մասնակիցները մեկ անգամ ևս ապացուցեցին եղեռնազարկ եղած հայ ժողովրդի լինելիության իրավունքը: Եվ, վերջապես, նորօրյա ազգային ազատագրական շարժումը Արցախում, երբ դարեր նիրհած, ազատության տենչից ծնված հավատը պարզվեց որպես դրոշ, որի շուրջը համախմբվեց հայ ժողովուրդը, և իրականություն դարձավ շքեղ ու հեռավոր մի երազ, որին այն ժամանակ ամենահանդուգն ու խենթ հոգիներն անգամ չէին հավատում: Անկախացավ Արցախը: Փույթ չէ, որ մեզ իրավաբանորեն չեն ճանաչում, իրականում կանք, և հեռու չէ այն պահը, երբ աշխարհը կճանաչի մեզ»:

Քննարկման թեման հայրենասիրությունն էր, մարդկային արժանիք, հատկանիշ, որով Աստված այնքան շռայլորեն օժտել է հայ ժողովրդին, հատկանիշ, որը հայ ժողովուրդը դրսևորեց այս վերջին ամիսներին՝ ղարաբաղաադրբեջանական շփման գծում անօրինակ հերոսություն և սխրանք ցուցաբերելով:

Թեմայի քննարկումը սկսվեց Նժդեհյան այս խոսքերով. «Հայրենիքը ապրում է հայրենասիրությամբ և կործանվում դրա պակասից»:

«Երբ զինվորը զգում է հասարակության սերն ու ուշադրությունը, երբ հասկանում է, որ դիրքում մենակ չէ, որ ինչ կատարում է, անչափ կարևոր է, այն ավելացնում է նրա ուժն ու եռանդը: Յուրաքանչյուր մարդու մեջ արմատավորված է հայրենիքի հանդեպ սերը, և երբ հասունանում է պահը, այն երևան է գալիս և զգացնում իրեն: Յուրաքանչյուր մարդ, լինի կին թե տղամարդ, փոքր կամ հասուն տարիքի, հայրենիքի պաշտպան է, այդպիսին պիտի իրեն զգա ամեն ոք և պարտավորված լինի իր ներդրումն ունենալ սեփական երկրի, ժողովրդի անկախության, պաշտպանության հարցում»,- նշեց դպրոցի զինղեկը:

Երեխաները թեմայի քննարկմանը բավական ակտիվ էին մասնակցում:

«Հայրենիքի հանդեպ սերը ծնունդ է առնում և զարգանում ընտանիքից: Ինչպես մենք սիրում և դողում ենք մեր ընտանիքի, մեր մտերիմների և հարազատների համար, այնպես էլ պետք է վերաբերվենք հայրենիքին: Հայրենիքն էլ նման է մի ընտանիքի. ինչքան այն ամուր է, միասնական, համերաշխ, այնքան հզոր ու կարող է: Մենք պարտավոր ենք լինել մեր հայրենիքի ամրության և անկախության պահապանը, միասնական պայքարել, միասնական ստեղծել մեր ապագա հզոր ու անկախ երկիրը, նպաստել նրա բարգավաճմանը: Ու սերը հայրենիքի հանդեպ միշտ պետք է զարգանա, մեծանա, ավելի ու ավելի մեծ ծավալներ ստանա»,- ասաց Վալենտինան:

Մարատ Արզումանյանի համար հայրենիքը ընդհանուր հոգածության առանցք է: Ինչպես մարդ մտածում, հոգում է իր ընտանիքի և անձի մասին, նույն վերաբերմունքը պիտի դրսևորի հայրենիքի հանդեպ:

Մարատ Սարգսյանի կարծիքով՝ յուրաքանչյուր հայ մարդու պարտքն է հայրենասեր լինել. այն մեր արյան մեջ է, նրա կարևոր բաղադրությունը: «Զինծառայող» հասկացությունը առաջին հերթին իր մեջ ամփոփում է սեր և նվիրում: Մենք խաղաղապաշտ ժողովուրդ ենք, բայց և միշտ պետք է պատրաստ լինենք պատերազմի, այսինքն՝ պատրաստ հայրենիքի պաշտպանությանը:

Նարինեն համաձայնեց այն կարծիքին, որ հայրենասիրությունը դաստիարակվում է առաջին հերթին ընտանիքում, բայց չբացառեց նաև հասարակության դերը, ավագների օրինակը: Հասարակությունը կարող է շատ դեպքում օգնել այն դրսևորելու կամ մեռցնելու մարդու մեջ: Այդ իսկ պատճառով ավագ սերնդի ներկայացուցիչները պետք է միշտ զգոն և ուշադիր լինեն, օգնեն կողմնորոշվելու և դրսևորվելու երեխաներին:

Նելլիի կարծիքով՝ կարելի է հայրենասեր լինել և անգամ գտնվելով օտար ափերում՝ անձնական ներդրում ունենալ հայրենիքի պաշտպանության և զարգացման գործում: Օրինակ բերվեցին Սփյուռք մեր բարերարների անգնահատելի դերն ու ներդրումները:

Մարիայի համար հայրենասիրությունը բառերով չի արտահայտվում, այն երևում է մարդու ապրած կյանքով, անձնական օրինակով: Դատարկախոսությունն այստեղ տեղ չունի: Նշվեց և հանդուրժողականության մասին: Ինչպես մարդ հանդուրժող է սեփական ընտանիքում, նույն հանդուրժողականությունը պիտի դրսևորի նաև ընդհանուր շփումներում, տարբեր նշանակության հարցերի ու խնդիրների լուծման ժամանակ:

Մենք մեր սերն ու նվիրվածությունը պիտի կարողանանք ցուցաբերել միշտ և ամենուր մեր պաիվածքով, նվիրումով. ինչպես ենք ապրում, ինչպես ենք սովորում, գնահատելու ինչպիսի կարողություն ունենք՝ նշեց Գոհարը: Չի կարելի մոռանալ մեզ պատճառած ցավի մասին, բայց կարելի է ընդառաջել, եթե դիմացինդ խորապես գիտակցում է իր կողմից կատարված սխալը:

Գոհարի միտքը շարունակում է Նարեկը. մենք պարտավոր ենք միշտ հիշել մեր պատմությունը, իրավունք չունենք մոռանալ, թե մեր նախնիների հետ ինչպես վարվեցին:

Նանայի կարծիքով՝ մեզանից յուրաքանչյուրը հայրենիքը սիրում և գնահատում է յուրովի, և այդ սերը ցույց է տալիս յուրովի: Մենք կարող ենք լինել բարձրորակ մասնագետներ, օրինակելի, օրինապաշտ քաղաքացիներ և դրանով օգտակար լինել հայրենիքին, այն դարձնել ավելի զարգացած, ծաղկուն, բարգավաճ: Պիտի գնահատելու կարողություն ունենանք, որն այսօր, իրոք, պակասում է, գնահատել ինչ ունենք և միշտ հիշեն այն, ինչ կորցրել ենք:

Ընտանիքի, հասարակության, դպրոցի, ընտրած մասնագիտության կարևորության և դերի մասին իր կարծիքը հայտնեց Գայանեն:

Երեխաները բավականին ակտիվ էին, որոշ տեղերում՝ վերապահումներով: Զգացվում էր, որ նրանք ավելի քան հասուն ու գիտակից են վերաբերվում հայրենասիրությանը: Նրանք արտահայտվում, միաժամանակ մեկնաբանում ու լրացնում էին միմյանց կարծիքները: Ու այն միայն հավատ և ուրախություն էր ներշնչում. ապագան հուսալի ձեռքերում է:

Թեմայի քննարկմանը ներկա էր նաև դպրոցի նախկին սան, ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կուրսանտ Միհր Գրիգորյանը, ով պատմեց իրենց առօրյայի, կրթական ծրագրերի մասին:

Ա.Ոսկանյանը, իր հերթին շարունակելով երեխաների միտքը, նշեց, որ մարդ, ինչ մասնագիտություն էլ ունենա, երբ գալիս է պահը, կանգնում է հայրենիքի պաշտպանության շարքերում: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուրը պետք է պատրաստ լինի հայրենիքի պաշտպանությանը: Եվ մեր երկրի ապագան ինչպիսին կլինի՝ պայմանավորված է մատաղ սերնդի ճիշտ դաստիարակությամբ:

Միջոցառումն արդեն ավարտված էր, իսկ երեխաները հեռանալ չէին կամենում: Զգացվում էր, որ տպավորված էին ու դեռ ասելիք ունեին:

Կարինե ԴԱՎԱՄՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՄԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՌԹԻՎ

«Լուսարարը» պարբերաբար մասնակցում է (հիմնականում՝ մեծ դպրոցների) կրթության պետական տեսչության կողմից իրականացվող համալիր ստուգումներից հետո հրավիրված մանկավարժական խորհրդի նիստերին, որտեղ ԼՂՀ կրթության և գիտության նախարարի, փոխնախարարի, բաժնի վարիչի կամ այլ պատասխանատուների ներկայությամբ քննարկվում են ստուգումների արդյունքները՝ ըստ տեսչական հանձնաժողովի տեղեկանքի: Զեկուցման, հնչած ելույթների հիման վրա կառուցվում է նյութը: Մոտեցումը հետևյալն է՝ նախ ընդհանուր գծերով ներկայացվում են դպրոցի հաջողությունները՝ շեշտը դնելով նրանց վրա, որոնք ցայտուն են, շատ թե քիչ՝ առանձնահատուկ և օրինակ կարող են ծառայել մյուս դպրոցների համար: Այնուհետև նշվում են բացթողումները, թերությունները: Դրանք մատնանշվում են ոչ թե տվյալ դպրոցի մանկավարժական կոլեկտիվին նսեմացնելու, այլ օգնելու նպատակով, որպեսզի դրանք վերացվեն թե՛ տվյալ, և թե՛ ուրիշ կրթօջախներում, եթե այնտեղ էլ դրանք առկա են: Տեսչությունը ի վիճակի է տարեկան ընդամենը մոտ 4 տասնյակ դպրոցներ համալիր ստուգման ենթարկել, և այդ դեպքում մյուսները հո չպիտի՞ սպասեն, թե երբ կգան՝՝ իրենց թերությունները մատնացույց անելու: Ասել է թե՝ թերթն այդով իսկ կատարում է իր գլխավոր առաքելություններից մեկը:

Բայց որքան մեծ եղավ մեր զարմանքը, երբ «Լուսարարը» էլեկտրոնային փոստով «Մի բաց նամակ» ստացավ Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվից, որում վրդովմունք է հայտնվում փաստերը աղավաղելու, միտումնավորության, ոչ ճիշտ լուսաբանելու համար: Մեր ընթերցողներին հիշեցնենք, որ տեսչությունը հ. 8 դպրոցը համալիր ստուգման է ենթարկել տարեվերջին, և այդ մասին «Լուսարարը» վերլուծություն է զետեղել ընթացիկ տարվա առաջին համարում:

Հարգելով ազատ խոսքի իրավունքը՝ տպագրում ենք հիշյալ նամակը: Անկեղծ ասած՝ կասկածում ենք, որ «Նամակը» քննարկվել է մանկավարժական կոլեկտիվում, քանզի այն ուղարկվել է տառասխալներով: Իհարկե, մենք այդ նամակը չենք տպագրի բնագիր տեսքով, բայց խորհուրդ կտայինք ավելի ուշադիր լինել: Եվ որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի, թե ինչի մասին է խոսքը, «Նամակը» տպագրում ենք պարբերություններով՝զուգադրելով «Լուսարար»-ում տպագրված նյութի համապատասխան հատվածը, հարկ եղած դեպքում՝ նաև տեսչության տեղեկանքից հատվածներ՝ մեկնաբանությունները թողնելով ընթերցողներին: Միայն հիշեցնենք, որ մանկավարժական խորհրդի նիստին ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության նախարարը, Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի վարիչը, որոնք ելույթ են ունեցել, իսկ զեկուցումով հանդես է եկել տեսչապետը: Շուրջ երեք ժամ տևած մանկխորհի ժամանակ առարկումներ չեն եղել տեսչապետի տեղեկանքի շուրջ, ընդհակառակը, դպրոցի փոխտնօրենը և ուսուցիչներն իրենց ելույթներում շնորհակալություն են հայտնել օբյեկտիվ, փոխըմբռնման մթնոլորտում անցկացված ստուգումների համար: Եթե ինչ-որ հարցադրումներ էլ եղել են ուսուցիչների կողմից, դրանց տրվել են սպառիչ պատասխաններ: Թերթը կատարել է իր գործը՝ աշխատելով լինել անաչառ՝ անկախ այն բանից, որ վերլուծությունը ոմանց կարող է դուր չգալ:

Հատված «Մի բաց նամակ»-ից.

«2015 թվականի հունվարի 20-ին լույս տեսած «Լուսարար» թերթի հերթական համարում տեղ գտած «Դրական միտումը՝ հուսադրող հանգամանք» տարօրինակ վերնագրով հոդվածը լուրջ վրդովմունք ու զայրույթ առաջացրեց Ստեփանակերտի հ.8 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվում: **Հոդվածում իբր թե «լուսաբանվում են» Կրթության և գիտության նախարարության պետական տեսչության կողմից իրականացված համալիր ստուգման արդյունքները Ստեփանակերտի հ.8 ավագ դպրոցում (ի դեպ, նշենք որ տեսչավորման արդյունքում դպրոցի 60 ուսուցիչներից 36-ը գնահատվել է «լավ»):**Առանց խորամուխ լինելու ստուգման իրական արդյունքների մեջ՝ հոդվածագիրը, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, խեղաթյուրված է ներկայացրել որոշ փաստեր ու տվյալներ՝ տպագրելով միայն տողատակերի բացասականը, մինչդեռ տեսչապետի խոսքում գերակշռողը դրականն էր»:

Հատված «Լուսարար»-ի հրապարակումից. «Մանկավարժական հանրույթում մեծ թիվ են կազմում ճանաչված և փորձառու ուսուցիչները: Տեսուչների կողմից ստուգված 61 ուսուցիչներից 33-ի (54 %) աշխատանքը գնահատվել է «լավ», մնացած 28-ինը՝ «բավարար»: Այստեղ թվական մի փոքր անհամապատասխանություն կա. պատճառը տեխնիկական է, և կարծում ենք՝ մեծ սխալ չէ:

Հատված «Մի բաց նամակ»-ից.

«2014 թվականին Ստեփանակերտի հ.8 ավագ դպրոցը հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի քաղաքային փուլում, իսկ հանրապետական փուլում, մանրակրկիտ ստուգումներց հետո, արժանացել «Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածքի համար» անվանակարգին, սակայն հոդվածագիրը նշում է, թե իբր դպրոցի տնօրինությունն ու մանկավարժական հանրույթն ընդամենը որոշակի աշխատանքներ են կատարել արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների դրվածքի բարելավման ուղղությամբ: Հարց է ծագում՝ ո՞ր ստուգումն էր ճիշտ»:

Հատված «Լուսարար»-ի հրապարակումից. «Նախորդ ստուգումից հետո, որն անցկացվել էր հինգ տարի առաջ, տեսչապետի հավաստմամբ, դպրոցում շատ փոփոխություններ են եղել: Զգալի չափով հարստացվել է ուսումնանյութական բազան, ստեղծվել են նոր առարկայական կաբինետներ: Պատահական չէ, որ դպրոցը, մասնակցելով 2014 թ. «Տարվա լավագույն դպրոց» մրցույթին, հաղթող է ճանաչվել «Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածքի համար» անվանակարգում»:

Հատված «Տեղեկանք»-ից. *«Միայն 2012-2014 թվականների ընթացքում դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացվել է գույքով, որի գումարային արժեքը կազմել է մոտ 6 միլիոն ՀՀ դրամ: Այդ թվում՝ 1,5 մլն դրամ արժողությամբ համակարգչային կաբինետ, 462 հազար դրամ արժողությամբ պաստառներ, քարտեզներ, ատլասներ, վահանակներ, աշակերտական նստարաններ և այլն: Լուրջ աշխատանքներ են տարվել հիմնական շենքի միջանցքների, դասարանական անկյունների ձևավորման ուղղությամբ: Ստեղծվել են մի շարք առարկաներից առարկայական վահանակներ: Ուշադրության արժանի են հատկապես 1-ին հարկում տեղակայված ԼՂՀ պետականության անկյունը, «Հավերժի ճամփորդները» վերտառությամբ վահանակը՝ Ազատամարտում զոհված 67 նախկին սաների նկարներով, ՀՀ և ԼՂՀ ազգային հերոսների մեծ վահանակը, Ա. Դ. Սախարովին նվիրված «Խիզախե՛ք հայեր, ձեր գործն արդար է» վահանակը և այլն: Պետք է ասել, որ այս աշխատանքներում իր լուրջ դերակատարությունն է ունեցել դպրոցի տնօրեն Լ. Գևորգյանը:*

Պատահական չէ, որ դպրոցը, մասնակցելով 2014 թ. «Տարվա լավագույն դպրոց» մրցույթին, հաղթող է ճանաչվել «Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածքի համար» անվանակարգում»:

«Լուսարար».- Եթե որպես ավագ դպրոց՝ պետությունը առանձնահատուկ վերաբերմունք է ցուցաբերել նյութատեխնիկական բազան հարստացնելու առումով, մի՞թե դա մանկավարժական կոլեկտիվի ներդրումն է, կամ Արցախի ո՞ր դպրոցում չկան պետականության անկյուն, Զոհվածների անկյուն կամ Ազգային հերոսների նկարներով վահանակներ: Չէ՞ որ դա պարտադիր պայման է, նախարարի հրաման: Այդ մասը «Լուսարարը» համառոտ է արձանագրել՝ նշելով գլխավորը՝ անվանակարգում հաղթող ճանաչվելը: Իսկ «Ստուգումները ցույց են տվել, որ դպրոցի տնօրինության, մանկավարժական հանրույթի կողմից որոշակի աշխատանքներ են տարվում արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների դրվածքի բարելավման ուղղությամբ» միտքը, որը դուր չի եկել մանկավարժական կոլեկտիվին, տեղեկանքի «Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների դրվածքը» ենթավերնագրի տակ ամփոփված վերլուծությունից է, որտեղ վերոհիշյալ միտքն ասելուց հետո թվարկվում են կատարված աշխատանքները՝ «Առաջին զանգ», «Վերջին զանգ», տոն և հիշատակի օրերի նշում, ինտելեկտուալ խաղեր, արիության դասեր, եռատոնին նվիրված միջոցառումներ, էքսկուրսիաներ և այլն, որոնք դարձյալ նպատակահարմար չենք գտել մեջբերել այն բանի համար, որ դրանք յուրաքանչյուր դպրոցի առօրյայի մաս են կազմում: Եթե դա ասվեր գյուղական մի փոքր դպրոցի մասին, գուցե թե ընդգծեինք, բայց մայրաքաղաքում գտնվող ավագ դպրոցի համար դա թմբկահարելու բան չէ:

Հատված «Մի բաց նամակ»-ից.

«Ստուգումների ընթացքում աշակերտների հաճախումները ստուգվել են շաբաթ օրը՝ վեցերորդ ժամին, և արձանագրվել 85 բացակա, իսկ հոդվածագիրն այն վերագրել է յուրաքանչյուր օրվան»:

Հատված «Լուսարար»-ի հրապարակումից. «Անհարգելի բացակայությունները դպրոցի ցավոտ կողմերից են: Դպրոցի տնօրինությունը, դասղեկները, առանձնապես ՄԿԱԳՏՏ-ը և աշակերտների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը լուրջ անելիքներ ունեն անհարգելի բացակայությունների քանակը հնարավորինս նվազագույնի հասցնելու համար»:

Մանկավարժական կոլեկտիվը համաձայն չէ այս մտքին, քանի որ ստուգվել և բացակայությունները արձանագրվել են շաբաթ օրը: Հ. 8 դպրոցում խրախուսո՞ւմ են շաբաթ օրերի 6-րդ ժամի 85 անհարգելի բացակայությունները:

Հատված «Մի բաց նամակ»-ից.

«Տեսչական գրավորների արդյունքները բոլոր առարկաներից (բացի մաթեմատիկայից) և՛ առաջադիմությամբ, և՛ որակով «բավարար» են, մինչդեռ հոդվածագիրը նշում է. **«Տեսչական գրավորների վերլուծությունը թվային տվյալներով ներկայացնելով՝ Ս.Արզումանյանը այն եզրահանգումն արեց, որ ուսումնառության մակարդակը, որոշ բացառություններով, համարյա բոլոր դասարաններում հեռու է բավարար լինելուց»:**

Ընթերցողների համբերությունը ստիպված ենք չարաշահել տոկոսային տվյալներով՝ մինչև հասնենք գլխավոր մտքին:

Հատված «Տեղեկանք»-ից. «Ստորև ներկայացնում ենք տեսչական գրավորների վերլուծությունը:

Մաթեմատիկայից 7-12-րդ դասարաններում տրված գրավորներին մասնակցել է 461 աշակերտից 413-ը կամ 88,6 %-ը: Միջին առաջադիմությունը կազմել է 40 %, որակը՝ 4 %՝ նախորդ ուստարվա տարեվերջի 100 % և 30 %-ի դիմաց, 5 տարի առաջ տեսչական գրավորների արդյունքներով առաջադիմությունը կազմել է 39 %, որակը՝ 8 %: Ավագ դպրոցի բնագիտական հոսքերում առաջադիմությունը կազմել է 42 %, որակը՝ 6 %, հումանիտար հոսքերում՝ համապատասխանաբար 32 % և 2 %: ***Թվերը խոսում են այն մասին, որ ուսումնառության մակարդակը համարյա բոլոր դասարաններում հեռու է բավարար լինելուց:*** Համեմատաբար բավարար արդյունք են արձանագրվել 11բ3 դասարանում (քիմիայի ենթահոսք, ուսուցիչ՝ Ս. Առաքելյան)՝ 50 % առաջադիմություն, 25 % որակ, այսինքն՝ 4 աշակերտից 2-ը դրական է ստացել, 2-ը՝ անբավարար, 10հ1 և 11հ1 դասարաններում (ուսուցիչ՝ Վ. Գասպարյան)՝ 50% առաջադիմություն և 6 % որակ, բնագիտական հոսքերից՝ 11բ2 դասարանում (ուսուցիչ՝ Ա. Հայրապետյան)՝ 52 % և 11 %: Մնացած բոլոր դասարաններում ցածր արդյունքներ են արձանագրվել: Չնայած այդ տխուր պատկերին, հաշվի առնելով ուսուցիչների կարողությունները՝ բոլորի աշխատանքը և առարկայի դրվածքը գնահատվել են «բավարար»:

Հատված «Մի բաց նամակ»-ից.

«Մանկավարժական խորհուրդների նիստերում ելույթներով հանդես են գալիս ինչպես դպրոցի տնօրենն ու ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալները, այնպես էլ՝ մանկխորհի անդամները: Քննարկվող հարցերի շուրջ արտահայտվում են ուսուցիչները (ապացույցը՝ մանկխորհի արձանագրությունները): Հարց է ծագում՝ ո՞ր հարցը իրավունք չունի ներկայացնելու տնօրենը:

Անցած 2013-14 ուստարում դպրոցի տնօրենի և տեղակալների կատարած դասալսումները գնահատվել են «լավ»: Նշենք, որ յուրաքանչյուր դասալսումից հետո կատարվում է դասի վերլուծություն, նշվում ձեռքբերումներն ու բացթողումները, կատարվում համապատասխան հետևություններ: Տնօրենի տեղակալները հետևողական են առկա թերությունների վերացման գործում, սակայն հոդվածագիրը, չգիտես ինչը հիմք ընդունելով, գրում է, որ «…ոչ միշտ են դասալսումները կատարվում պլանաչափ ու նպատակային, դասալսումների որակը «լավ» կամ«բավարար է», բայց լավ չէ, որ դիտողությունները մնում են թղթի վրա»:

Հատված «Լուսարար»-ի հրապարակումից. «Տեսչապետը փաստեց, որ տնօրինության աշխատանքներում ամենադրական տեղաշարժը արձանագրվել է ներդպրոցական վերահսկողության ուղղությամբ: Գաղտնիք չէ, որ ներդպրոցական վերահսկողության հիմնական ձևերը եղել և մնում են դասալսումները, տնօրենական գրավորների անցկացումը, տարաբնույթ թեմատիկ ու համակողմանի ներքին ստուգումները և այլն: Դա հաստատում են հետևյալ փաստական տվյալները. եթե նախորդ ստուգումների ընթացքում տնօրինության կողմից դասալսումների նորման կատարվել է մոտ 50 %-ով, ապա նոր տնօրինության կողմից 2013-2014 ուստարում դասալսումների պլանը կատարվել է 91,6 %,-ով, ընդ որում՝ տնօրենի տեղակալների կողմից՝ համարյա 100 %-ով:

Տեսչապետը ուշադրություն հրավիրեց այն բանի վրա, որ ոչ միշտ են դասալսումները կատարվում պլանաչափ ու նպատակային: Դասալսումների որակը լավ կամ բավարար է, բայց լավ չէ, որ դիտողությունները մնում են թղթի վրա»:

Հատված «Մի բաց նամակ»-ից.

«Դպրոցում յուրաքանչյուր մեթոդմիավորում կատարում է իր աշխատանքները՝ ըստ նախօրոք մշակված աշխատանքային պլանի: Հաճախակի են կազմակերպվում տարաբնույթ միջոցառումներ, ընդօրինակման դասեր՝ ինչպես դպրոցական, այնպես էլ քաղաքային (նախատեսվածից ավելին), մինչ դեռ հոդվածագիրը նշում է. **«Դժգոհության տեղիք է տվել նաև մեթոդմիավորման աշխատանքային պլանների վիճակը, որոնց մեծ մասը ձևական բնույթ է կրում»:**

«Լուսարար». Խոսքը փոխադարձ դասալսումների մասին է, որ դպրոցում քիչ են անցկացվում: Չի գոհացնում ուսուցիչների կողմից կատարված փոխադարձ դասալսումների քանակը. ըստ «Տեղեկանք»-ի՝ 2013-2014 ուստարում՝ 171 ժամ (միջին հաշվով 2,5 ժամ), այս կիսամյակում՝ 97 ժամ (միջին հաշվով 1,5 ժամ):

Իսկ մեթոդմիավորման աշխատանքային պլանների մասին «Տեղեկանք»-ում այսպես է գրված. *«Դժգոհության տեղիք է տվել նաև մեթոդմիավորման աշխատանքային պլանների վիճակը, որոնց մեծ մասը գրված է մատների արանքով»:* ***«Մատների արանքով»*** արտահայտությունը դարձված է, որը նշանակում է *ի միջի այլոց* և շատ հեռու չէ «ձևական» արտահայտությունից:

Հատված «Մի բաց նամակ»-ից.

«Ինչ մնում է «Dasaran.am» ծրագրին, ապա սա դեռ նորամուծություն է կրթական համակարգում, և ծրագրի իրականացումը 56%-ով, կարծում ենք, ցածր ցուցանիշ չէ: Ի դեպ, նշենք նաև, որ դպրոցի ուսուցիչների մեծ մասը դեռ նոր է տիրապետում նորագույն տեխնոլոգիաներին»:

Եթե հ. 8 ավագ դպրոցում դեռ խոսում են նորագույն տեխնոլոգիաներին վատ տիրապետելու մասին, նշանակում է լուրջ խնդիրներ կան այստեղ: Ի դեպ, «dasaran.am» ծրագիրը մայրաքաղաքի մի շարք հիմնական դպրոցներում բարձր մակարդակի վրա է, իսկ հ.2-ում, որտեղ տեխնիկական հնարավորությունները անհամեմատ զիջում են ավագ դպրոցին, ամենալավ վիճակն է, էլ չենք ասում, որ գյուղական որոշ դպրոցներում նույնպես վատ չէ, ինչպես, օրինակ՝ վերջերս ստուգված Բերդաշենի դպրոցում, որտեղ ծրագիրն իրականացվում է 100 %-ով: Սա նախարարի հրաման է, որը պետք է կատարել անվերապահորեն:

Հատված «Մի բաց նամակ»-ից.

«Մինչև 2014թ.-ի դեկտեմբերի 2-ը դպրոցում անց է կացվել 57 ժամ համակարգչային դաս, այսօր՝ փետրվարի 7-ի դրությամբ՝ 126 ժամ, իսկ հոդվածագիրը նշում է,որ այդ դասերի քանակը բավարար չէ: Սա այն դեպքում,երբ ցուցադրվող նյութերը ուսուցիչներն իրենք են հայթայթում:

Այդ առումով միանգամայն անհասկանալի է հետևյալ պարբերությունը. «Նախորդ ուս.տարում անցկացվել է 140 համակարգչային դաս, այս ուսումնականում՝ ընդամենը 57 ժամ, ընդ որում՝ այդ 197 ժամից 74-ը կամ մոտ 38%-ը՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչների կողմից: Ռուսաց լեզվի ուսուցիչները անցկացրել են ընդամենը 31 ժամ, մաթեմատիկայից՝ 24 ժամ, պատմությունից՝ 27 ժամ, մնացած առարկաներից շատ քիչ քանակով:

Ի՞նչ է նշանակում հետևյալ պարբերությունը. «Տնօրենի ու նրա տեղակալների կողմից թույլ է իրականացվում վերահսկողությունը աշակերտների գիտելիքների գնահատման կարգի պահանջների նկատմամբ, ինչի մասին է վկայում օրագրերի վիճակը»: Ցավոք, կարգ բառը իր ճիշտ տեղում չէ:

Իհարկե, չենք ժխտում, որ դպրոցում առկա են թերություններ ու բացթողումներ, ինչպես բոլոր դպրոցներում: Ինչպես ասում են՝«Որտեղ՝ աշխատանք՝ այնտեղ թերություն»: Առկա է նաև ծխելու արատավոր երևույթը, սակայն դպրոցի ողջ ուսուցչական կոլեկտիվը ջանք չի խնայում վերացնելու բացթողումներն ուսուցման և դաստիարակության բնագավառում, հասնել բարձր ցուցանիշների:

«Լուսարարը» ներկայացրել է մինչև համալիր ստուգման ժամանակն անցկացված համակարգչային դասերի քանակը՝ 57 ժամ: Եթե դրանից հետո մինչև փետրվարի 7-ը, մեկ ամսվա ընթացքում այդ թիվը կրկնապատկվել է, գերազանց է, եթե, իհարկե, դրանք եղել են նպատակային դասեր: Նույն այդ մանկխորհի նիստում նախարար Ս. Ասրյանն ասել է. «Իհարկե, չի նշանակում, որ պետք է բոլոր դասերն անցկացնել համակարգչային կաբինետում, եթե դրանք լինելու են անարդյունավետ: Այդ դասերը պետք է սկզբունքորեն տարբերվեն մյուսներից իրենց որակական աստիճանով»:

Մենք էլ ենք ցավում, որ հ.8 ավագ դպրոցում մինչև հիմա չգիտեն, որ գոյություն ունի նորմատիվային այսպիսի փաստաթուղթ. *«Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների կարգ»,* որը տպագրվել է «Լուսարար»-ում, «Տեղեկագրում» և պետք է լինի յուրաքանչյուր ուսուցչի ձեռքի տակ:

Այդքանով հանդերձ՝ ուզում ենք մեր գոհունակությունը հայտնել հ. 8 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվին այն բանի համար, որ նրանք հրապարակային խոսքի հանդեպ անտարբերություն չեն ցուցաբերել: Այն, ինչի մասին տպագրվել է թերթում, ամենաբարձր մակարդակով հնչեցվել է մանկավարժական խորհրդի նիստում, սակայն, կրկնում ենք, առարկումներ չեն եղել: Բայց այդ նույնը, երբ հրապարակվել է, այլ կերպ է ընկալվել: Հայտնի խոսք է՝ ճշմարտությունը առողջ վիճաբանությունից է ծնվում: Համոզված ենք, որ հ. 8 ավագ դպրոցի լավ գործերի, բարձր առաջադիմության և ուսման որակի մասին «Լուսարարը» հրապարակելու դեռ շատ առիթներ կունենա:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՕՐԻՆԱԿԵԼԻ

ՆՈՒՌ-Ը ԴՐԱՄԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ Է ԱՊԱԳԱ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2011թ. հունվարին ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը և արգենտինահայ բարերար էդուարդո Էռնեկյանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ հայտարարելով Արցախում Յուրաքանչյուր երեխայի՝ մեկ համակարգիչ ծրագրի՝ ՆՈՒՌ նախագծի ներդրման մասին:

Տիար Էռնեկյանն ընդգծեց, որ համաշխարհային հանրությունը պարտավոր է ապահովել կրթության և տեղեկությունների հասանելիությունն աշխարհի բոլոր երեխաների համար: Նա հատուկ շեշտեց, որ հայերն ամբողջ աշխարհում անձնապես կամ կազմակերպությունների միջոցով պետք է օժանդակեն ապագա սերունդների կրթությանը ու իրենց լուման ներդնեն այդ գործում:«Այսօր ես փորձում եմ ցանել ԼՂՀ երեխաներին համաշխարհային հանրության մեջ ընդգրկելու միջազգային ջանքերի սերմերը: Նրանք արժանի են համապատասխան կրթություն ստանալու և տեղեկատվության աշխարհ մուտք ունենալու»,- ասել է բարերարը:

ՆՈՒՌ-ի նպատակն է՝ աջակցել թվային համակարգերի ներդրմանը, բոլորին հասանելի դարձնել մշակույթն ու լավագույն կրթությունը:

Ուրեմն՝ ծրագիրը հիմնված է լիարժեք ու ավարտուն համակարգի վրա, որն ընդգրկում է տեխնոլոգիական միջոցներ, ուսուցիչների վերապատրաստում, համապատասխան բովանդակության մշակում, ինչպես նաև՝ ընտանիքի և հասարակության մասնակցություն:

Այս ծրագրի որդեգրած ռազմավարության սկզբունքները հետևյալն են՝ արդարություն, հավասար հնարավորություններ բոլոր երեխաների համար, գիտելիքների համապարփակ հասանելիություն, ժողովրդականացում և ուսուցման միջոցների առկայություն, որը ոչ միայն վերաբերում է դպրոցական ուսուցմանը, այլև ինքնուսուցմանը՝ սեփական տեխնոլոգիական միջոցների կիրառմամբ:

Ինչպես գիտենք, այս ուսումնական տարում ՆՈՒՌ ծրագրում կատարվել է որակական առաջընթաց. Ստեփանակերտի և Շուշիի դպրոցների 6-րդ դասարանցիներին բաժանվել են ժամանակակից, նոր սերնդի համակարգիչներ: Դրանք աշխարհահռչակ Ինտելի արտադրության ClassMate տեսակի համակարգիչներ են, որոնք ունեն արդի պահանջներին համապատասխանող տեխնիկական և ծրագրային ապահովվածություն, այսպես ասած՝ փոքր համակարգիչ՝ մեծ գործերի համար:

Նախկինում տրամադրված XO տեսակի համակարգիչները ունեին անվճար և բաց ծրագրային ապահովում՝ Linux գործողությունների համակարգի հիման վրա:

Սակայն Intel ClassMate-ի համար որոշվեց օգտագործել հայտնի Windows գործողությունների համակարգը, ընդ որում՝ նրա ամենավերջին՝ Windows 8.1 տարբերակը:

Windows 8.1 և Office 2013 արտոնագրված ծրագրերը ձեռք են բերվել Հայաստանի Unicomp կազմակերպության միջոցով, և այս օրերին մեզ մոտ են գտնվում կազմակերպության մասնագետները, որոնք կատարում են այդ ծրագրերի տեղադրման, թարմացման և ակտիվացման աշխատանքները:

Սակայն միայն տեխնոլոգիաների մուտքը դպրոց չի կարող հասցնել ցանկալի նպատակի, եթե չի ուղեկցվում նոր պահանջներին համապատասխանող կրթական համակարգով ընդգրկելով թե՛ աշակերտներին և թե՛ ուսուցիչներին:

Ըստ ժամանակացույցի՝ մայրաքաղաքի հիմնական դպրոցների ուսուցիչները 6-րդ դասարանցիների հետ շարունակում են կազմակերպել ինտերակտիվ դասեր, որտեղ որպես աշխատանքային գործիք հանդես է գալիս համակարգիչը: Նպատակը ժամանակակից տեխնոլոգիաների մուտքը կրթահամակարգ ավելի սահուն դարձնելն է:

2015թ. հունվար-փետրվար ամիսներին նման դասեր 6-րդ դասարաններում վարել են Մ. Հարությունյանը (Ինֆորմատիկա-«Գործիքների խմբեր»), Ի. Մկրտչյանը (բնագիտություն-«Բջջի կառուցվածքը»), Հ. Միքայելյանը (աշխարհագրություն - «Հարավային Ամերիկա: Կլիման, ներքին ջրերը»), Զ. Եսայանը (տեխնոլոգիա- «Օդային մրցավազք. ինքնաթիռների մասին»), Ն. Վանյանը (մայրենի - «Հայրենի բնաշխարհը. Նոյ նահապետի տապանը Արարատի վրա»), Անահիտ Կասյանը (Հին աշխարհի պատմություն - «Հին աշխարհի մշակույթը»)՝ հ. 1 դպրոցից, Մ. Համբարձումյանը (ինֆորմատիկա), Ա. Հայրապետյանը (Համաշխարհային պատմություն-«Ալեքսանդր Մակեդոնացի») Ս.Դադայանը (մայրենի-«Սևանա լիճ»), Ա. Հայրապետյանը (հայոց պատմություն-«Տիգրան Մեծ»), Լ. Օհանյանը (աշխարհագրություն-«Հարավային Ամերիկա»)՝ հ.5 դպրոցից, Գ. Զաքարյանը (բնագիտություն - «Ձայնի ընկալումը կենդանիների կողմից., Լսողության հիգիենա»)՝ հ. 7 դպրոցից:

Նպատակն է՝ ԼՂՀ երեխաներին հասանելի դարձնել լավագույն կրթությունը և ճանապարհ բացել դեպի լայն հնարավորություններով պայծառ ապագան:

Մարգարիտա ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՆՈՒՌ ծրագրի արցախյան համակարգող

ՆՎԻՐՎԱԾ ԱՐՑԱԽԻ ՎԵՐԱԾՆՆԴԻՆ ԵՎ ՄԱՅՐԵՆԻԻ ՕՐՎԱՆ

Փետրվարի 20-ին ինչպես հանրակրթական բոլոր դպրոցներում, այնպես էլ Ք. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանում կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված Արցախի վերածննդին ու Մայրենիի օրվան: Սակայն այս միջոցառումը հարկ է առանձնացնել մյուսներից նրանով, որ վերջինիս մասնակիցները մեր ապագա հայրենյաց պաշտպաններն էին՝ իրենց սլացիկ կեցվածքով ու հայրենաշունչ և ազդեցիկ խոսքով:

Միջոցառումը մեկնարկեց ՀՀ հիմնի ներքո, որը միաձայն երգում էին ողջ հրամկազմն ու սաները:

Ելույթներով հանդես եկան ուսումնական մասի դասախոսներ Լուսինե Մովսեսյանն ու Նունե Սարգսյանը, ովքեր փառաբանեցին հայրենիքն ու մայրենին՝ կոչ անելով բոլորին՝ հար գլուխ խոնարհել որդեկորույս մայրերի, զոհված քաջորդիների շիրիմների առջև:

Այդ ամբողջ ընթացքում ներկաները սլայդ-շոուի վրա ընթերցում էին հայ և օտարազգի մեծերի անմար խոսքերը՝ նվիրված հայոց լեզվին, իսկ ռազմամարզականի տարբեր կուրսերի սաներ բանավոր էին կատարում մայրենիի փառաբանությունը: Նրանց ձիգ պահվածքում այնքա՜ն վստահություն, պարտավորության զգացում կար:

Միանշանակ կարելի է փաստել, որ միջոցառմանը ներկա ծնողների սրտում հուզմունքն ու հպարտությունը միախառնվել էին, քանզի նրանք ևս մեկ անգամ համոզվեցին, որ հայրենիքի ապագան իրենց որդիների հուսալի ձեռքերում է:

Նշենք, որ 2-րդ վաշտի 2-րդ դասակի սան Ռոման Ջավադյանի կիթառով երգը անչափ հիացրեց ու հուզեց ներկաներին:

Ծնողների անունից շնորհակալություն հայտնվեց կազմակերպիչներին ու ռազմամարզական վարժարանի ողջ անձնակազմին՝ իրենց երեխաներին հայրենասիրական ոգով կրթելու և դաստիարակելու, նաև՝ սաների առօրյան հետաքրքիր միջոցառումներով հագեցնելու համար:

Վերջում հանդես եկավ ռազմամարզական վարժարանի զորամասի հրամանատար, փոխգնդապետ Վահրամ Հակոբյանը, ով նախ՝ շնորհավորեց բոլորին՝ փետրվարյան տոների կապակցությամբ, հետո շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին ու սաներին:

-Սա լոկ միջոցառում չէ, այլ յուրօրինակ դասապրոցես, որտեղ միախառնված են հայրենասիրությունն ու հայրենապաշտությունը, ճանաչողությունն ու հոգեկերտվածքի վրա գեղեցիկի ներազդումը, մեսրոպաշունչ ոսկեղենիկ գրերի ամեն նյութեղենից վեր գերագնահատումը և, իհարկե, այդ ամենը՝ դասախոսներ Անուշ Բաբայանի, Հասմիկ Գաբրիելյանի և Նունե Սարգսյանի մասնագիտական ու մանկավարժամեթոդական ողջ կարողությունների ներդրման շնորհիվ:

Միջոցառումն ավարտվեց ԼՂՀ օրհներգի ներքո՝ կրկին սաների և հրամկազմի միաձայն երգով:

Լիրա ՂԱԼԱՅԱՆ

ԲԱՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Մարտունու Մ. Մելքոնյանի անվան նախադպրոցական հիմնարկը հենակետային մանկապարտեզ է, որտեղ աշխատում են հմուտ դաստիարակներ: Բազմիցս մասնակցել ենք ընդօրինակման պարապմունքներին ու ստացել կայուն մեթոդական օգնություն:

Վերջերս մանկապարտեզում կազմակերպվեց բաց պարապմունք՝ շրջանում գործող մանկապարտեզների և դպրոցներին կից գործող նախապատրաստական խմբերի դաստիարակների մասնակցությամբ:

Մանկապարտեզի տնօրեն Իրինա Ղուկասյանի գլխավորությամբ հյուրերը մտան խմբասենյակներ, ծանոթացան պարապմունքների ընթացքին :

Անցկացվեց երկու բաց պարապմունք ավագ խմբերում՝ գրաճանաչությունից ու մաթեմատիկայից:

Պարապմունքները վարում էին դաստիարակներ Կարինե Առստամյանն ու Նարինե Սարգսյանը: Նրանք ցուցադրեցին, թե ինչպես կարելի է խաղառաջադրանքների միջոցով զարգացնել երեխաների պատկերավոր մտածողությունը՝ օգտագործելով համապատասխան դիտողական պարագաներ: Երեխաները տարբերեցին երկրաչափական պատկերները, հաշվեցին, կարողացան հարաբերակցել թվանշանները առարկաների անվանումների հետ: Երեխաները գրատախտակի մոտ խաղանիշների միջոցով կազմեցին բառեր, վանկատեցին, կազմեցին նախադասություններ:

Կազմակերպվեց խաղ «Ասա՛ հակառակը», «Տրված նախադասությունները դարձնել բարդ» և այլն:

Կատարվեց ֆիզկուլտդադար:

Երեխաների ակտիվությունը հիացրեց ներկաներին: Պարապմունքի մասնակիցները համոզվեցին, որ ընդօրինակելու շատ բան ունեն մեր հարազատ նախադպրոցական օջախից:

Դաստիարակներ Կ.Առստամյանը և Ն.Սարգսյանն ունեին պարապմունքի համառոտագիր:

Տնօրեն Ի.Ղուկասյանը, մեթոդիստ Ի.Ուլուբաբյանը հպարտությամբ են խոսում իրենց դաստիարակների կատարած աշխատանքի մասին: Հետ չեն մնում նաև երաժիշտ-դաստիարակները: Մանկապարտեզն ունի գեղեցիկ ձևավորած երաժշտական դահլիճ:

Ավագ խմբերի երեխաները հանդես եկան հայրենասիրական երգերով ու պարերով:

Դաստիարակները կարողացան պարապմունքներն անցկացնել պատշաճ մակարդակով: Մանկապարտեզի տնօրեն Ի.Ղուկասյանը վերլուծեց պարապմունքի ընթացքը:

Մեթոդիստ Ի. Ուլուբաբյանը խորհուրդներ տվեց պարապմունքների մասնակից դաստիարակներին:

Վերջում Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի մասնագետ Անուշ Հովսեփյանը վերլուծեց դաստիարակներ Կ.Առստամյանի և Ն.Սարգսյանի վարած պարապմունքները, շնորհակալություն հայտնեց մասնակիցներին:

Արմինե ՇԻՆՈՅԱՆ
Գիշու միջն. դպրոցի նախապատրաստական խմբի դաստիարակ

ՏԱՐԱԿԱՐԳ

Գրանցված է՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2015 թվականի փետրվարի «17»
Պետական գրանցման համարը 1051572
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 30» հունվարի 2015թ. N 8-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 62-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 23-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ամբողջական ցանկը, ատեստավորման թերթի ձևը, որակավորման տարակարգի բնութագրիչները, որակավորման տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկերը սահմանելու մասին» N 62-Ն հրամանով հաստատված հավելված 3-ի

1) 2-րդ կետի *«դեպքում»* բառից հետո լրացնել *«, որոնք տարբերվում են որակավորման առաջին աստիճանի տարակարգի բնութագրիչներից»* բառերով,

2) 6-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության՝ *«միջազգայնորեն»* բառից հետո լրացնել *«կամ կրթության ազգային ինստիտուտի կողմից»* բառերով:

2.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման նպատակով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ս. ԱՍՐՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 241-Ն հրամանի

Հավելված 3
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2012 թվականի ապրիլի 23-ի N62-Ն հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

I. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման առաջին աստիճանի տարակարգ շնորհվում է սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված բնութագրիչներից առնվազն 2-ը՝ բացառությամբ 6-րդ կետի 1-ին և 6-րդ ենթակետերով սահմանված բնութագրիչները միաժամանակ ապահովելու դեպքերի:

2. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման երկրորդ աստիճանի տարակարգ շնորհվում է սույն հավելվածի երկրորդ գլխում նշված չափանիշներից առնվազն 4-ը ապահովելու դեպքում, որոնք տարբերվում են որակավորման առաջին աստիճանի տարակարգի բնութագրիչներից ***(խմբագրված է 30.01.2015թ. N 8-Ն հրաման):***

3. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման երրորդ աստիճանի տարակարգ շնորհվում է սույն հավելվածի երկրորդ գլխում նշված չափանիշներից առնվազն 6-ը ապահովելու դեպքում:

4. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման չորրորդ աստիճանի տարակարգ շնորհվում է սույն հավելվածի երկրորդ գլխում նշված բոլոր չափանիշներն ապահովելու դեպքում:

5. Որակավորման տարակարգի շնորհման և դրա բարձրացման համար ուսուցիչը կարող է դիմել հետևյալ համաչափությամբ.

1) երկրորդ աստիճանի որակավորման տարակարգ ստանալու համար՝ առաջին աստիճանի տարակարգ ստանալուց առնվազն երկու տարի հետո.

2) երրորդ աստիճանի որակավորման տարակարգ ստանալու համար՝ երկրորդ աստիճանի տարակարգ ստանալուց առնվազն երեք տարի հետո.

3) չորրորդ աստիճանի որակավորման տարակարգ ստանալու համար՝ երրորդ աստիճանի տարակարգ ստանալուց առնվազն չորս տարի հետո:

II. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

6. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչներն են՝

1) ուսուցչի վարպետության մակարդակը,

2) դասագրքերի գնահատող հանձնաժողովում ընդգրկվածությունը,

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորած կազմակերպությունում վերապատրաստման դասընթացի վարումը,

4) վերջին երկու տարվա ընթացքում «Հայկական կրթական միջավայր» կրթական պորտալում առնվազն մեկ մասնագիտական թեմայի վարում կամ ուսուցիչների վերապատրաստման առնվազն մեկ հեռավար ուսուցման դասընթացի վարումը,

5) վերջին երեք տարվա ընթացքում՝

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից կամ միջազգայնորեն կամ կրթության ազգային ինստիտուտի կողմից *(խմբագրված է 30.01.2015թ. N 8-Ն հրաման)* ճանաչված ամսագրերում հրատարակված (կամ վերահրատարակված) առնվազն մեկ գիտական կամ մանկավարժական հոդված կամ՝

բ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված դասագրքի կամ ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկի կամ ուսումնաօժանդակ նյութի կամ գիտամանկավարժական աշխատության հեղինակ կամ համահեղինակ,

6) վերջին 3 տարվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության տեսչավորումների կամ արտաքին գնահատման արդյունքում արձանագրած լավագույն ցուցանիշները

7) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պետական պարգևների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և «Հայաստանի Հանրապետության Պետական պարգևների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն կոչում, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ շքանշաններ և մեդալներ ունեցող կամ՝

ա. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պատվավոր կոչումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և «Հայաստանի Հանրապետության Պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վաստակավոր մանկավարժի» և «Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի», ինչպես նաև նախկին ԽՍՀՄ, ՀԽՍՀ և ԱդրԽՍՀ գիտամանկավարժական բնագավառի պատվավոր կոչումներ ունեցող կամ՝

բ. վերջին 5 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի կողմից հուշամեդալներով, պատվոգրերով կամ շնորհակալագրերով պարգևատրված կամ

գ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացված հանրապետական մրցույթներում, առարկայական հանրապետական մրցույթներում մրցանակային տեղեր զբաղեցրած:

III. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

7. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարին,

2) անձնագրի պատճենը,

3) զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու մասին ատեստավորման ատեստավորման թերթիկի պատճենը,

4) կրթության վերաբերյալ փաստաթղթի (դիպլոմ) պատճենը,

5) աշխատանքային գրքույկի պատճենը,

6) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հաստատված ձևին համապատասխան՝ դպրոցի տնօրինության կողմից տրված տեղեկանք՝ ուսուցչի վարպետության առնվազն «լավ» մակարդակի մասին,

7) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության տեսչավորման կամ արտաքին գնահատման արդյունքում տրված տեղեկանք տվյալ ուսուցչի ցուցանիշների մասին,

8) հեղինակային աշխատությունները:

8. Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակների և պատճենների հետ: Բնօրինակները պատճենների հետ համեմատելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Է. Գրիգորյան

ԿԱՐԳ

Գրանցված է՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2015 թվականի փետրվարի «17»
Պետական գրանցման համարը 1051571
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 30» հունվարի 2015թ. N 7-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ, ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՈՎՈՐՈՂԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ԱԶԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ ՈՒՇ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 27-Ն ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ, 14-րդ և 17-րդ կետերը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգը»՝ համաձայն հավելվածի
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի փետրվարի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, մշակույթի և սպորտի նախարարության 2007 թվականի օգոստոսի 24-ի N 60/Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասինե N 27-Ն հրամանը:
3.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման նպատակով:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ս. ԱՍՐՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2015 թվականի հունվարի 30-ի
N 7-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ, ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՈՎՈՐՈՂԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ԱԶԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ ՈՒՇ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են դպրոցական տարիքի երեխայի (այսուհետ՝ սովորող)՝ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն (այսուհետ՝ դպրոց) ընդգրկման, հաստատությունից տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման գործընթացի հետ կապված՝ սովորողի ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) և դպրոցի միջև ծագող իրավահարաբերությունները:

II. ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

2. Սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

3. Սովորողի ընդունելությունն ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթությունը, իր զարգացման առանձնահատկություններին և տարիքին համապատասխան, ծնողի ցանկությամբ, կարող է կազմակերպվել հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված կամ հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում:

5. Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կատարվում է սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը:

6. Օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիություն չունեցողները (նրանց օրինական ներկայացուցիչը), ինչպես նաև այն դեպքում, երբ ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի է, մյուսը՝ սույն կետում նշվածներից որևէ մեկը, իրենց երեխայի ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են ինքնուրույն:

Մնացած դեպքերում, երբ սովորողի ծնողները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներ են, ուսուցման լեզուն հայերենն է: Բացառիկ դեպքերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների երեխաները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հանձնաժողովի թույլտվությամբ կարող են ընդգրկվել ռուսերենով ուսուցմամբ:

III. ՍՈՎՈՐՈՂԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում դպրոցից դպրոց տեղափոխությունը կատարվում է սույն կարգի պահանջներին համապատասխան: Դասարանը որոշվում է սույն կարգի 15-րդ կետով սահմանված փաստաթղթերի հիման վրա:

8. Նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից դպրոց սովորողի տեղափոխությունը կատարվում է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ 1-ին կուրսից՝ 10-րդ դասարան, 2-րդ կուրսից՝ 11-րդ դասարան, 3-րդ և 4-րդ կուրսերից՝ 12-րդ դասարան՝ բաց թողած ծրագրային նյութը լրացնելու պայմանով՝ պահպանելով սույն կարգի 15-րդ և 20-րդ կետերի պահանջները:

9. Հատուկ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունից ընդհանուր հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն կամ ընդհանուր հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունից հատուկ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի տեղափոխումը կատարվում է սույն կարգի 15-րդ կետի պահանջներին համապատասխան:

10. Սույն կարգի 15-րդ կետով սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության համապատասխանության դեպքում այլ երկրում ուսումնառությունն ընդհատած և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վերադարձած սովորողի դասարանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

Սույն կարգի 15-րդ կետով սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության անհամապատասխանության դեպքում սովորողի ուսումնառությունը կազմակերպվում է մեկ դասարան բարձր (բացառությամբ՝ 9-րդ դասարանի) կամ ցածր (կրթության տևողությունը 12 տարուց ավելի լինելու դեպքում):

11. Այլ երկրներից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն առանց կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի վերադարձած սովորողի դասարանը որոշվում է սույն կարգի 19-րդ և 20-րդ կետերի պահանջներին համապատասխան:

1-ին և 2-րդ դասարանները այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում (դասարանում) սովորած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների երեխաները Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վերադառնալիս ուսումը շարունա-

ԿԱՐԳ

կում են հայերենով ուսուցմամբ համապատասխան դասարանում:

12. Ուսումնառության ընթացքում առնվազն հինգ տարի անընդմեջ այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում (դասարաններում) սովորած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների երեխաները Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վերադառնալիս կարող են ուսումը շարունակել ռուսերենով (կամ այլ օտար լեզվով) ուսուցմամբ համապատասխան դասարաններում:

13. Մնացած դեպքերում այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում (դասարաններում) սովորած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների երեխաները ուսումնական տարվա առաջին կիսամյակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վերադառնալիս կարող են մինչև ուսումնական տարվա ավարտը, իսկ երկրորդ կիսամյակում՝ մինչև հաջորդ ուսումնական տարվա ավարտը սովորել ռուսերենով (կամ այլ օտար լեզվով) ուսուցմամբ դասարանում՝ այդ ընթացքում հայերենի իմացությունը ապահովելու և սույն կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո իրենց ցանկությամբ հայերենով ուսուցմամբ դասարան տեղափոխվելու պայմանով, եթե սույն կետով սահմանված ժամկետը լրանալու դեպքում չի լրանում հինգ տարի անընդմեջ ռուսերենով կամ այլ օտար լեզվով ուսուցմամբ սովորելու ժամկետը: Տվյալ դեպքում սովորողը ուսումնառությունը շարունակում է ռուսերենով կամ այլ օտար լեզվով ուսուցմամբ դասարանում:

14. Տնօրենը, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում, կիսամյակը մեկ անգամ, տարածքային կառավարման մարմին է ներկայացնում դպրոց տեղափոխված սովորողների անվանացանկը՝ նշելով դասարանը և այն դպրոցի անվանումը, որտեղ սովորողը հաճախել է:

Տարածքային կառավարման մարմինը և ոչ պետական դպրոցի տնօրենը տեղեկատվությունը ներկայացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

IV. ՍՈՎՈՐՈՂԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

15. Սովորողին դպրոց ընդունելու համար ծնողը ներկայացնում է՝

1) դիմում՝ ուղղված տնօրենին.

2) բնակության վայրից տեղեկանք (առաջին դասարան ընդունվելու դեպքում).

3) ծննդյան վկայականի կամ անձնագրի բնօրինակը և պատճենը: Տնօրենի «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ պատճենը պահպանվում է սովորողի անձնական գործում.

4) երկու լուսանկար՝ 3x4 չափսի.

5) սովորողի «Անձնական գործ» գրքույկը (բացառությամբ առաջին դասարան և ուսումնական տարվա սկզբում ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվելիս).

6) տեղեկանք՝ ընթացիկ գնահատականների և բացակայությունների քանակի մասին, նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում նաև տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների մասին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի դեպքում՝ նաև անհատական ուսուցման պլանը.

7) վկայագիր՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ»՝ տրված տարածքային կառավարման պետական մարմնի կողմից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին հատուկ դպրոց ընդունելու համար.

8) տեղեկանք «Անչափահասների հարցերով հանձնաժողովից» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված տարածքային կառավարման պետական մարմնի կողմից, հակասոցիալական վարք դրսևորած սովորողներին համապատասխան դպրոց ընդունելու համար (չորրորդ դասարանից սկսած).

9) սովորողի տեղափոխման թերթիկը՝ դպրոցից դպրոց տեղափոխվելիս (բացառությամբ ուսումնական տարվա սկզբում հիմնական դպրոցից ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվելիս): Նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում տեղեկանք՝ տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների մասին.

10) հիմնական կրթության վկայականի բնօրինակը 10-12-րդ դասարաններ ընդունվելիս.

11) սույն կարգի 19-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ փաստաթուղթ զինկոմիսարիատից:

V. ՍՈՎՈՐՈՂԻ ԱԶԱՏՈՒՄԸ ԴՊՐՈՑԻՑ

16. Սովորողի ազատումը դպրոցից կատարվում է՝

1) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա:

17. Սույն կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետով ավագ դպրոցից ազատված սովորողի հիմնական կրթության վկայականը հանձնվում է ծնողին, սույն կարգի 16-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ավագ դպրոցից ազատված սովորողի հիմնական կրթության վկայականը պահպանվում է տվյալ դպրոցում՝ մինչև սովորողի կամ նրա ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր դիմում ներկայացնելը:

18. Ոչ պետական կամ մասնագիտացված դպրոցից սովորողի ազատումը կարող է կատարվել նաև սույն կարգի 3-րդ կետով սահմանված ծնողի և տվյալ դպրոցի միջև կնքված պայմանագրային դրույթները սովորողի կամ ծնողի կողմից չպահպանելու դեպքում:

VI. ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ ՈՒՇ ՍՈՎՈՐՈՂԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

19. «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետից ուշ սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է՝

1) մինչև ութ տարեկանը՝ 1-ին դասարան՝ ընդհանուր հիմունքներով.

2) 9-13 տարեկանը՝ իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր.

3) 13-15 տարեկան, դպրոց չհաճախած կամ մինչև երկու տարի ուսումն ընդհատած սովորողն ընդունվում է իր տարիքային խմբից մեկ կամ երկու դասարան ցածր.

4) կրթական 3-րդ աստիճանում դպրոց չհաճախած (մինչև 17 տարին լրանալը) սովորողը, հիմնական կրթության վկայական ներկայացնելու դեպքում ընդունվում է իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր, 10-րդ դասարան ընդունվելու դեպքում՝ 10-րդ դասարան,

5) 19 տարին չլրացած սովորողը կրթական 3-րդ աստիճանի 10-րդ, 11-րդ կամ 12-րդ դասարաններում ուսումն ընդհատած լինելու դեպքում ուսումնառությունը շարունակում է ընդհատած ժամանակահատվածից:

20. Սույն կարգի 19-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 10-րդ կետերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագետների խումբ: Մասնագիտական եզրակացությունը տրվում է սովորողի՝ ուսումնական պլանով նախատեսված տվյալ դասարանի բոլոր առարկաների գիտելիքների գրավոր (դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան տվյալ առարկային) ստուգման արդյունքում: Հիմք ընդունելով մասնագիտական խմբի գրավոր եզրակացությունը՝ սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին, տնօրենը սովորողին ընդունում է համապատասխան դասարան, հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մեթոդմիավորումների կողմից ներկայացված անհատական առարկայական պլանները, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, ըստ որի՝ սովորողի համար կազմակերպ՝ բաց թողած ծրագրային նյութը յուրացնելու համար:

21. 17 տարեկանից բարձր, դպրոց չհաճախած կամ կրթական որևէ մակարդակում ուսումն ընդհատած սովորողը հանրակրթական հիմնական ծրագրերը կարող է յուրացնել ինքնակրթությամբ և դրսեկության ձևով (էքստեռն)՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության սահմանած կարգով ստանալ հիմնական կրթության վկայական և (կամ) միջնակարգ կրթության ատեստատ :

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Է. Գրիգորյան

Գրանցված է՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2015 թվականի փետրվարի «17»
Պետական գրանցման համարը 1051573
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ր Ա Մ Ա Ն

« 30» հունվարի 2015թ. N 9-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 139-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 139-Ն հրամանի վերնագրի և 1-ին կետի *«Պետական ուսումնական հաստատություն»* բառերը փոխարինել *«Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»* բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 139-Ն հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման նպատակով:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ս. ԱՍՐՅԱՆ

ԿԱՐԳ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2015 թվականի հունվարի 30-ի
N 9-Ն հրամանի

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2010 թվականի հոկտեմբերի 29-ի
N 139-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

Սույն կարգով կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման հետ կապված հարաբերությունները:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ հաստատություն) հիմնվելու դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը (այսուհետ՝ նախարար), շրջանի վարչակազմը և Ստեփանակերտի քաղաքապետարանը (այսուհետ՝ լիազորված մարմին) հաստատության հիմնադրման կամ հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի փոփոխման դեպքերում երեսունօրյա ժամկետում, սույն կարգի համաձայն, ըստ ենթակայության՝ կազմակերպում և ապահովում են կոլեգիալ կառավարման մարմնի (այսուհետ՝ խորհուրդ) անդամների ընտրության գործընթացը:

2. Հաստատություններում խորհուրդը կազմվում է ութ անդամից:

3. Խորհրդի անդամներին առաջադրում են՝

1) նախարարը.
2) լիազորված մարմինը.
3) մանկավարժական խորհուրդը.
4) ծնողական խորհուրդը:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանի վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության հաստատություններում նախարարը առաջադրում է խորհրդի մեկ անդամ:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակայության հաստատություններում նախարարը առաջադրում է խորհրդի երեք անդամ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում՝ լիազորված մարմինը՝ մեկական անդամ:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանի վարչակազմի ենթակայության հաստատություններում վարչակազմի ղեկավարը առաջադրում է խորհրդի երեք անդամ, որոնց մեկին ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը:

7. Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների խորհուրդներում լիազորված մարմինը առաջադրում է երեք անդամ:

8. Հաստատության մանկավարժական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ տվյալ հաստատությունում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ ունեցող անդամներից ընտրում է խորհրդի երկու անդամ:

9. Սույն կարգի 8-րդ կետով սահմանված ստաժի պայմանը չի գործում երեք տարուց պակաս գործող հաստատության խորհրդի անդամ ընտրելիս:

10. Հաստատության ծնողական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է հաստատության խորհրդի երկու անդամ:

11. Հաստատության խորհրդի կազմում չի կարող առաջադրվել այն ծնողը, ով միաժամանակ հանդիսանում է տվյալ հաստատության մանկավարժ:

12. Խորհրդի անդամի լիազորությունները, լիազորությունների դադարեցման հիմքերը, պարտավորությունները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

13. Հաստատության ենթակայության փոփոխության դեպքում լիազորված մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամների ընդգրկվածության համամասնությունը համապատասխանեցվում է սույն կարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ կամ 7-րդ կետերի պահանջներին:

14. Օրենքով սահմանված դեպքերում՝ խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում նրան առաջադրող մարմինը քսանօրյա ժամկետում առաջադրում է նոր թեկնածու՝ համաձայն սույն կարգի:

15. Հաստատության տնօրենը չի կարող լինել տվյալ հաստատության խորհրդի կազմում:

16. Լիազորված մարմինը, հիմք ընդունելով հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների որոշումները, տասնօրյա ժամկետում, ըստ ենթակայության՝ հաստատում է խորհրդի անվանական կազմը կամ սույն կարգի պահանջների խախտման դեպքում՝ մերժում է խորհրդի անվանական կազմում առաջարկված անձի կամ անձանց թեկնածությունը:

17. Խորհրդի առաջին նիստը վարում է տարիքով ավագ խորհրդի անդամը:

18. Խորհուրդը փակ քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ.

Ընտրությունը չկայանալու դեպքում եռօրյա ժամկետում անցկացվում է կրկնակի քվեարկություն: Կրկնակի քվեարկությամբ ընտրությունը չկայանալու դեպքում ընտրված է համարվում առավել ձայն ստացած թեկնածուն:

Այս պայմանի անհնարինության դեպքում վիճակահանությամբ որոշվում է խորհրդի նախագահը: Վիճակահանությանը մասնակցում են առավել ձայն ստացած թեկնածուները:

19. Խորհրդի նիստերը գումարվում են հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում՝ ըստ հաստատված ժամանակացույցի, ինչպես նաև խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, լիազորված մարմնի, հաստատության տնօրենի կամ խորհրդի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Է. Գրիգորյան

ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ՏՈՒՆՆ Է ՀԱՅՈՒՆ...

Մուշեղ Իշխանի հայտնի բանաստեղծության վերնագիրն էր Շուշիի Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված բարեգործական դպրոցի 6-րդ և 7-րդ դասարաններում կազմակերպված Մայրենիի օրվան նվիրված դաս-միջոցառման կարգախոսը, որը նախաձեռնել էր մայրենիի ուսուցչուհի Փառանձեմ Գաբրիելյանը:

Ուսուցչուհին դասն սկսեց այն խոսքով, որ աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրենց սեփական լեզուն, և որ բոլոր ազգերի համար էլ իրենց լեզուն քաղցր է ու գեղեցիկ, իսկ հայերիս համար՝ առավել ևս: Մեջբերվեց Եղիշեի՝ տարբեր լեզուների մասին բնութագրումը. «Հունարենը մեղմ է, հռոմեական լեզուն՝ հզոր, հոներենը՝ ահաբեկող, ասորերենը՝ աղերսական, պարսկերենը՝ պերճ, գոթերենը՝ հեգնական, հայերենը՝ քաղցր, որ միաժամանակ այս բոլոր լեզուների հատկություններն է ամփոփում իր մեջ»:

Դասը շարունակվեց Վահան Թեքեյանի «Տաղ հայերեն լեզվին» բանաստեղծությամբ, որում ամբողջ դասի ոգին էր ամփոփված:

Քեզ, հայ լեզու, կսիրեմ մրգաստանի մը նման…

Ապա իրար հաջորդեցին հայ գրողների՝ հայոց լեզվին նվիրված բանաստեղծությունների արտասանությունները: Աշակերտները արտասանեցին Ստ. Նազարյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Ն. Զարյանի, Ե. Բազենի, Մ. Իշխանի, Հովի. Շիրազի, Սարմենի, Մարտիրոս Վեսպերի բանաստեղծություններից, որոնցով աշակերտները բացեցին իրենց սիրտը, արտահայտեցին իրենց անհուն սերը մայրենիի հանդեպ: Արտասանած բոլոր բանաստեղծությունները հնչում էին որպես կոչ և պատվար, որ հայը պիտի սիրի իր լեզուն, պահպանի ու չմոռանա այն, երկրագնդի որ ծագերում էլ որ ապրի:

Լեզվին նվիրված բանաստեղծությունները մեր ազգային հայրենասիրական պոեզիայի հարուստ գանձարանում մարգարտաշար մի մեծ շղթա են կազմում: Դժվար թե գտնվի մի ժողովուրդ, որն իր լեզվին նվիրված այնքան բանաստեղծություններ ունենա և իր լեզվի պահպանությանը միտված այնքան պատվերներ ուղղի իր մանուկներին: Այս պատվերը ծնվել է, իհարկե, մեր ժողովրդի պատմության մութ ու սարսափելի էջերից, մեր լեզվի ու մշակույթի գլխին դամոկլյան սրի պես կախված բազմաթիվ վտանգների ու կորստի զգացողությունից: Հազիվ թե աշխարհի մյուս ազգերի մեջ գտնվի մի մայր, որն իր զավակին, իր որդուն պատգամ հղելիս իբրև հորդոր կամ մաղթանք ասի՝

Թե մորդ անգամ մտքից հանես,
Քո մայր լեզուն չմոռանաս:

Աշակերտները արտասանեցին նաև մեր ոսկեղենիկ գրաբարով, արտասանեցին նաև միջին հայերենով, արևմտահայերեն և վերջապես արևելահայերեն բանաստեղծություններ՝ ցույց տալու համար մեր լեզվի զարգացման բոլոր փուլերում էլ իր քաղցրությունն ու քնքշությունը պահպանած լեզուն: Հետաքրքիր էին հնչում հատկապես օտար գրողների ու արվեստագետների կողմից հայոց լեզվի մասին արտահայտած ասույթները՝ շեշտելու համար այն փաստը, որ ոչ միայն մենք՝ հայերս ենք փառաբանում և գովերգում մեր լեզուն, այլ նաև օտարները, որոնք քիչ թե շատ առնչվել են նրան: Այստեղ ակամայից հիշում ես «Միմինո» կինոնկարը, երբ հայ հերոսը՝ «Ռուբիկ ջան»-ը, զրուցելով վրացի իր նորածանոթ ընկերոջ՝ Միմինոյի հետ, հրավիրում է նրան իր հայրենի Դիլիջան քաղաք՝ ասելով, որ իրենց քաղաքի ջուրը աշխարհում երկրորդ տեղն է գրավում: Միմինոն հեգնախառն և վիրավորված ասում է, թե գուցե առաջինն էլ Երևանում է: Իսկ ոչ պարծենկոտ ու համեստ Խաչիկյանը պատասխանում է. «Ոչ, Սան Ֆրանցիսկոյում»:

Ինչու՞ հիշեցինք կինոնկարի այս դրվագը: Որոշ օտարազգիների մոտ այն թյուր կարծիքը կա, որ մենք՝ հայերս, պարծենկոտ ու գլուխգովան ազգ ենք, որ սիրում ենք գովել այն ամեն-ամենը, ինչ մեզ է պատկանում, այդ թվում՝ նաև մեր լեզուն: Այդ թյուր կարծիքը հերքելու համար աշակերտները բազմաթիվ ասույթներ հիշեցին, որոնք իրենց ժամանակին տարբեր առիթներով հնչել էին օտարազգիների կողմից՝ Բայրոնի, Հյուգոյի, Բրյուսովի, Գորկու, Մառի, Ֆեյդիի, այլոց խոսքերը, որոնցից մի քանիսը հարկ ենք համարում հիշատակել:

«Իմ իմացած լեզուների մեջ հայերենը բացառիկ է. նախ՝ որպես զարմանալի տրամաբանական լեզու, ապա նաև՝ իր ճկունությամբ, նոր բառեր կազմելու դյուրություններով»: (Ֆրեդ Ֆեյդի)

Իսկ իր «Թշվառներ» վեպի թարգմանության առիթով Վ. Հյուգոն ասում է. «Ձեր հնամենի լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն, դրա մեջ Արևելքն եմ տեսնում, դարերն եմ նշմարում այնտեղ»: Իսկ արևելագետ-ազգագրագետ Նիկողայոս Մառը հայոց լեզուն բնորոշում է որպես աղոթքի, աստվածային ճոխ ու աննման լեզու:

«Ճոխ է հայոց լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնասիրի այն». սա էլ Ջորջ Բայրոնի եզրահանգումն է, երբ նա, մի քանի տարի Վենետիկում ապրելով, Ս. Ղազար կղզու Մայրավանքում հայերեն սովորեց:

Մի քանի րոպե պոեզիայի աշխարհում ընկղմվելուց հետո դասալսող ուսուցիչները ունկնդիր դարձան «ստեղծագործական երկունքից ծնունդ առած» բանաստեղծությունների: Աշակերտներին մի քանի րոպե ժամանակ տրվեց՝ լսած բոլոր բանաստեղծություններից ստացած մնայուն տպավորությունները թղթին հանձնելու արձակ կամ չափածո: Եվ դասի ժամանակ մեր աշակերտների կողմից ծնվեցին մայրենի լեզվին նվիրված մի քանի ոտանավորներ:

Ոսկեղենիկ իմ հայ լեզու,
Արծվի պես վսեմ ես դու,
Բազեի պես անվախ ես դու,
Սոխակի պես չքնաղ ես դու.
Սիրում եմ քեզ, իմ երգեցիկ
Հայոց լեզու:

*

Լեզուն մեր զենքն է,
Լեզուն մեր դեմքն է,
Լեզուն մեր լույսն է
Համայն աշխարհում:

*

Լեզուն ես դու իմ մայրենի,
Մեր թշնամուց անպարտելի,
Հպարտ ու ինձ շատ սիրելի,
Քնքուշ, անուշ ու նազելի:
Դաժան օրեր շատ ես տեսել,
Բայց կանգուն ես միշտ մնացել,
Քեզ կսիրեմ ես մինչև մահ
Կփայփայեմ մորս նման:

Աշակերտները չմոռացան նաև իրենց ամենօրյա խոսակցական լեզուն՝ արցախյան բարբառը: Զարմանալի աշխուժություն պատեց երեխաներին, երբ իրենց ընկերները սկսեցին պատմել հեքիաթ՝ սեփական բարբառով: Նրանց գոհունակություն և հաճույք պատճառեց հատկապես Ս. Կապուտիկյանի «Ղարաբաղի բարբառը» բանաստեղծության արտասանությունը:

Դասն ամփոփվեց մի հետաքրքիր արարողությամբ. աշակերտները Մաշտոցի նկարի և իրենց ձեռքով պատրաստած, մանրանկարչական արվեստով զարդարված այբուբենի մոտ երդվեցին.

Երդվում եմ պահպանել քեզ որպես սերնդեսերունդ փոխանցած
Եվ ինձ վստահած տոհմական սրբություն,
Նվիրումով լրացնել քո մասունքանման կորուստները,
Նորոգել քո մագաղաթյա ազնվականությունը
Նոր ժամանակների հյութ ու ավիշով.
Քեզնով արտասանել միայն արդարության խոսքեր:
Երդվում եմ կրել քեզ շնչովս, արյունովս, այրումովս
Եվ ինձնով տանել-հաղորդել զավակներիս
Քո հավերժական կենդանությունը:
Երդվում եմ:

Մայրենիի օրվան նախորդած Գիրք նվիրելու օրն էլ աննկատ չանցավ: Այդ օրվա ընթացքում մայրենիից բացառիկ 10 գնահատական ստացած դպրոցի 4 աշակերտների տնօրինությունը գեղարվեստական գրքեր նվիրեց:

Գոհար ՄԿՐՏՉՅԱՆ
Շուշիի Դանիել Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված բարեգործական դպրոցի տնօրեն

ԳՐԱՍԵՐ

ՀԱՐԿԱՎՈՐ Է ՍԹԱՓՎԵԼ ԵՎ ՍԿՍԵԼ ԱՅՆՏԵՂԻՑ, ՈՐՏԵՂԻՑ ՊԵՏՔ Է ՍԿՍԵԼ

Ընթերցանությունը ամեն բանե առաջ դպրոց է, ուսում, կրթություն:

Լ.Շանթ

Հայ ժողովրդի մշակութային ժառանգության հարուստ գանձարանում ամենամեծ և թանկագին հրաշալիքը հայոց լեզուն է: Նա մեզ ծառայում է այսօր նույն հաջողությամբ, ինչպես ծառայում էր 200 տարի սրանից առաջ: Նրանով է ծնունդ առել ու ծաղկել հայ գրականությունը, գրականություն, որը մեր ազգի հոգևոր զորությունն է, մեր անկախ պետականության և ազգային միասնության գաղափարական հենարանը, մեր ինքնության դիմագիծն ու նկարագիրը պահողը: Այդ իսկ պատճառով մեր կրթական համակարգի ամուր և արդյունավետ գործունեության համար, որպես գաղափարական պայքարի կարևոր զենքեր, պետք է ծառայեն մեր լեզուն ու մեր գրականությունը:

Մեզ՝ հայերիս, օդի, ջրի պես անհրաժեշտ են այդ զենքերը: Նրանցով զինվելու համար պետք է խորը ուսումնասիրել ու լավ սովորել մեր լեզուն, փրկել այն աղավաղումներից, պահել ու պահպանել, պետք է սիրել գիրքը և շատ կարդալ:

Ես ուզում եմ խոսել մի ցավոտ հարցի մասին, որն այսօր շատ-շատերին է մտահոգում:

Դեռևս իր ժամանակին մեծն Պարույր Սևակը, չթաքցնելով իր մտավախությունը, այսպես է ասել. «Մագաղաթից գրականություն, պատմություն կերտած ժողովրդի նոր սերունդը հեռանում է գրքից: Պակասում է հոգևոր հացով սնվող հայերի թիվը: Հոգու երկրաշարժ է, հափրած ուղեղների ու որկրամոլների առատություն: Մի՞թե ոգու սովն է եկել...»:

Ես՝ որպես ուսուցչուհի, մի ներքին վախով եմ անդրադառնում այս տողերին և այն կարծիքին եմ, որ թե՛ դպրոցը, թե՛ ընտանիքը և թե՛ հասարակությունը պետք է լուրջ աշխատանք տանեն այս ուղղությամբ: Չպետք է թույլ տանք, որ մեր երեխաները ապրեն գրքերից հեռու, ընթերցանությունից կտրված: Այո՛, հարկավոր է սթափվել, սկսել այնտեղից, որտեղից պետք է սկսել: Ընթերցասիրությունը, գրքասիրությունը երեխաների մեջ պետք է պատվաստել դեռ վաղ տարիքից:

Այս կարևոր խնդրի շուրջ ահա թե ինչպես է արտահայտվել հայ նշանավոր գրող, մանկավարժ Լևոն Շանթը. «Պետք է ամեն մարդ համակվի այն խորին ճշմարտությամբ, թե ով օրական գոնե 1 ժամ կհատկացնե կանոնավոր, հանգիստ և ընտրովի ընթերցանության, անիկա ոչ միայն իր վայելքին ու բարձրացման կաշխատի, այլև կծառայե ամբողջ մարդկության մարդկայնացմանը, նրբացմանը, ազնվացմանը»: Իսկ անգլիացի գրող, հրապարակախոս Ջոզեֆ Ադիսոնը ընթերցանությունը համարել է ամենալավ դեղամիջոցը մարդու միտքը թարմացնելու և, այսպես ասած, առողջ պահելու համար:

Այո՛, ամեն օր սպորտով զբաղվելով՝ մենք մեր մարմինն ենք աշխատեցնում, կոփում, իսկ շարունակական ընթերցանությունը հարստացնում է միտքը, զգացումները, հոգին:

Ցավոք, գիտության ու տեխնիկայի այս վերընթաց ժամանակաշրջանում գիրքը կարծես մղվել է ետնախորշ՝ իր իշխանությունը տալով համակարգչին, որը գիտելիքների յուրօրինակ աղբյուր է դարձել:

Իհարկե, համակարգչի բազում հնարավորություններն ու արժանիքները, այդ տեխնոլոգիային լավ տիրապետելը մենք չենք թերագնահատում, ընդհակառակը, գովում ենք, բայց գրական հարստության ադամանդյա փայլը միայն գիրք ընթերցելիս է շողարձակվում:

Դա կհասկանա միայն նա, ով կարդացել է շատ գրքեր և դեռ շարունակում է կարդալ:

Այս նոր տարում «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերությունը Արցախի մանուկներին հետաքրքիր անակնկալ է մատուցել: Մեր գյուղի՝ Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի՝ առաջինից վեցերորդ դասարանների բոլոր աշակերտները իրենց Ամանորի նվերների մեջ մի հաճելի գիրք են գտել:

Ոչ միայն երեխաներին, այլև մեզ՝ ուսուցիչներիս, դա շատ է ուրախացրել: Ցմեռային արձակուրդներից հետո այդ դասարանների աշակերտների հետ հանդիպելով՝ նրանց բոլորին այս հարցն եմ առաջադրել. «Նվեր-գիրքը կարդացե՞լ եք, հետաքրքի՞ր էր»: Պատասխանները աշխույժ էին ու դրական:

Այս փաստից հետո եկել եմ այն եզրակացության, որ ծնողը իր դպրոցահասակ երեխայի համար պատեհ թե անպատեհ առիթներով փոխանակ տարբեր տեսակի խաղալիքներ գնի, ավելի լավ է մեծ ուշադրություն դարձնի երեխայի տնային ընթերցանության հարցին, նրան գրքեր հաճախակի նվիրի և օրական որոշ ժամանակ հատկացնի երեխայի բարձրաձայն ընթերցանությունը ստուգելու, լսելու համար:

Երեխայի համար տհաճ է նույն դասանյութը մի քանի անգամ կարդալը: Այդ միօրինակ աշխատանքը նրան ձանձրույթ է պատճառում, հոգնեցնում: Նոր հեքիաթի կամ պատմվածքի ընթերցումը արդեն հետաքրքիր կլինի, երեխայի մոտ էլ կմշակի ընթերցելու տեխնիկա, կօգնի ուսմանը, բառապաշարի հարստացմանը, իսկ ծնողի ու երեխայի միջև նոր հոգևոր կապ կստեղծվի:

Շատ ողջունելի կլինի, որ բոլոր դպրոցներում ուսուցիչները, առավել ևս գրականության ուսուցիչներն ու դասղեկները, լուրջ ուշադրություն դարձնեն ընթերցասիրության պատվաստման աշխատանքներին: Այն մանկավարժական, դաստիարակչական աշխատանքի մի կարևոր բնագավառ է: Դրա համար էլ պետք է գրքի քննարկումներ, գրական խաղեր, վիկտորինաներ, գրքի շաբաթներ հաճախակի անցկացնեն, հանձնարարեն գրել շարադրություններ կարդացած գրքի, սիրած հերոսի մասին: Սրանք այն կենդանի դրական ազդակներն են, որոնք կնպաստեն երեխաների մեջ ընթերցասիրության ձևավորմանը: Ես դրանում համոզվել եմ սեփական փորձով:

Հիշում եմ՝ իմ նախկին 7-րդ դասարանի աշակերտների հետ անց էի կացրել զրույց «Գիրքը բույսի նման է: Երկուսն էլ թթվածին են արտադրում» հետաքրքիր թեմայով:

Զրույցի ընթացքում երեխաները շատ բան իմացան, ինչպես նաև հասկացան, որ գիրքը ճանապարհ է, որը տանում է դեպի իմացություն, դեպի կատարյալը, որ գիրքը մի հզոր ուժ է, որով օժտվում է կարդացողը միայն, իսկ իրենք սահմանափակվում էին միայն օրվա դասերով՝ անտեսելով իրենց ամենահավատարիմ ընկերոջը: Գրքեր քիչ էին ընթերցում ու անմիջապես խոստացան կապվել գրադարանի հետ, իրենց ազատ ժամերը նվիրել ընթերցանությանը:

Քանի դեռ տպավորությունը թարմ էր, գրեցի պատի թերթ «Գիրքը գիտելիքների աղբյուր է» խորագրով: Թերթի առաջին մասում՝ առաջնորդող հոդվածի մեջ, պատմել եմ գրքերի՝ այդ գունագեղ աշխարհի ու նրանց հրաշագործ զորության մասին, այն գրքերի մասին, որոնք պարտադիր են բոլոր դասարանների աշակերտների համար, զետեղել եմ ասույթներ գրքի մասին, իսկ երկրորդը՝ «Ինչ եմ կարդացել» հատվածում, դասարանի 17 աշակերտների անունով պատի թերթի վրա գրպանիկներ եմ փակցրել ու նրանց մանրամասն բացատրել իմ նպատակը:

Թերթը լույս ընծայելուց հետո դասարանում մի յուրօրինակ ընթերցանության մրցույթ էր սկսվել: Աշակերտներից յուրաքանչյուրը ձգտում էր, որ իրեն հատկացված գրպանիկում ընթերցած գրքերի ցանկը առավել շատ լինի: Ես իմ անձնական գրքերն էի նրանց տրամադրում, իսկ ազատ կամ արտադասարանական ընթերցանության ժամերին մեծ աշխույժով ինձ հետ կիսվում էին իրենց տպավորություններով, հարցնում էին այն անծանոթ բառերի բացատրությունը, որոնց իմաստը չէին հասկացել, ոմանք էլ արտահայտիչ ընթերցում էին իրենց կարդացած գրքի դուր եկած հատվածները, որոնք իմ խորհրդով արտագրել էին գրականության տետրերում: Պետք է ասեմ, որ իմ այս նախաձեռնությունը մի քանի նպատակ էր հետապնդում: Առաջին հերթին ուզում էի աշակերտներին նախապատրաստել ծրագրային նյութերի ուսումնասիրմանը, ընդլայնել ու խորացնել ստացած գիտելիքները, այնուհետև հարստացնել բառապաշարը, զարգացնել ստեղծագործական միտքը և, վերջապես, հասնել այն բանին, որ ընթերցանությունը դառնա նրանց ներքին, հոգեկան պահանջը:

Մեր դպրոցում հունվարի 21-ից մայրենիի միամսյակ էր հայտարարված: Մայրենիի օրվան նվիրված իմ նոր միջոցառումների ու զրույցների ցանկում տեղ է գտել նաև 6-րդ դասարանի «Մայրենի»-ի դասագրքում զետեղված՝ Աղասի Այվազյանի «Գրախանութ» ստեղծագործությունը:

Գրական դատը, որ կազմակերպում եմ այդ դասից քաղած տվյալների հիման վրա, կորած արդարությունը վերականգնելուց բացի ուզում է նաև սեր ներշնչել դեպի գեղարվեստական գիրքը, ընթերցանությունը:

Հույս ունեմ, որ այդ ստեղծագործության գլխավոր հերոսը՝ այն փոքրիկ տղան, դրական վառ օրինակ կծառայի մեր դպրոցի բոլոր աշակերտների համար:

Եկեք մեր երեխաներին, մեր աշակերտներին լավ ու համոզիչ բացատրենք գրքի կարևորությունը և ընթերցասիրության ծիլեր արձակենք նրանց հոգում. չէ՞ որ, իրոք, գիրքը այն օգտակար բույսն է, որ իր արտադրած թթվածնով լուռ ու աննկատ կյանքի գորշությունից մաքրում, պաշտպանում է մարդուն:

Լաուրա ԱԼԹՈՒՆՅԱՆ
Հադրութի շրջ. Մեծ Թաղերի Ա.Խանփերյանցի անվ. միջն. դպրոցի հ.լեզվի ու գրականության ուսուցչուհի, ՍԴԱԿ

Շնորհավորանք

ԱՆՄՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅԱՄԲ

Նա մեկն է այն մարդկանցից, ովքեր սևակյան բնութագրմամբ.

Ընդունում են ու տանում են
Ամեն հարված,
Բայց մնում են
Էլի կյանքին սիրահարված:

Ֆիզիկայի լավագույն մասնագետ և փորձառու մանկավարժ, Վանքի Գ.Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Վարյա Ավանեսյանի մասին է խոսքը:

Կան մարդկային խառնվածքը ամբողջովին ներկայացնող ընդգծված բնորոշիչներ, որոնց օգնությամբ միայն կարելի է թանձր գույներով խտացնել ու կերտել մարդ - անհատի կերպարը, ինչպիսին նա է:

Ծնվել է 1955թ. Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում: Ոսկե մեդալով ավարտելով Առաջածորի միջնակարգ դպրոցը և գերազանցությամբ՝ բուհը, նա տաքուկ տեղեր չորոնեց, այլ որոշեց գնալ ամենահեռավոր՝ Շամխորի շրջանի Աքաբեկ հայկական գյուղը և իր գործունեությունը սկսել այնտեղից, ինչպես ինքն է ասում. «Հայրենիքը սկսվում է սահմաններից» կարգախոսով, իսկ հայրենասիրությունը սկիզբ էր առել ծնողներից: Այնուհետև մանկավարժական գործունեությունը շարունակել է Չարդախլու փառահեղ գյուղի Հովհ.Բաղրամյանի անվան միջնակարգ դպրոցում, որտեղ էլ կայացել է որպես ուսուցիչ: Մշտապես նրա հուշերը պտտվել այդ գյուղի խիզախ մարդկանց և մեծ մանկավարժների շուրջ իր գործունեության ողջ ընթացքում:

1986թ. տեղափոխվել է Արցախ և աշխատել Ծմակահողի, Գետավանի, Չափարի, Ստեփանակերտի հ.6 և հ.1 դպրոցներում, ինչպես նաև Կրթության ազգային ինստիտուտի Արցախի մասնաճյուղում՝ որպես ֆիզիկայի մասնագետ:

Տիկին Վարյա Ավանեսյանը աշխատել է դպրոցական գործի բոլոր օղակներում, անսահման սիրում է իր աշխատանքն ու երեխաներին, հպարտանում է իր լավ աշակերտներով:

Նա բազմակողմանի զարգացած ուսուցչուհի է, կիրթ ու կարդացած, նրան հետաքրքրում են ոչ միայն ֆիզիկան, այլև ամեն ինչ՝ իր ամենալայն պարագծով: Քաջատեղյակ է հայ և համաշխարհային գրականությանը, արվեստին, ունի մեծ հետաքրքրություն բոլոր առարկաների նկատմամբ:

Աշխատանքում խիստ պարտաճանաչ, կարգապահ, պատասխանատվության մեծ զգացումով լեցուն Վարյա Ավանեսյանը համալրում է ամենախելոք մանկավարժների, առաքինի և ազնիվ մարդկանց, երկրի արժանավոր քաղաքացիների շարքը:

Երբ սկսվեց Արցախյան շարժումը, նա ամբողջովին նետվեց նրա հորձանուտը: Իր հայրենասիրական ելույթներով և իր գործունեությամբ միշտ ոգևորել և համախմբել է ժողովրդին, հետագայում՝ սատարել կռվողներին ու մինչև այսօր էլ իր մարտական կեցվածքով և գործունեությամբ ծառայում է հայրենիքին, ինչպես հարկն է:

Իր աշակերտներին նա դաստիարակում է ազնվության, արդարության, ընկերասիրության և հայրենիքի պաշտպանության ոգով:

1988թ. ապրիլի 24-ին մի խումբ հայրենասերների հետ Գանձասարում առաջին անգամ կազմակերպել է Հայոց եղեռնին նվիրված միջոցառում:

Իր աշխատանքային տարիներին կազմակերպել է բազմաթիվ և բազմաբնույթ միջոցառումներ: Վ.Ավանեսյանը երկու բարդ առարկա է դասավանդում՝ ֆիզիկա և շախմատ:

Նա մի քանի անգամ մասնակցել է շաշկու և շախմատի՝ մայրաքաղաքում կազմակերպված թիմային առաջնություններին և գրավել առաջին տեղը:

2000թ. մասնակցել է Առաջին մանկավարժական ընթերցումներին և ֆիզիկայից ստացել մրցանակ:

Չափար գյուղի դպրոցում աշխատելու ժամանակ շրջանում ճանաչվել է որպես ֆիզիկայի լավագույն ուսուցիչ:

2013թ. օգոստոսին Երևանի Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցում մասնակցել է Բենհուր Փախչանյանի հիշատակին նվիրված ուսուցիչների գիտամեթոդական սեմինար-մրցույթին և ճանաչվել հաղթող՝ պարգևատրվելով դիպլոմով և դրամական պարգևով:

Նա մեծ սիրով ու նվիրումով է մոտենում ստանձնած մանկավարժի և տնօրենի վեհ առաքելությանը, նրա համար աշխատանքում մանրուք չկա: Նրա և դպրոցի մանկավարժական մեծ կոլեկտիվի միջև գործում են համագործակցված և փոխըմբռնված հարաբերություններ:

Ստեղծագործաբար աշխատող, միշտ որոնումների մեջ, աշխատանքում պահանջկոտ ու հետաքրքրասեր, մեր սիրելի տնօրենը լսում և հաշվի է առնում նաև ուսուցիչների կարծիքը:

Այսօր նա 60 տարեկան է: Մանկավարժի կեցվածքով ու պահվածքով ամեն օր նա հայտնվում է նոր նպատակադրումների խաչուղիներում:

Նրա մոտ ամեն ինչ ասես «հարթ» լինի, աշխատանքում՝ պարկեշտ, օրինապահ, ընկերասեր, օժանդակող, ըմբռնող, «դժվար» կոլեկտիվ համախմբող:

Մեր սիրելի հոբելյարին մաղթենք արևշատություն, ուժ և ստեղծագործական եռանդի բազմապատկում այս շնորհակալ աշխատանքում, քանզի ամեն մի բովանդակալից կենսագրություն իր տեղն ունի արցախահայ պատմության էջերում: Նա հաճախ է հպարտանում իր ընկերներով, բարեկամներով և իր 3 երեխաներով, որոնք արժանավոր քաղաքացիներ են, հարգված մարդիկ:

Շնորհավոր ծնունդդ, սիրելի գործընկեր և տնօրեն, նորանոր բարձունքների նվաճման ճանապարհիդ թող երկար ճառագի արևը, և նրա լույսը լինի Քեզ ուղեկից:

Վանքի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԼԵԶՎԱՍԵՐ

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ Է ՊԵՏՔ

Բոլորս պարտավոր ենք խոսել կիրթ, մաքուր հայերենով: Երբ այս տեսանկյունից վեր ենք լուծում մեր խոսքը, ապա գոհանալու քիչ բան ենք գտնում, շատ-շատերս ոչ միայն գրագետ չենք խոսում, այլև չենք կարողանում ճիշտ ձևակերպել ասելիքը, թույլ ենք տալիս բազմաթիվ ու բազմատեսակ սխալներ. խոսում ենք անկիրթ, ոչ գրագետ: Եվ այս վիճակի համար շատերը մեղադրում են դպրոցին: Սրա մեջ ճշմարտություն կա, բայց չպետք է մոռանալ, որ կիրթ խոսելու հիմքերը դրվում են ամենից առաջ տանը, երբ երեխան սկսում է թոթովել առաջին բառերը, կազմել առաջին նախադասությունները: Լեզվագործածության կարողությունը մշակվում է տարիների ընթացքում, և որոշիչ դեր են կատարում մի շարք գումարելիներ՝ պայմանները, հանգամանքները, միջավայրը, որոնցում զարգանում են խոսելու ունակությունները, մշակվում կիրթ խոսքի հմտություններ: Եթե ընդհանրացված ասենք, ապա այդ գումարելիներն են ընտանիքը, մանկապարտեզը, դպրոցը, հասարակական միջավայրը: Խոսենք այդ գումարելիներից մեկի՝ ընտանիքի մասին:

Հենց սկզբից շեշտենք, որ կիրթ խոսքի կարողությունների մշակման մեջ ամենավճռական դերը պատկանում է մորը:

Երեխան առաջին բառերը լսում և սովորում է ընտանիքում՝ ծնողներից, պապիկից ու տատիկից, քրոջից ու եղբորից, հարազատներից: Նա մեծերին ընդօրինակում է նաև խոսքով: Ընդ որում՝ բավականին արագ է սովորում բառերը, և արդեն երկու տարեկանում իմանում է շուրջ երեք հարյուր, երեք տարեկանում՝ չորս- հինգ անգամ ավելի բառեր: Հասկանալի է՝ դրանք հիմնականում մեզ շրջապատող առարկաների, անձերի, նրանց հատկանիշների, գործողությունների անուններ են, որ լսում է և գործածում: Երեխայից հաճախ կարելի է լսել «Սա ի՞նչ է» հարցը: Եվ ինչ լսեց, այն էլ սովորում է, ինչպես լսեց, այնպես էլ ասում է, դրան է վարժվում: Բառը մի քանի անգամ գործածելը դառնում է սովորություն, իսկ սովորությունը փոխելը շատ դժվար է, շատ ջանքեր, հետևողականություն ու հոգատարություն է պահանջվում: Եթե մայրը գնել է ելակ, և երեխայի հարցին պատասխանում է, որ կլուբնիկ է բերել, ապա երեխան այդպես էլ սովորում է. հաջորդ օրը խնդրում է, որ իր համար կլուբնիկ բերեն, շատ է սիրում: Ինչո՞ւ ծնողը չի ասում հայերենը: Մի՞թե սա անփույթ, անտարբեր, անպատասխանատու վերաբերմունքի արտահայտություն չէ, որ մինչև վերջ էլ ոմանք գործածում են առաջին անգամ ընտանիքում ծնողներից լսած այնպիսի ոչ հայերեն բառեր, ինչպիսիք են՝ *կուխնի, պեպելնիցա, չայ, սպիշկա, կարիդոր, գարդիրոբ, վեդրա, կուբիկ, տետրակ, խալադիլնիկ, վարոտ, պոլ, պատալոկ, սոկ, մաշին, ռուլ* և այլն, դրանք խառնում է հայերեն բառերին, աղավաղում լեզուն:

Եկեք միշտ հիշենք, որ ամենաանկիրթ խոսքը լեզվախառնությունն է: Հիշենք, որ ոչ միայն երեխան, այլև տարիքով մարդը, եթե որևէ առարկայի անուն առաջին անգամ լսում է ոչ հայերեն բառով, հետագայում շատ դժվարությամբ է այդ բառից հրաժարվում, հայերեն համարժեքը գործածում: Այս բանը մեզ պարտավորեցնում է զգույշ լինել, ուշադիր լինել երեխայի ներկայությամբ ասվող ամեն մի բառի, արտահայտության նկատմամբ: Դա ընտանեկան դաստիարակության պարտադիր պայման է: Բոլոր ծնողներն էլ ուզում են, որ երեխան դաստիարակված լինի նաև խոսքի առումով: Ուզում են, այո՛, բայց քիչ բան են անում:

Այնինչ պարտավոր են և կարող են շատ բան անել, մանավանդ մեր օրերում, երբ գրեթե բոլորն ունեն միջնակարգ կրթություն (էլ չենք խոսում բարձրագույն կրթության մասին), դպրոցում անցել են հայոց լեզվի համակարգված դասընթացը, լեզվի հիմնական կանոնները ու օրենքները, դրան գումարած՝ գրքերի, թերթերի ընթերցումը, հեռուստատեսությունը, լեզվին նվիրված հաղորդումները, կինոն, թատրոնը և այլն:

Ինչքան էլ զարմանալի է, մեր օրերում դեռ կան ծնողներ, որոնք ուրախանում են, որ իրենց երեխան խոսում է մեծավարի. գործածում է տարիքին ոչ սազական արտահայտություններ, կոպիտ բառեր է ասում, երբեմն՝ նույնիսկ հայհոյանք: Դրանով նրանք խրախուսում են իրենց երեխաներին, փոքրերին:

Այս ներողամտության և խրախուսման պայմաններում է, որ երեխան համարձակվում ու մեծին « Դու դմբո ես, բան չես հասկանում», «Լավ եմ անում, բա դու ո՞վ ես», «Դա քեզ չի վերաբերում», «Գնա քո տեղը նստիր ու մի խառնվիր իմ գործերին» և էլի ուրիշ վիրավորական բառեր է ասում: Նման դեպքերում ոմանք այսպես են դատում. «Երեխա է, ոչինչ չի հասկանում, կմեծանա, կհասկանա»:

Բայց չէ՞ որ դրանով բնավորություն է ձևավորվում: Ճիշտ է, երեխան կարող է դրանց իմաստը անհրաժեշտ ձևով չհասկանալ, սակայն հասկանալուց հետո էլ հեշտ չի լինի հրաժարվել «սիրած» արտահայտությունից: Լավագույն դեպքում կփոխվի հասցեատերը՝ ընկերները, հասակակիցները, ուրիշներ: Ինչո՞ւ սովորեցնենք վատը և հետո մտածենք լավի մասին:

Երեխան որտե՞ղ պետք է սովորի մարդկային հարաբերություններում այնքա՜ն անհրաժեշտ քաղաքավարական արտահայտությունները, դիմելու կիրթ ձևը և դրանք ըստ հարկի գործածելը՝ *ներեցե՛ք, խնդրում եմ, թույլ տվեք, շնորհակալություն* և այլն, և այլն: Մենք այն կարծիքին չենք, որ այդպիսի արտահայտություններով պետք է դիմել ընտանիքի անդամներին, ամենասովորական առիթով, այլապես դրանք կարժեզրկվեն, կդառնան մի տեսակ կեղծ, շինծու, ձևական:

Բարեկամների, ընկերների, հարևանների, անծանոթների հետ շփվելու առիթներ շատ են լինում: Այս պարագայում, այս դեպքերում է, որ պիտի գործածվեն նշված արտահայտությունները:

Տեղն է նշել, որ «քաղաքավարի» որոշ մարդիկ մոռացել են ողջույնի ու հրաժեշտի ավանդական ձևերը՝ *բարի գիշեր, բարի լույս, մնաք բարով, գնաք բարով, բարի գալուստ, բարով ես եկել*(սրանք նաև մաղթանքներ են), և դրանց փոխարեն ամենուր գործածում են *հաջող* բառը, որն այնքան էլ գեղեցիկ չի հնչում: Ընտանիքում գրական լեզվի գեղեցկությունների նկատմամբ սեր ու հարգանք առաջացնելու լավագույն միջոցը ընթերցանությունն է, բացատրական ընթերցանությունը, որոշ բառեր, արտահայտություններ կրկնել տալը, կարդացածը վերարտադրելը, պատմելը՝ ընթացքում ուղղելով սխալները: Պետք է ձգտել այն բանին, որ երեխան անգիրներ շատ սովորի, դրանք հաճախակի արտասանի. սա նույնպես կարևոր հանգամանք է: Չէ՞ որ բանավոր խոսքը ըստ էության գրավորի հիմքն է: Չմոռանանք և այն, որ բոլորս մի քանի անգամ ավելի շատ խոսում ենք, քան գրում: Այստեղից էլ՝ բանավոր խոսքի մշակման, հղկման կարևորությունը: Խոսքը ևս սովորություն է, բնավորություն, որի հիմքը դրվում է ընտանիքում: Ասել է թե՝ յուրաքանչյուրս պարտավոր է հաշիվ տալ ամեն մի բառի, ամեն մի արտահայտության համար, օրինակ ծառայել երեխաներին մեր կիրթ, չափած-ձևած խոսքով: Կարծում ենք՝ սա պիտի մտահոգի բոլոր ծնողներին, ուսուցիչներին, դաստիարակներին: Մենք պիտի միշտ հիշենք, որ ընթերցանությունը մի պատուհան է, որի միջով երեխան տեսնում ու ճանաչում է աշխարհը և ինքն իրեն: Նախքան առաջին տողը, առաջին բառը կարդալը՝ երեխան պետք է լսի մեծի՝ ուսուցչի, ծնողի ընթերցանությունը, զգա գեղարվեստական պատկերների գեղեցկությունը: Երեխան չի տեսնի, չի զգա շրջապատող աշխարհի հմայքն ու հրապույրը, եթե չի զգացել գրքում կարդացած բառի գեղեցկությունը: Ասել է թե՝ ծնողը հետամուտ պետք է լինի, որ ընթերցանությունը երեխայի համար դառնա հոգևոր պահանջմունք: Մի՛շտ և ամենո՛ւր: Ճիշտ ընտրել, թե ինչ կարդալ՝ ծնողի, ուսուցչի, դաստիարակի բացառիկ կարևոր խնդիրն է: Ցավոք, ընթերցանության գրքերում բացակայում են գեղարվեստական շատ արժեքներ, որոնք մատչելի են երեխաների ըմբռնողությանը: Մի խնդիր ևս: Երեխայի կողմից շրջապատող աշխարհը և ինքն իրեն ճանաչելը չպետք է միակողմանի լինի: Ճանաչելով աշխարհն ու ինքն իրեն՝ երեխան պարտավոր է կամաց-կամաց իրեն պատասխանատու զգալ հոգևոր ու նյութական այն արժեքների համար, որ ստեղծել են ավագ սերունդները: Այս ամենին հասնելու համար հետևողական աշխատանք է պետք: Տանը՝ ծնողի, դպրոցում՝ ուսուցչի կողմից: Այս խնդրին, սակայն, շատ հաճախ պատշաճ ուշադրություն չի դարձվում: Բանն այն է, որ բոլոր ուսուցիչները չէ, որ իրենց աշխատանքը վերակառուցել են ժամանակի պահանջներին համապատասխան:

Լեզուն կենդանի, անընդհատ փոփոխվող ու զարգացող երևույթ է՝ ապրող, շնչող, իսկ գեղարվեստական գրականությունը դարձել է մեր կյանքի անբաժան մասը: Հետևաբար, լեզվի ու գրականության ուսուցումը չպետք է կտրել կյանքից. այն պետք է դարձնել կենդանի, աշխույժ, գրավիչ: Անհրաժեշտ է գործն այնպես կազմակերպել, որ յուրաքանչյուր աշակերտ անհամբեր սպասի լեզվի և գրականության դասին, հաճույք ստանա դրանից: Սա իր հերթին ենթադրում է ուսուցչի վարպետության, պատասխանատվության, տեսական գիտելիքների բարձր մակարդակ, մանկավարժական հմտություն, արվեստ, սրտացավություն:

Միքայել ԲԱԼՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՇՆՈՒՆԴ, ԳՈՐԾԸՆԿԵՐ

Ուսուցիչը կյանքի հիմնասյունն է: Ուսուցիչը կառուցում է երեխայի հոգին, ձևավորում նրա էությունը, իր մեջ ամբարած մտավոր հարստությունը կաթիլ-կաթիլ փոխանցում երեխային՝ թևավորելով և ճախր տալով նրան, իր հոգու և մտքի ճառագայթներով լուսավորելով նրա ճանապարհը:

Նման ուսուցիչներից է Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցի դասվար Օֆելյա Հարությունյանը:

Ծնվել է 1955 թ. փետրվարի 24-ին Մարտակերտի շրջանի Գառնաքար գյուղում՝ ծառայողի ընտանիքում: 1972 թ. ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը, 1978թ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկա» բաժինը:

Սկզբնական շրջանում աշխատել է հայրենի գյուղի դպրոցում, իսկ 1991թ. սեպտեմբերից առայսօր նա իր աշխատանքային գործունեությունը շարունակում է Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցում:

Խստապահանջ է, անհանգիստ, պրպտող: Իր աշխատանքային գործունեության ընթացքում կրթել ու դաստիարակել է հարյուրավոր ազնիվ մարդկանց, որոնք այսօր պաշտպանում են մեր հայրենիքի սահմանները, աշխատում են տարբեր ոլորտներում և նպաստում մեր հայրենիքի շենացմանը: Նրա յուրաքանչյուր դաս յուրովի է, հետաքրքիր և ուսանելի: Դասավանդում է ժամանակակից մեթոդներով, ձգտում է ավելի հետաքրքիր և մատչելի դարձնել դասապրոցեսը:

Այսօր նա 60 տարեկան է և շարունակում է ոչ պակաս եռանդով ու պատասխանատվությամբ աշխատել:

Սիրելի՛ գործընկեր, շնորհավորելով 60-ամյա հոբելյանդ, մաղթում ենք առողջություն, մանկավարժական բեղմնավոր գործունեություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ՝ ի շահ աճող սերնդի կրթության և դաստիարակության վեհ գործի:

Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Վերջին շրջանում մանկական ագրեսիվության թեման հրատապ է դարձել: Մեր հասարակության լարված, անկայուն սոցիալ-տնտեսական դրությունը բերում է տագնապ և հոգևոր ունայնություն: Այդ ամենն էապես անդրադառնում է նաև երեխաների հոգեկան վիճակի վրա՝ հաճախ դառնալով մանկական դաժանության, ագրեսիվության պատճառ: Բացի դրանից, երեխաների ագրեսիվ վարքը ոչ թե պարզապես մանկական չարաճճիության դրսևորում է, այլ միանգամայն լուրջ՝ սոցիալական, մանկավարժական և հոգեբանական խնդիր: Ագրեսիվ երեխաների հարաբերությունները շրջապատողների հետ գրեթե միշտ լարված են լինում: Եվ այս ամենից բացի հարկ է հաշվի առնել, որ ագրեսիվությունը, դառնալով կայուն անձնային գիծ, տարիքային զարգացման հետագա փուլերում բացասաբար է անդրադառնում երեխաների անձնային զարգացման և սոցիալականացման գործընթացի վրա: Կրտսեր դպրոցական տարիքը, ինչպես յուրաքանչյուր փուլ, ունի իր ուրույն դերն անձի ձևավորման և զարգացման գործում: Այն մանկության կարևորագույն շրջաններից է և ընդգրկում է երեխայի կյանքի 6-7 տարեկանից մինչև 9-10 տարեկան հասակը, որը համապատասխանում է նրա ուսուցմանը տարրական (1-4-րդ) դասարաններում:

Մի շարք խնդիրներ առաջանում են ծնողների անտարբերությունից և, այսպես ասած, «հավես չունենալուց», ինչը պայթյունավտանգ է նախ՝ իր, ապա՝ հասարակության համար: Կարծում ենք՝ ագրեսիվություն երևույթը չպետք է այսքան հասունանար, սակայն փաստ է, որ այն աճող սերնդի մեջ գլուխ բարձրացրեց մեր նորանկախ ու նորաստեղծ պետության զարգացմանը զուգընթաց: Ինչ խոսք, սա միայն մանկավարժների խնդիրը չէ, այն պահանջում է համակողմանի՝ ծնող-ուսուցիչ-հոգեբան-համայնք, աշխատանք: Առաջին հերթին սովորողը պետք է ունենա կայուն հոգեկան վիճակ, իսկ դա բխում է նրա կեցությունից, ընտանեկան վիճակից, նրա անձի նկատմամբ հարգանքից: Ընտանիքը մեծ դեր ունի ագրեսիվ և ոչ ագրեսիվ վարքի դրսևորման գործում: Եթե սովորողն իր ընտանիքում անընդհատ ականատես է լինում հրմշտոցների, կտտանքների, հայհոյանքների՝ անկախ այն բանից, թե դա նրան վերաբերում է, թե՝ ոչ, ակամայից նա նույնպիսի վարք է դրսևորում շրջապատում կամ վախենում է շփվել իր հասակակիցների հետ. սա հոգեբանական մեծ խնդիր է:

Վախը, սթրեսը և ագրեսիան ծնվում են անառողջ միջավայրից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխան իր զարգացման կրտսեր օղակում բառապաշարի որոշակի կուտակում է ձեռք բերում հեռուստատեսությամբ ֆիլմեր, մուլտֆիլմեր դիտելուց, ուստի այս պարագայում ևս պետք է հետևողական լինել: Հատկապես կարևոր դեր և գործ ունեն ծնողները:

Ագրեսիվ վարքի շտկման, փոփոխման և ձևավորման հարցում մեծ է ծնողի աշխատանքը: Կարծում ենք՝ գեղարվեստական գրականությամբ, հեքիաթների ընթերցանությամբ, չարի ու բարու կերպարների վերլուծությամբ վեր հանելով այն խնդիրները, որոնք առկա են երեխայի մեջ, համեմատություններ անելով խելացի հարցադրմամբ, արդյունքը շոշափելի կլինի (անպայման հաշվի առնելով երեխայի տարիքային անհատական առանձնահատկությունները): Որոշ երեխաներ կհամեմատեն իրենց վարքը հեքիաթի հերոսի հետ, կփորձեն շտկել իրենց, կձգտեն լինել ավելի լավ, առանց կողմնակի խրատների և սպառնալիքների, որ շատ հաճախ են փոխարինում դաստիարակություն ասածին: Այսպիսով, բոլոր այն ծնողները, ովքեր չեն գիտակցում առկա խնդիրը և տրամաբանական տհաճ հետևանքները, պետք է լինեն աչալուրջ, սթափ դատեն, չմատնեն անտարբերության. չէ՞ որ անտարբերությունը թաքնված ռումբ է, օրերից մի՛ օր հաստատ կպայթի: Որպեսզի զերծ մնանք հնարավոր աղետից, մի տրվեք ժամանակի և ձեր իսկ էգոիստական մոտեցմանը: Գեղեցիկ հագուստ գնելը կամ լավ, շքեղ հեռախոս տրամադրելը դեռևս չի նշանակում ունենալ դաստիարակված երեխա: Ուստի, պետք է անել ամեն հնարավորը՝ բարեկիրթ սերունդ և ըստ այդմ՝ բարեկեցիկ ապագա ունենալու համար:

Անուշ ՔԱՄԱԼՅԱՆ
Մարտունու շրջանի
Քարահունջի հիմն.դպրոցի դասվար

ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

ՀԻՇՈՒՄ ԵՆ, ՄԵԾԱՐՈՒՄ

Թշվառ է այն ազգը, որ չի մեծարում ու ապահովում իր ուսուցչին:
Ղ. Աղայան

Անցյալն ու անցավորներին հիշելը և արժանվույնս գնահատելը լավ սովորություն է, որ ավանդույթ դառնալու միտումով սկիզբ ազդարարվեց ավանդույթներով հարուստ Խնապատի միջնակարգ դպրոցում:

Նշվում էր դպրոցի նախկին ուսուցիչ, քիմիայի և կենսաբանության անվանի մասնագետ Վահան Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակը:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Զավեն Բեգլարյանը, որը տարաշերտ լսարանին ներկայացրեց մեծ մանկավարժի անցած լուսառաք ուղին:

Նա ցավով նշեց, որ մեր մանկավարժներից շատերը արժանիորեն գնահատվում են ոչ թե կենդանության օրոք, այլ մահից հետո:

Վահան Հովհաննիսյանը իր մանկավարժական 60-ամյա գործունեությունը սկսել է 7-րդ դասարանն ավարտելուց հետո (այն ժամանակ կրթությունը յոթնամյա էր): Աչքաբաց պատանուն վստահել են դասարան մտնել և ուսուցչություն անել: Իսկ երբ պայթեց Մեծ հայրենականը, նա զինվորագրվեց հայրենիքի փրկության գործին և վիրավոր տուն վերադարձավ՝ կուրծքը շքանշաններով ու մեդալներով զարդարված: Պետք է հատկապես ընդգծել այն հանգամանքը, որ Խորհրդային գերագույն հրամանատարի կողմից այն ժամանակ արժանացել էր 4 բարձր պարգևի՝ Հայրենական մեծ պատերազմում աչքի



ընկած ծառայության համար:

1934-35 ուստարում մանկավարժական գործունեություն է ծավալել Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում, որտեղ էլ հենց իր կյանքի ընկերուհուն է ընտրել: Նա աշխատել է նաև Ասկերանի շրջանի տարբեր գյուղերում, բայց գերակշիռ գործունեությունը նվիրել է հայրենի Խնապատ գյուղին՝ դառնալով այն ժամանակ Արցախում հայտնի քիմիայի երկու-երեք մասնագետներից մեկը:

Բարձրագույն կրթություն ստացել է 1948 թվականին:

Ընտանիքում դաստիարակվել են 3 որդի և 1 դուստր: Որդիներից մեկը՝ Արարատ Ներսիսյանը, ընտրել էր հոր մասնագիտությունը և երկար տարիներ դասավանդել Արցախի մանկավարժական ինստիտուտում: Սաներից ոմանք դարձել են բժիշկներ, որոշներն ընտրել են տարբեր բնագավառներ (գյուղատնտեսություն, կենսաբանություն)՝ ամենուր բարձր պահելով իրենց ուսուցչի անունը:

Բոլոր ելույթ ունեցողները, որ ընկ. Հովհաննիսյանին և՛ աշակերտել են, և՛ հետագայում որպես գործընկեր աշխատել նրա հետ, ընդգծում են հատկապես մեծ մանկավարժի անչար ու անշահախնդիր բնավորությունը, պայծառ հոգին:

Ասկերանի քաղաքապետ Ալյոշա Գաբրիելյանը երանությամբ է հիշում անցյալ դարի 60-ական թվականներին Ասկերանի քաղաքային գրադարանում տեղի ունեցած հանդիպումը, որտեղ ներկա էին Ասկերանի շրջանի բոլոր դպրոցների տնօրենները, ուսուցիչներ, ծնողներ: Ասկերանի գրադարանի տնօրեն Ալեքսանդր Ալեքսանդրի Ալեքսանյանը ասաց. «Ինչպիսի՞ մեծ մարդ է նստած ձեզ մոտ, ինչպիսի՞ մեծ մարդ է նստած ձեզ մոտ»: Ինչպիսի՞ մեծ մարդ է նստած ձեզ մոտ՝ ասում է Ալյոշա Գաբրիելյանը, ինչպիսի՞ մեծ մարդ է նստած ձեզ մոտ՝ ասում է Ալեքսանդր Ալեքսանդրի Ալեքսանյանը:

Ասկերանի քաղաքային գրադարանի տնօրեն Ալեքսանդր Ալեքսանդրի Ալեքսանյանը ասաց. «Ինչպիսի՞ մեծ մարդ է նստած ձեզ մոտ, ինչպիսի՞ մեծ մարդ է նստած ձեզ մոտ»: Ինչպիսի՞ մեծ մարդ է նստած ձեզ մոտ՝ ասում է Ալյոշա Գաբրիելյանը, ինչպիսի՞ մեծ մարդ է նստած ձեզ մոտ՝ ասում է Ալեքսանդր Ալեքսանդրի Ալեքսանյանը:

Զորիկ Աբրահամյանի խոսքը. նա, ճիշտ է, չի տեսել պապին, բայց կանների այն մեծ աստղաբույլին, որոնք սերունդներ են ճանապարհել դեպի մեծ կյանք:

Կրթության բաժնի ավագ մասնագետ Սվետլանա Ասրյանը առանձնացրեց իր ուսուցչի անսահման բնապաշտությունը: Նա սիրում էր այգեգործությունը և մեծ գորովանքով այգի էր մշակում ու բերքբարիքից բաժին հանում ընկերներին ու հարևաններին:

Կրթության բաժնի վարիչ Շահեն Աղաբաբյանը, գնահատելով այդ միջոցառումը, կարևորեց մի բան. նման հուշ-ցերեկույթը գովասանքի արժանի գործ է, քանի որ այդ մեծերը աստղերի են նման, որ լուսավորում են շրջապատը: Ուրեմն՝ նրանց հիշատակը հարգելն ու անմահացնելը ապրողների սուրբ պարտքն է:

Իսկ Կառլեն Մայիլյանը կարևորեց մեծ ուղի անցած հայրենիքի զինվորի ու մանկավարժի իմաստալից գործունեությունը՝ չմոռանալով, իհարկե, որ ինքը ևս ճաշակել է մեծ ուսուցչի դաստիարակող ապտակը…

Շատ հուզիչ էր ընկ. Հովհաննիսյանի թոռան՝ ամեն ինչ գիտի իր մոր՝ Կարինե Ասրյանի պատմություններից, որի համար ընկ.Հովհաննիսյանը թե՛ պապ, թե՛ հայր է եղել (մեծ ողբերգությունը խլել էր աղջկա և մյուս թոռան կյանքը, և վաղամեռիկ աղջկա կարոտը առել է թոռնուհուց՝ Կարինեից):

Ծոռնիկը շնորհակալություն հայտնեց՝ նման միջոցառում կազմակերպելու համար, որովհետև հենց այսպես պիտի սերունդները մեծարեն արժանի մադկանց:

Դպրոցի քիմիայի ուսուցչուհի Անահիտ Առուստամյանը խոստովանեց, որ իր սիրելի ուսուցչի հորդորով փոխեց մասնագիտությունը և երախտապարտ է նրան:

Իսկ, ահա, մեծ մանկավարժին փառաբանող իրենց խոսքով հանդես եկան դպրոցականները ու ամբողջացրին միջոցառումը:

Սա մեծ դաս է մանավանդ նոր սերնդի արժեհամակարգը համալրելու գործում:

Շռայլ հոգու տեր անձնավորության անունը չպիտի մոռացության փոշով պատվի:

Հոգի քանդակողին միշտ պետք է հիշել ու մեծարել:

Շնորհակալություն առաջին հերթին Կարինե Ասրյանին՝ ընկ. Հովհաննիսյանի թոռանը, և մյուս բոլոր կազմակերպիչներին ու օժանդակողներին, որոնց անմիջական մասնակցությամբ իրողություն դարձավ մեծարման ու գնահատման այս միջոցառումը:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՈՐՍ, ՊԱՊԻՍ, ՈՒՍՈՒՑՉԻՍ ՍՈՒՐԲ ՀԻՇԱՏԱԿԻՆ՝ 100-ԱՄՅԱԿԻՆ



Խոնարհվում եմ քո վեհության ու վսեմության առաջ, ո՛վ գիտելիքի ու լույսի սերմնացան, բոլորի համար հարգելի ընկեր Հովհաննիսյան: Վահան Հովհաննիսյանը ծնվել է 1914թ. Նավասարդի օրը (եկեղեցական տոն ամեն դեկտեմբեր ամսվա վերջին շաբաթ օր)՝դեկտեմբերի 27-ին, Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում՝ գյուղացու ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է գյուղում, իսկ միջնակարգը՝ էքստեռն կարգով: Բարձրագույն կրթությունը ստացել է Բաքվում 1948թ.:

Մանկավարժական գործունեությունը սկսել է 1934-35թթ. Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում, որտեղ հանդիպել է իր կյանքի անզուգական ընկերուհուն՝ Մարիամ Օհանյանին: Նա աշխատել է շարքային ուսուցչից մինչև փոխտնօրեն: Դեռ նոր էր ամուսնացել, ու երկու մանուկները դեռ նոր էին բարբառում, երբ հայրենի երկնակամարը պատվեց սև ամպերով. սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: 1941թ. բյուր հայորդիների հետ նա մեկնեց ճակատ՝ փրկելու հայրենիքը ֆաշիստական զավթիչներից, դարչնագույն ժանտախտից՝ բարձր պահելու Հայրենիքի պատիվը, հայի պատիվը: Վ.Հովհաննիսյանը մարտական հարուստ ուղի է անցել, տարբեր ռազմաճակատներում մի քանի անգամ վիրավորվել է, ապաքինվելուց անմիջապես հետո մեկնել է ռազմաճակատ: Նա ծառայել է առաջին Բելոռուսական ճակատում, եղել է ականանետային դասակի, հետո՝ մարտկոցի հրամանատար: Լեհաստանի մայրաքաղաք Վարշավան ազատագրելու, գերմանացիների պաշտպանությունը ճեղքելու, Բեռլինի վրա հարձակվելու, Բեռլինը գրավելու և վերահսկողության տակ առնելու մարտերին ակտիվ մասնակցելու համար չորս անգամ արժանացել է Գերագույն գլխավոր հրամանատար Ստալինի շնորհակալագրերին,1945թ. Վարշավայի, ազատագրման, Բեռլինի գրավման, 1941-45թ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի նկատմամբ տարած հաղթանակի համար մեդալներով: Ցուցաբերած արիության, տոկունության և խիզախության համար նա արժանացել է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանի:

Պապս պատմել է, որ մայիսի 5-ին, երբ ազատում էին ռազմագերիներին, հենց Բեռլինի մատույցներում, ծանր վիրավորվել է, և վիրավորների հետ նրանց տեղափոխել են լեհական Կոտովիցե քաղաքը, ու 4 օր հետո բաղձալի լուրը՝ մայիսի 9-ի հաղթանակը,տոնել են ռազմական հոսպիտալում լաց ու ծիծաղով՝հիշելով իրենց՝ այդպես էլ հաղթանակը չտեսած արի ընկերներին: Երկու տարի անց Վ.Հովհաննիսյանը գյուղ վերադարձավ գավազանով՝ որպես հերոս հպարտ քայլելով հայրենի հողի վրա:

Ձենքը ցած դրեց ու նորից վերցրեց գրիչը, անցավ իր սուրբ գործին՝ մանկավարժությանը: Գթասիրտ էր, շատ բարի, ու միշտ մի գեղեցիկ, գողտրիկ ժպիտ կար նրա աչքերում. այսպես է նկարագրել նրան անվանի մանկավարժ Բահատուր Դավթյանը ընկեր Հովհաննիսյանի 90-ամյակին նվիրված իր հոդվածում, քանի որ աշխատել ու արարել են միասին:

Ես հպարտ եմ, որ պապիս այդպիսի մեծանուն մանկավարժներ են մեծարել, ինչպես օրինակ՝ Նիկոլայ Բաղդասարյանը, որը «Վ.Հովհաննիսյանին՝ իր 70 տարիների համար» նամակում գեղեցիկ բարեմաղթանքներ է նվիրել, և ուրիշներ, որոնց ես իմ շնորհակալությունն եմ հայտնում:

Մեծանուն մարդ, հոգեբան, գերազանց մասնագետ Հովհաննիսյանը չէր դադարում աշխատել իր մասնագիտական հմտությունների վրա: Նա տպագրել էր մի շարք հոդվածներ, նյութեր, ելույթ էր ունենում շրջանային, մարզային փնջի նիստերում, մեթոդմիավորումներում, և նրա անբասիր աշխատանքը աննկատ չմնաց: 1950թ. պարգևատրվեց «Աշխատանքային գերազանցության» համար մեդալով, 1955թ. արժանացավ հանրապետության «Լուսավորության աշխատողների գերազանցիկի կրծքանշանի»: 1984թ. Խնապատի միջնակարգ դպրոցում մեծ շուքով կրթության նախարարության ներկայացուցիչների, դպրոցի կոլեկտիվի, աշակերտների և բարձրաստիճան շատ հյուրերի մասնակցությամբ նշվեց Վահան Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակը:

1970թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար», 1975թ՝. «Աշխատանքի վետերան», «ՍՍՀՄ զինված ուժերի ստեղծման 60-ամյա և 70-ամյա հոբելյանական» և շատ այլ մեդալներով: Չնայած թոշակառու էր, սակայն նրան նորից դպրոց էին հրավիրել աշխատելու: Եվ նորից չարաբաստիկ պատերազմը սկսեց. այս անգամ Արցախ աշխարհն էր վտանգված: Չհայտարարված պատերազմը անողոք էր, անզիջում՝ իր դառն օրենքներով: Նա անցնում էր Արցախ աշխարհով՝ շուրջը սփռելով արյուն, զոհեր, ավերածություններ: Հայրենյաց պաշտպանը այդ տարիքում առաջարկեց իր օգնությունը. նա այցելում էր խրամատներ, քաջալերում էր, աջակցում երիտասարդներին և նրանց նվիրում իր մարտական հեռադիտակը: Ականանետների մեծ գիտակը Ստեփանակերտում ռազմական փորձադաշտում դասընթացներ անցկացրեց:

Նա տանջվում էր, երբ լսում էր իր նախկին աշակերտների զոհվելու մասին: Պատերազմը ավարտվեց մեր քաջերի հաղթանակով:

Վ.Հովհաննիսյանի տան դիմաց, որ գերեզմանատունն է, ավելացավ մի ծաղկազարդ «բնակավայր», մի լո՜ւռ, սակայն փառավոր ու հպարտ անկյուն՝ զոհված քաջերի նկարներով, ովքեր մեր ներկան ու ապագան են, մեր սուրբ պատմության մասունքը: Անվանի մանկավարժը չդիմացավ այս փորձությանը: Նա ամեն ադամալույսի բարի առավոտ էր մաղթում տղաներին և ամեն մայրամուտի մաղթում բարի՜, բարի՜ գիշեր:

Չդիմացավ մեծ մարդու մեծ սիրտը. այն կանգնեց հավիտյան՝ իր հետ տանելով նաև սեփական զավակների կորստյան վիշտը:

1996թ. փետրվարի 12-ին կյանքից ու մեզանից հեռացավ պապս՝ ընկեր Հովհաննիսյանը: Նա չորս զավակ ուներ, չորս սյուն՝ բանիմաց, գրագետ, ովքեր, ցավոք, չկան: Մեծ գերդաստանը մեծ կորուստներ ունեցավ:

Ես հպարտ եմ, որ շարունակում եմ պապիս սուրբ գործը: Երդվում եմ լինել նրա արժանի փոխարինողը:

Շնորհավոր 100-ամյակդ, մեծ մարդ, մեծ մանկավարժ. Ձեր նմանները չեն մահանում, դուք աստղեր եք բյուր աստղաբույլերում, և ապրում եք բոլորի սրտերում ու հուշերում:

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ՊԱՊԻՍ՝ ՎԱՀԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Վճիտ աչքերդ, ու հայացքդ,
Անչափ կարևոր ճիշտ խորհուրդներդ,
Հայր իմ սիրասուն, ես չեմ մոռանում:
Այն, ինչի հասել ու տեսել եմ կյանքում,
Նրանց համար քեզ եմ պարտական:
Հիմա դու չկաս, լոկ հուշ ես դարձել,
Աչքերս են քեզ փնտրել ու արցունքոտվել,
Ամեն բարի մարդու մեջ
«Հայրիկ» կանչելով ես քեզ եմ փնտրել,
Բարության տիպար, իմ հոգու նշխար:
Ի՜մ Աստված, ի՜մ հայր, դու ի՜մ աշխարհ.
Մի մարդու մեջ այդքան խիղճ, համբերություն,
Մի մարդու մեջ այդքան խելք, իմաստություն
Եվ անտա՜կ, անեզր բարություն:
Երբ գովում եմ քեզ ու փառաբանում
Ես հիշում եմ,ու տեսնում Աստծուն
Խոնարհվում ու համբուրում եմ քեզ ու Աստծուն:

Կարինե ԱՍՐԻՅԱՆ
ԼՂՀ Մարտակերտի շրջ. Կիչանի եւ Ղազանչիի Կ.Առաքելյանի անվան միջն. դպրոցի տնօրեն

ՄԵԾԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Հովհ.Թումանյանը հայ ժողովրդի քաղաքական ճակատագրին անդրադարձել է իր ամբողջ ստեղծագործական կյանքում: Պատմվածքներում, հրապարակախոսական հոդվածներում, քնարերգության մեջ մշտապես քննարկել է իր ժողովրդի ողբերգական ճակատագիրը, փրկության ուղիներ որոնել, ժողովրդին վարակել իր լավատեսությամբ, ծանր օրերին հույս ներշնչել:

Օսմանյան Թուրքիայի վարած հայահալած քաղաքականության տարիները համընկան Թումանյանի ստեղծագործական հասուն շրջանին, ինչը պայմանականորեն կարելի է կոչել 1890-1923թթ.:

Այս ծանր ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը պարբերաբար ենթարկվեց ջարդի ու թալանի, ինչը, բնականաբար, չէր կարող անտարբեր թողնել զգայուն ու ազգանվեր բանաստեղծին:

1895-1896թթ. ջարդերի տպավորության տակ Թումանյանը գրեց «Երկու հայր» փոքրածավալ պատմվածքը: Թումանյանը գեղարվեստի հզոր ուժով փոքր ծավալի մեջ կատարել է խտացում, կերտել է հայոց Վեհափառ Հայրապետի ողբերգական կերպարը: Իր սգակիր զավակներին սփոփելու փոխարեն՝ հայոց Հայրապետը օրհնություն է հայցում ընտանիքը կորցրած գյուղական քահանայից:

Պատմվածքում այն տպավորությունն է, որ Թումանյանը հայոց Վարդապետի կերպարում տեսել է իրեն՝ կանխազգալով գալիք արհավիրքները:

Այն, ինչ կատարվեց հետագայում, իրոք, Թումանյանին դարձրեց տիեզերական վշտի տեր բանաստեղծ և որդեկորույս հայր, ով իր անձնական վիշտը միաձուլեց համազգային ողբերգությանը և փորձեց սփոփանք գտնել ստեղծագործ աշխատանքի մեջ՝ անմնացորդ նվիրվելով ժողովրդի փրկության գործին:

1914թ. սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որը նոր հույսեր ու ակնկալիքներ բերեց իր հետ: Հայ երիտասարդ մտավորականներից շատերը հավատացած էին Հայաստանի վերջնական փրկության մեջ և այդ հույսով էլ կամավորագրվեցին պատերազմին: Նույն 1914թ. Թումանյանը գրեց «Վերջին տագնապը» բանաստեղծությունը, որով բացում է պատերազմի իրական դեմքը:

Վեր է կացել հին վիշապը նոր թափով,
Վեր է կացել վերջին մոլի տագնապով
Արյունըռուշտ, ոճիրներով ահավոր,
Մահ է շնչում լեռներն ի վեր ալևոր:

Ինչպես երևում է բանաստեղծության տողերից, Թումանյանը հավատացած էր, որ պատերազմը իրականում փրկություն չէ, և առանձին հույսեր չէր փայփայում՝ կապված Արևմտյան Հայաստանի հետ, բացառությամբ նրա, որ, գնահատելով Հայաստանի աշխարհագրական դիրքը, քաղաքական տեսանկյունից խոսում էր իր ռուսական կողմնորոշման մասին: 1916թ. հրապարակային մի զրույցում Հ.Թումանյանը գրում է. «Ես կարծում եմ՝ իմ հայրենակիցներն այժմ պետք է շատ ուրախ լինեն, որ իրենց բանաստեղծը պատերազմից տարիներ առաջ էնքան ճիշտ ըմբռնած ու պարզ ասած է եղել՝ գրեթե մանրամասնություններով, էն ամենը, ինչ որ հետագայում կատարվեցին...»:

Իսկ Առաջին համաշխարհային պատերազմը նոր ուժով ու դաժանությամբ հարվածեց հայ ժողովրդին, հօդս ցնդեցին փրկության բոլոր հույսերը. Հայաստանը կանգնեց վերջնականապես կործանվելու վտանգի եզրին. Արևմտյան Հայաստանից անընդհատ գալիս էին տագնապալի, հուսահատ լուրեր: Այդ ծանր օրերին բանաստեղծն իր ժողովրդի հետ էր:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թումանյանը երկու անգամ եղավ Արևմտյան Հայաստանում՝ 1914թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 1915թ. մայիս-հունիս ամիսներին: Բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանը գրում է. «Նոր էր վերադարձել Տաճկահայաստանից, եղել էր Ալաշկերտի հովտում, Աբաղայի դաշտում տեսել էր նահանջը, գաղթը, Սարիղամիշի խուճապը: Այս դեպքերի տպավորության տակ էր և չէր կարողանում հանգստանալ: Հիասթափված էր, վրդովված, հոգնած, կես հիվանդ: Այդ ուղևորությունների տպավորությունները Թումանյանը ամբողջացրեց հոդվածներում, բանաստեղծություններում: 1915թ. գրած հոդվածներից մեկը բանաստեղծը վերնագրեց «Ավերակների ու դիակների աշխարհում», «Տաճկահայաստան...Տեսանք...գոնե մի մասը: Թռուցիկ կերպով, բայց թեկուզ թռուցիկ՝ ինչ-որ չի կարելի հասկանալ երկար ու բարակ պատմություններից. նույնիսկ թռուցիկ տեսածը ահավոր էր»:

Գեղարվեստական խտացումներ են 1915-17թթ. գրված «Հայրենիքիս հետ», «Հոգեհանգիստ», «Բարձրից», «Դժոխքի հանդեպ» բանաստեղծությունները:

Թեև բանաստեղծի հոգին բռնկված էր տիեզերական առեղծվածների որոնման ու բացահայտման տենչով, թեև նա ձգտում էր հասկանալ ու բացատրել անհիմանալին, սակայն հայրենիքի վիշտը ավելի զորեղ էր տիեզերական խոհերից, և բանաստեղծը ամեն անգամ, երբ դառնում էր դեպի հայրենիքը, նրա սիրտը մղկտում էր ցավից: Հայրենիքը դարձել էր «սև ու սուգի մի հովիտ», և «ջարդարար աղմուկներով վայրենի, տրորում էին նրա ծաղկավառ երեսը»:

Սակայն այս համատարած վշտի մեջ բանաստեղծը գտնում է ճշմարիտ ուղին, Հայաստանը վեր է երկրային կյանքից, նա կանգնած է հնի ու նորի սահմանին և խոսք է բացել Աստծո հետ: Եվ Թումանյանը, հավատալով իր հայրենիքի վեր հառնելու ուժին, փրկվելու կամքին, բանաստեղծությունը եզրափակում է վեհ ու հպարտ, նոր ու հզոր Հայաստանի կերպարով:

Ավա՜ղ, այդ դժոխային տարիներին չիրականացան Թումանյանի հույսերը. Մեծ եղեռնը ավերակեց պատմական հայրենիքը, յաթաղանից փրկված ժողովրդի բեկորները, բռնած գաղթի ճանապարհը, ցրվեցին աշխարհով մեկ:

Նույնիսկ որբերին հավաքողներ չկային, նույնիսկ որբանոցներ չկային: Հայոց Մեծ եղեռնը շանթահարեց բանաստեղծին, նա գրեց իր ստեղծագործության, թերևս, ամենատխուր ու ողբերգական էջը՝ «Հոգեհանգիստը»: Բանաստեղծության տիեզերական հանդարտությունը ցնցող է, խորապես ողբերգական: Չկա ոչինչ երկրային, որին հենվի բանաստեղծը հոգեհանգիստ կարդալիս. ամեն ինչ մարդուց և մարդկայինից վեր է: Կերոնները հայոց երկնահաս լեռներն են, սաղմոս երգողները՝ Արաքսն ու Եփրատը, խնկարկողները՝ հայոց աշխարհի ցողաբեր ամպերը:

Ընթերցողը մտովի անդրադառնում է «Երկու հայր» պատմվածքի վեհափառ Հայրապետին, ով ինքն է՝ բանաստեղծը: Նա կամովին հանձն է առել պատարագչի դերը և հոգեհանգիստ է կարդում փռված ու ցրված որբերին. ողջ հայ ժողովուրդն է որբ:

Բանաստեղծը դառն հիասթափությամբ ընդհանրացնում է. քանի դեռ մարդը հեռու է իր կոչումից, մարդը մարդակեր գազան է, ուրեմն՝ «դեռ երկար էսպես կմնա»:

Գրական որոնումներին զուգահեռ՝ Թումանյանը ապրում էր իրական կյանքով և որոշում էր ամեն գնով փրկել հայության ողջ մնացած վերջին բեկորները:

Մեծ եղեռնը Թումանյանին դարձրեց իր ժողովրդի առաջնորդներից մեկը, նրա հույսն ու հենարանը: Նա իր ընտանիքով նվիրվեց որբերի փրկության գործին. անհրաժեշտ էր հավաքել նրանց, տեղավորել, ստեղծել կառույցներ, որոնք հոգ կտանեին որբերի մասին:

Նվարդ Թումանյանը հիշում է. «Ժողովրդի նահանջի ու գաղթի լուրը հասավ ամառանոցը, նրա մտքերը նորից փոթորկվեցին, և նույն երեկոյան որոշեց գնալ էջմիածին՝ գաղթականությանն առաջին օգնություն հասցնելու: Միառժամանակ անց, ես էլ մի քանի ընկերուհիներիս հետ մեկնեցի էջմիածին՝ գաղթականների մեջ իբրև գթության քույր աշխատելու»:

Էջմիածինը խորացրեց Թումանյանի տառապանքները. «Նա երկար ժամանակ չէր կարողանում գտնել հոգու հավասարակշռությունը»:

Այդ դժոխքում նա մնաց մոտ երկու ամիս: Գերմարդկային ճիգով Թումանյանը մյուս մտավորականների հետ անում էր անհնարինը՝ թշվառներին պատսպարելու, սովից ու ժանտախտի ճիրաններից փրկելու համար:

Էջմիածնում նա նույնիսկ ընդհարվեց վեհափառ Հայրապետի հետ՝ վեհարանի նոր կառուցված շենքը գաղթականներին տրամադրելու համար: Ինքն իրեն կնքեց Ամենայն հայոց բանաստեղծ և այդ իրավունքով կանգնեց իր ժողովրդի կողքին:

Թումանյանը ապրում էր ծանր հիասթափությունների ու ողբերգությունների շրջան. շուրջը սպանդ էր, աշխարհը՝ արյունոտ:

Ում մոտ գնաս, ծանոթդ, ընկերըդ արյունոտ,
Ոնց մոռանաս էս աշխարքը արյունոտ,
Երգ ես լսում՝ լըսած երգդ արյունոտ...

Ցավով գրում է բանաստեղծը:

Ցեղասպանության հաջորդ տարիներին ազգային ողբերգությանը միաձուլվեց բանաստեղծի անձնական դժբախտությունը: Որբերին հավաքագրելու և տեղավորելու առաքելությամբ իր ընկերների հետ Վան էր մեկնել Արտավազդ Թումանյանը:

«Վանի հովտի և Հայոց ձորի միջև ընկած կիրճերում, որտեղ հայկական բունը երկար դիմացավ, վայրենացած երեխաներ էր հավաքում Արտավազդ Թումանյանը իր ընկերներով»,- գրում է Սերգեյ Գորոդեցկին: Արտ.Թումանյանը զոհվեց քրդերի կողմից: Բանաստեղծի ընտանիքը անակնկալ տեղեկացավ: «Հորիզոնի» լուրերի բաժնում Թումանյանը կարդաց որդու զոհվելու մասին: Բանաստեղծը չհաշտվեց որդու կորստյան ցավի հետ, Վան գնացողներին խնդրում է տեղեկություններ բերել որդուց: Հոգեկան տագնապների խտացումները դարձան քառյակները.

Բերանն արնոտ Մարդակերն էն անբան
Հազար դարում հազիվ դարձավ Մարդասպան ,
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Բոլոր ողբերգությունների պատճառը մարդակեր մարդն է:

Պատերազմը շարունակվում էր, ողբերգությունը հասնում ահռելի չափերի: Թուրքիան, Արևմտյան Հայաստանում գործն ավարտած համարելով, հարձակվեց Հայաստանի վրա: Մնացել էր մի փոքրիկ հողակտոր, կործանման եզրին էր ամբողջ հայ ժողովուրդը: Փախստական հայ ժողովուրդը ապավինել էր Լոռիին: 1918թ. մայիսի 16-ին Թումանյանը կոչով դիմում է իր հայրենակիցներին. «Հավաքվեցե՛ք մեր մութ անտառների նման, կանգնեցե՛ք անսասան մեր սարերի նման, կրա՛կ թափեցեք և զարկեցեք մեր սարերի կայծակների նման: Թո՛ղ թշնամին էլ տեսնի, որ կարելի է էրզրումի վրից էլ անցնել, Ղարսի վրիցն էլ, բայց Լոռու սարերից անցնել չի լինի»: Նա ժողովրդին ոգևորում էր ոչ միայն խոսքով: 1918թ. երբ Հայաստանում շրջում էր մահվան ուրվականը, և ժողովուրդը տեղից տեղ էր քշվում, Թումանյանը իր ընտանիքով գաղթականներին Ղարաքիլիսայից առաջնորդում էր դեպի իր հայրենի Լոռի, ու հույս ունեին փրկվելու ջարդարար թուրքերից:

Անդրադառնալով Թուրքիայի վարած քաղաքականությանը՝ 1920թ. Թումանյանը գրում է. «Վերջին վատություններ» հոդվածը, որով բնորոշվում է «Տաճկաստանի» քաղաքականությունը: Ի՞նչ պետք է անեն հարցին բանաստեղծը պատասխանում է. «Մի քիչ քանդեն, մի քիչ կոտորեն, բայց ավելի շատ կատաղեցնեն ու վրդովեցնեն»:

Թումանյանը այս անգամ ևս մարգարեացավ: Թալանեցին, ջարդեցին, բայց Հայաստանը վերացնել չկարողացան: Թեկուզև վիրավոր, փոքրիկ, բայց Հայաստանը պետություն էր: Կյանքի վերջին տարիներին Թումանյանը իր առաքելությունը կատարեց որպես այդ պետության պատվիրակ:

1921թ. նա մեկնեց Պոլիս՝ եղեռնից փրկված հայ մտավորականությանը հանդիպելու, նրանց միասնական գաղափարի շուրջ համախմբելու, հայ գրականությունն ու մշակույթը միասին զարգացնելու առաջարկով: Դա նպատակ էր՝ հայ մտավորականությանը պետության շուրջ(անկախ պետական ձևից) համախմբելու, պետականորեն գրականությունն ու մշակույթը զարգացնելու, միասնական ջանքերով միակ Հայաստանը հզորացնելու: Միասնական ջանքերով կարելի կլիներ բուժել ցեղասպանության թողած վերքերը, գուցե և կանխելու հայ մտավորականների մնացորդների վերջնական հեռացումը Պոլսից:

Ն.ԱԹԱՆԵՍՅԱՆ
Առաջաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն

ՋԱՎԱԽՔԻ ԱՄԵՆԱՁՈՒԼԱԼ ԵՎ ԿԱՐԿԱՋՈՒՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Տերյանը սովորեցնում է սիրել,Տերյանը սովորեցնում է կռվել, Տերյանը սովորեցնում է պաշտել մեր սուրբ հողը: Տերյանը մեզ լեզու է նվիրել, որ ապրենք մեր շքեղ լեզվի հրաշքներով:
Խոնարհվում եմ Տերյան ծնած ժողովրդի առջև:

Հրանտ Մաթևոսյան

Վերջերս Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցում կայացած հերթական միջոցառումը նվիրված էր Վ.Տերյանի ծննդյան 130-ամյակին, որը կազմակերպել էր դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորման նախագահ Ռիմա Մելքումյանը: Մայրենիի անխոնջ նվիրյալը ջանք ու եռանդ չի խնայում մատաղ սերնդի ճիշտ ու նպատակասլաց կրթման ու դաստիարակման դժվարին գործում: Առհավատչյան ոչ միայն բովանդակալից, հետաքրքիր, ստեղծագործական ու գրագետ կազմակերպված դասերն են, այլ նաև տարաբնույթ միջոցառումները՝ նվիրված հայ մեծանուն գրողներին, որոնք միտված են արժևորել ու գնահատել նրանց մեծ ավանդը, սեր և հետաքրքրություն առաջացնել գիր ու գրականության, պոեզիայի հանդեպ:

Այդ օրը օդը կարծես լցված էր Տերյանով, յուրաքանչյուր հանդիսատես մասն էր կազմում այն պոեզիայի, որ ներկայացվում էր:

Անչափ հուզիչ ու պատկերավոր խոսքով հանդես եկավ միջոցառման կազմակերպիչը. «Երբ ասում եմ՝ Վահան Տերյան, մթնշաղ եմ պատկերացնում, տխուրաչյա ու միգասքող աշուն, սև շուշան, ցնորք աղջիկ, անանձնական մի թախիծ և սիրտ ազնվացնող մի սեր: Ո՞ր հայ պատանին սեր չի շշնջացել Տերյանի տողերով, ո՞ր հայ աղջիկը բարձի տակ չի պահել նրա «Մթնշաղի անուրջները»: Երբ ասում եմ՝ Վ.Տերյան, պատկերացնում եմ տիրամոր պես խոցված, բայց և փյունիկի պես վերստին հարություն առած Երկիր Նաիրին, մեր արքայական լեզուն, մեր լացի նմանվող երգերն ու սրբազան Արարատ լեռը: Աշնան տերևներով զարդարված գեղեցիկ մի ծառուղու էր նմանվում նրա կյանքը:Մի ամբողջ աշխարհ է Տերյանը, աշխարհում ստեղծված մի ուրույն աշխարհ»:

Աշակերտները ներկայացրին Վ. Տերյանի անցած գրական ուղին, նրան՝ որպես մեր գրականության բացառիկ երևույթի, որպես պետական-հասարակական գործչի և, վերջապես, որպես մարդկային բացառիկ ու ողբերգական ճակատագրի:

Տերյանը հայ պոեզիայի ձիթենին է, այսօր էլ ծլարձակում է, վաղն ավելի մեծ կլինի նրա բերքը: Նա խոսքի մեծ վարպետ է, և ոչ միայն: Նրա բանաստեղծական շարքերն ասես գործիքավորված են, որովհետև Վ. Տերյանը հայ բառերին կարծես երաժշտականություն ներշնչեց: Երբ թերթում ես նրա բանաստեղծությունները, երգում է հոգիդ, երգում են և բառերը:

Աշակերտների խոսքը ուղեկցվում էր Վ. Տերյանի տողերով գրված հմայիչ ու գերող երգերով, որոնք անսահման սեր, գորով ու բարություն էին ճառագում՝ պարուրելով հանդիսատեսի հոգին:

Տեսանյութը, որը ներկայացվեց միջոցառման վերջում, պատմում էր Վ. Տերյանի ծննդավայրի՝ չքնաղ Ջավախք աշխարհի անզուգական Գանձա գյուղի, գրողի մանկության, պատանեկության, նրա ընտանիքի, անցած կարճ, բայց իմաստավորված կյանքի մասին:

Հանդիսատեսը մե՛րթ մելամաղձոտ տխրություն էր ապրում, մե՛րթ ունկնդիր լինում նրա իմաստուն խոսքին, մե՛րթ անսահման ցավ ապրում անցածգնացած օրերի համար,մե՛րթ լավատեսորեն տրամադրվում հայ ժողովրդի ապագայի հանդեպ.

Կանգնիր, անկյալ ժողովուրդ,
Ե՛վ հավատա, և՛ տոկա,
Կա քո վշտում վեհ խորհուրդ,
Եվ խաչվածին մահ չկա...

«Մի պահ նույնիսկ սարսափում ես մտածել, թե ինչքան բան պակաս կլիներ մեր բոլորի կյանքում, և ինչքան աղքատ կլիներ մեզանից ամեն մեկը հոգեպես, եթե չլինեին Վ. Տերյանը և այն հարուստ բանաստեղծական աշխարհը, որ նա ստեղծեց այս աշխարհում....»,-ասել է Գևորգ Էմինը:

Այդ օրը Տերյանը բոլորի մեջ էր:Հանդիսատեսը հարստացավ հոգեպես՝ շփվելով բարձրարվեստ պոեզայի բացառիկ նմուշներին:

Սուսաննա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն

ՈՍՏԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂԻ ՆՎԻՐՅԱԼԸ

Արցախն անառիկ ամրոց է իր դրախտային, հիասքանչ բնաշխարհով, հզոր՝ ավագ և նոր սերունդների համագործակցությամբ, իրար սատարելու մեջ, անպարտ՝ իր նվիրյալ զավակներով:

Նվիրյալ զավակներից է հաղորտեցի Աբրիկ Գրիգորյանը, որն ունի արցախցուն հատուկ կյանքի ուղի, հարուստ կենսափորձ:

Ծնվել է 1937թ. մարտի 5-ին Արցախի Հաղորտի գյուղում: Հայրը՝ Ներսես Գրիգորյանը, զոհվել է Երկրորդ աշխարհամարտում:

Ա.Գրիգորյանը 1956-ին ավարտել է գյուղի միջնակարգը, 1959-ին՝ Ստեփանակերտի գյուղտեխնիկումը (այժմ՝ քոլեջ) գերազանցությամբ: Ավարտելուց հետո գործուղվել է հայրենի գյուղ, աշխատել խոշորացված կոլտնտեսությունում՝ որպես բրիգադավարի օգնական:

1961-ին ընտրվել է Հաղորտու գյուղխորհրդի գործկոմի նախագահ, աշխատել 9 տարի: Այդ տարիներին հեռակա կարգով ավարտել է հայկական գյուղատնտեսական ինստիտուտի տնտեսագիտության բաժինը:

1969-1970թթ. կոլտնտեսության տնտեսագետն էր, 1970-79թթ.՝ կուսկազմակերպության ազատված քարտուղար: Պատվով է կատարել իրեն հանձնարարված բոլոր աշխատանքները, որի համար էլ խրախուսվել է պատվոգրերով, գովասանագրերով, շնորհակալագրերով:

1979-ին ընտրվել է կոլտնտեսության վարչության նախագահ, 1982-ին՝ Հաղորտու գյուղխորհրդի նախագահ, աշխատել մինչև խորհուրդների լուծարումը՝ 1995թ. ապրիլի 1-ը:

Հաղորտի և Մուշկապատ գյուղերի սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում շոշափելի հետք է թողել, հարգանք վայելել աշխատավորության շրջանում:

Արցախյան շարժման տարիներին մասնակցել է ստորագրահավաքներին, ելույթներ ունեցել ցույցերում, համաժողովներում, աջակցել բնակչության ինքնապաշտպանության հրատապ հարցերի իրականացմանը:

Պոլյանիչկո-սաֆոնովյան ռեժիմի տարիներին ժողովրդին համախմբել է Արցախի ազգային-ազատագրական գաղափարների շուրջ՝ անտեսելով ամեն տեսակի վտանգ:

Աբրիկ Գրիգորյանն իր ողջ գիտակցական կյանքի ընթացքում ապրել է հայրենի գյուղի հոգսերով, ամեն ինչ արել է՝ հերոսական Արցախ աշխարհի, աշխատասեր ու քաջ արցախցու անունն ու պատիվը բարձր պահելու համար: Նա անմնացորդ պատկառանքով ձգտել է Արցախյան պատերազմի ողջ համայնապատկերի վրա դաժան ու ծանր տարիներին հայրենի Հաղորտի գյուղին վիճակված փորձությունները, իրադարձությունները, մաքառումները ներկայացնել «Հաղորտին՝ Գոյամարտի բովում» գրքով: Այն գրված է տեղին, ժամանակին ու նպատակային ձգտումներով, հայրենի եզերքին ու նրա անվանի մարդկանց փառաբանման նվիրումով: Արցախյան գոյապայքարի հերոսական ճանապարհին իրենց կյանքը, շունչն ու հույսն են տվել գրքում լուսաբանված անվանի հաղորտեցիները: Գիրքը պատմաքաղաքական հնչեղություն ունի: Նրա հերոսները նշանավոր դեմքեր են՝ գիտնականներ, մանկավարժներ, արվեստի ու գրականության գործիչներ, բժիշկներ, ազգային, պետական, հասարակական, կուսակցական գործիչներ, որոնք հայրենի գյուղի այցեքարտն են, վայել նրա փառքին ու անվանը, որ նրանց երակներում հաղորտեցու արյուն է հոսում:



Ահա հայ ազգային ոգու նահապետ, ղարաբաղյան շարժման մրրկահավ, պատմության արթուն զինվոր, հաղորտեցի 80-ամյա Զորի Բալայանի գնահատականը հայրենի գյուղին.

«Հաղորտին հողագնդի այն կետն է, որ միշտ եղել է ու կլինի իմ կյանքի իմաստն ու էությունը: Իմ կյանքը դասավորվել է այնպես, որ ես տեսել եմ ամբողջ աշխարհը: Ես ծայրեծայր կտրել եմ խորհրդային երկրները: Սակայն հողագնդի այս սրբազան անկյան ամեն մի քարը թանկ է ինձ համար՝ որպես հիշողություն հորս՝ Հայկ Բալայանի մասին: Ես հիշում եմ մեր բոլոր աղբյուրները, ձորերը, արահետները, բոլոր այգիները: Ուր էլ լինեմ, Հաղորտին ինձ հետ է, հավերժ»:

Հերոսամարտի ժամանակակից ու ականատես Աբրիկ Գրիգորյանը գրեց պատերազմ ապրած գյուղի, նրա զոհերի, բանտերում դաժանություններ կրած հաղորտեցիների մասին: Հայրենական, Արցախյան պատերազմներում զոհված հաղորտեցիների հիշատակը հավերժացվեց հուշարձանով և գրքով: Ահա թե ինչու հեղինակը, շատ իրադարձություններ, դեպքեր, անուններ ժամանակի հոլովույթում անհետ չկորչելու համար, գրեց «Հաղորտին՝ Գոյամարտի բովում» գիրքը, որը անգնահատելի գործ է, ստույգ տարեգրություն՝ հետագա սերունդներին փոխանցելու համար:

Գրքի ամեն մի տողն ու դրվագը հաստատում են հայրենի գյուղի, օջախի, նրա բնաշխարհի բնակիչների, մի ամբողջ սերնդի արցախյան պատումը: Այն մի հուշակոթող է Հաղորտիի և հաղորտեցիների հերոսական սխրանքների մասին, որոնք անմնացորդ նվիրումով մասնակցեցին Գոյապայքարին՝ փրկելով Արցախն ու արցախցուն:

Արյան գնով ազատագրված հող հայրենին՝ անուշահամ աղբյուրներով, կուսական անտառներով, բարձրաբերձ, երկնաքեր լեռներով, անդնդախոր ձորերով, պատմական հուշարձաններով առլեցուն, արիության և ոգու դարբնոց է, մեր ժողովրդի միասնության խորհրդանիշը, ամենաթանկ պարգևն Արցախյան պայքարին, հաղթանակին:

Գրքի հերոսների կերպարներով ընթերցողը դաստիարակվում է հայրենասիրությամբ, ծնողասիրությամբ, անկեղծությամբ, ավանդապաշտությամբ, մարդկային վեհ գաղափարներով:

Հայրենի Հաղորտի գյուղի երիտասարդներն անցյալին, իրենց արմատներին արժանի նվիրյալներ են, գյուղի ճակատագրով ապրող, նրա լույսերի մեջ իրենց ապագան տեսնող արցախցիներ՝ պատրաստ արյամբ ձեռք բերածը հարատև պահելու: Հենց դրա մեջ է Արցախի ուժն ու բարգավաճելու առեղծվածը՝ համակված հպարտության ու հավատի ամենաջերմ զգացումներով:

Արցախն անպարտ է իր նվիրյալ զավակներով:

Գիրքը հուսադրում և լավատեսություն է ներշնչում ապագայի նկատմամբ՝ պատկերելով ծննդավայրի պատմության էջերը:

Հայտնի է, որ մեր օրերում հանրապետության ռազմավարական քաղաքականության հիմքը Արցախի գյուղերի սոցիալ-տնտեսական զարգացումն է: Այդ նպատակով «Մեր գյուղը» խորագրով հեռուստահաղորդումները, գյուղական կյանքին նվիրված գրքերը, հոդվածներն ու ակնարկներն ավելի ակնառու են դառնում և արժևորվում: Պարզ է, որ Արցախի գյուղաշխարհի նման լուսաբանումները խթան կհանդիսանան հայրենի եզերքի, օջախի, արմատների ամրապնդմանը, պետական ռազմավարական քաղաքականության իրագործմանը:

Վերոնշյալների առումով խրախուսելի է Աբրիկ Գրիգորյանի «Հաղորտին՝ Գոյամարտի բովում» հայրենաշունչ գիրքը, որն օրինակ կծառայի շատ նվիրյալների՝ գրելու բազմաբովանդակ հիշողություններ հայրենի գյուղի պատմական անցյալի ու ներկայի, կրթամշակութային կյանքի, ավանդույթների, սովորությունների, համագյուղացիների հերոսական պայքարի մասին, որպեսզի դրանք՝ որպես փաստագրական հարուստ ժառանգություն, փոխանցվեն ապագա սերունդներին:

Ալբերտ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԼՂՀ վաստակավոր մանկավարժ

Շնորհավորանք

ԽՈՍՔ Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ

Բնատուր գեղեցիկ և բարետես, եռանդով լեցուն, աշխատասեր, իր աշխատանքային յուրաքանչյուր օրը ստեղծագործությամբ լցնող մարդն ու ուսուցիչը Նաիլա Գաբրիելյանն է՝ Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի վաստակաշատ մանկավարժներից մեկը, ով արդեն 60-ամյա հոբելյանականով, իմաստնացած հայացքով կարող է հետ նայել և ի մի բերել իր մանկավարժական գործունեության բեղուն ու նվիրական տարիների արածն ու թողածը:

Իրավունք է վաստակել փաստելու և ասելու, որ օրինակելի աշխատանքային կենսագրություն, հավաքական մեծ սեր վաստակած մանկավարժ է, որ տքնում ու դողում է իր ամեն մի սանի հետ, որ միշտ պատասխանատվությամբ լեցուն քայլերով է մտնում դպրոցի շեմից, որ աշխատում է իր սաների ամեն օրը դարձնել հետաքրքիր անակնկալ, որ դարձել է ջանասեր ու ստեղծագործող լավագույն ուսուցչի օրինակ իր շրջապատի, գործընկերների համար:

Ն.Գաբրիելյանը ծնվել է 1955թ. փետրվարի11-ին, Մինգեչաուր քաղաքում:Հոր վաղաժամ մահից հետո մոր հետ վերադառնում է Արցախ, մերվում հարազատ հող ու ջրին հոգու ամբողջ թելերով: Այստեղ է նա ըմբոշխնում պատանեկության բերկրանքը, ուսանողական զվարթ ու բովանդակալից տարիներն ու հասուն կյանքի խորախորհուրդ ընթացքը:

Ն.Գաբրիելյանը ոչ միայն սիրված, հարգված մանկավարժ է, այլ նաև հոգատար մայր, բանիմաց տատիկ ու մեծ գերդաստանի օրինակելի հարս:

Նրա իմաստուն խորհուրդներով են կյանք մտել սաներն ու զավակները: Տասնյակ սերունդներ է կրթել ու դաստիարակել նրբաճաշակ ուսուցչուհին: Շուրջ քառասունամյա իր մանկավարժական գործունեության ընթացքում չէր կրկնել ինքն իրեն: Նրա բոլոր դասերն ու միջոցառումները ստեղծագործական մի նոր ժայթքում են, յուրաքանչյուր սերնդի հետ քայլում է ժամանակի շնչով, փորձում գեղագիտական ճաշակի նուրբ թելերով իր սաների մեջ սերմանել բարին ու գեղեցիկը: Նրա շուրթերով խոսում է մեծ հայրենասերը, հոգատար ու խստահայաց մանկավարժը, պահանջկոտ ու բարեխիղճ անհատը:

Իր սաների համար նա գիտելիքների անսպառ շտեմարան է, հույզերի հորդաբուխ աղբյուր և մեծ հեղինակություն:

Ն.Գաբրիելյանը նրբանկատ, հմուտ հոգեբան է, նա իր խորաթափանց հայացքով կարողանում է սուզվել յուրաքանչյուր սանի հոգու խորքը և մայրական նուրբ ու քնքուշ ժպիտով ու խոսքով հանդարտեցնել հոգու խռովքը:

Իր վառ օրինակով նա ուժ ու եռանդով վարակել է նաև կրտսեր գործընկերներին: Բարի, անաչառ մարդ է, իմաստուն խորհրդատու և անմնացորդ նվիրումով օժտված հոգու սերմնացան:

Սիրելի՛ գործընկեր, շնորհավորում ենք Ձեր ծննդյան 60-ամյակը, ցանկանում նորանոր բարձունքներ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում: Մաղթում ենք աստղաբույլ երջանկություն, հոգեկան խաղաղություն և բազում տարիների բեղմնավոր աշխատանք:

Թող հաջողություններն ուղեկցեն Ձեր կյանքում, երկար տարիներ անհոգ վայելեք Ձեր հարազատների բերկրանքն ու սերը:

Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվ. հ. 2 հիմն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Սիրելի՛ ընկեր Գաբրիելյան, ծնողների անունից շնորհավորում ենք Ձեզ՝ 60-ամյա հոբելյանի առթիվ: Մաղթում ենք Ձեզ առողջություն, անձնական երջանկություն, ուժ և եռանդ Ձեր պատվաբեր գործում:

Ձեր շնորհիվ մեր մանուկները՝ հայոց այբուբենի տառերով զինված, փոքրիկ զինվորներ են դարձել, այսուհետ նրանց է նաև վստահված մայրենին անաղարտ պահելու, պաշտպանելու, դարերին հասցնելու սուրբ գործը: Այս ամենը արգասիքն է Ձեր անքուն գիշերների, Ձեր անխոնջ աշխատանքի: Դուք ջանք չեք խնայել մեր փոքրիկների ձեռքին դնելու այն ոսկե բանալին, որով նրանք վստահորեն կբացեն գիտելիքի խորախորհուրդ գաղտնարանների դռները: Դուք լույսի և բարության սերմնացան եք և մարդկային հոգու ճարտարապետ: Ձեր ուժն ու կորովը չեք խնայում, տալիս եք մեր երեխաներին, սակայն ձեր հոգու լույսը դրանից չի պակասում, որովհետև դա այն նվիրումներից է, որ տալով մարդ հարստանում է: Երեխաների հանդեպ տածած անկեղծ սիրուց է ծնվում իսկական մանկավարժը: Մայր եք եղել բազում փոքրիկների, Դուք մոր պես թանկ եք նրանց համար: Մեզ համար Դուք կլինեք այն մարդը, ում մեծության և գործի առաջ միշտ կխոնարհվենք, քանզի Դուք եք դնում նրանց ուսման հիմնաքարը, և մենք համոզված ենք, որ այն ամուր կլինի և չի խարխլվի: Չինական առածն ասում է, թե այն երկիրը, որն ուսուցիչներ քիչ ունի, աղքատ է, իսկ ուսուցիչն աղքատ է, երբ նրա մոտ պակասում է սերը իր գործի և երեխաների նկատմամբ:

Սիրելի՛ ընկեր Գաբրիելյան, լինեք միշտ այդպես վեհ ու բարձր Ձեր կոչումով ու պատվաբեր գործով: Թող բազմապատկվեն Ձեր ջանքն ու եռանդը, որպեսզի կարողանաք Ձեր ծով գիտելիքներով զինել մեր մատաղ սերնդին: Ձեզ անթիվ օրհնանքներ ու լույսի ցոլքեր ենք նվիրում: Ներող կլինեք մեր երեխաների չարությունների համար:

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմն. դպրոցի 4-րդ «բ» դաս. ծնողական կոմիտե

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ԻՆՔՆԱՅՐՈՒՄՈՎ ԱՊՐԵՑ, ՀԵՌԱՑԱՎ ՉՄՈՌԱՑԱՇ

Գործընկերոջս՝ Ռիտա Պողոսյանի անմար հիշատակին

Անհավատալի է, որ գրիչս պետք է վերցնեմ ու հիշատակի խոսք ասեմ մի մարդու մասին, որ դեռ երեկ մեզ հետ էր՝ իր բազում ծրագրերով, մտահղացումներով, անսպառ եռանդով: Մարդ, որ իր գործի նվիրյալն էր. բազմաշնորհ մանկավարժ, սկզբունքային մտավորական, լավ ընկեր, անսահման հայրենասեր, որ իր ետևից թողեց երբևէ չլրացվող դատարկություն: Իմ պատկերացումների ոչ մի սահմանաշերտում չի տեղավորվում, որ նա չկա այլևս, որովհետև աչքերիս առջևից չի հեռանում իմ գործընկերոջ, Մեծ ուսուցչիս ժպտուն, խոսուն, բարի հայացքը, չի տեղավորվում, քանզի իմ ունկերում նրա բարեհամբույր ձայնն է, այն խրատները, որոնք ինձ օգնեցին բացահայտելու մանկավարժական արվեստի շատ գաղտնիքներ:

...Չորս տասնամյակ աշակերտներին փոխանցելով իր փորձն ու գիտելիքները՝ Ստեփանակերտի Հովի. Թումանյանի անունը կրող հ.9 հիմնական դպրոցի ուսուցչուհի Ռիտա Պողոսյանը ուրախանում էր սաներից յուրաքանչյուրի հաջողությամբ և ծով համբերությամբ նրանց մեջ հետաքրքրություն էր սերմանում մեսրոպյան այբուբենի ամեն մի մասնիկի հանդեպ, հայկական մեծ պարսպի, որի հոգևոր դռները արդեն 16 դար է, ինչ բաց են բարեկամի և փակ՝ թշնամու առջև: Արժանապատվորեն ծավալած բազմամյա մանկավարժական գործունեությունը կերտեց իր ոչ միայն աշխատանքային, այլև հոգևոր կենսագրությունը՝ ազնիվ ու շիտակ մտավորականի իսկական նկարագիրը: Նա հայ միտքը արթուն և կենսական պահողի, հայի հոգու միջնաբերդը պահպանողի ու հսկողի առաքելություն ուներ, վասնզի կրել է «շնորհքն ի հոգւոյն»: Այո՛, նա իր էությամբ ուսուցիչ էր, որովհետև ուսուցչությունն իր կոչումն էր:

Այս խստահայաց, բայց միևնույն ժամանակ մեղմ, խորաթափանց ուսուցչուհին օժտված էր ոչ միայն գիտելիքը փոխանցելու վարպետությամբ, այլև հոգեբանի բնատուր շնորհով: Տարիների ընթացքում Ռ. Պողոսյանը ունեցել է հարյուրավոր սաներ և սիրած կրթօջախում աճել ու հասունացել է իր սաների հետ միասին: Սատար է եղել նրանց՝ անորոշության, մտքի, կամքի տկարության պահերին և կայացել իբրև մանկավարժ: Նրա ուշադրության կենտրոնում էին ընտանեկան խնդիրների պատճառով անուշադրության մատնված, ինչպես նաև ֆիզիկական արատ ունեցող երեխաները, որոնց հետ նա համակարգված աշխատանք է կատարել՝ փոխանցելով ոչ միայն իր գիտելիքները, այլև հոգու լույսն ու ջերմությունը: Նա կարողանում էր երեխաների մեջ տեսնել այն բյուրեղը, որը պետք է հղկել և հնարավորություն տալ փայլելու: Աշխատասիրությունը դիտարկում էր որպես զարգացման գրավական: Բացառիկ կարևորություն էր տալիս ընթերցանությանը՝ անասելի, պաշտամունքի հասնող սեր տածելով գրքի հանդեպ: Չէր հոգնում կրկնելուց. «Ուսուցիչը ոչ միայն պետք է լինի ուսուցանող, այլև ուսանող, քանզի կրում է բոլոր ժամանակների հեշտ ու անասելի դժվար, պարզ ու այնքան բարդ, հասկանալի և անհասկանալի, բոլոր ժամանակների ամենաարդիական մասնագիտությունը»:

Տարիներ շարունակ Ռ. Պողոսյանը հաջողությամբ ղեկավարել է կրտսեր օղակի քաղաքային մեթոդմիավորման աշխատանքները, ձևավորել ավանդույթներ, որոնք քայլ առ քայլ, բայց հետևողականորեն իրականացնում են կրտսեր դպրոցի ուսուցիչները: Նրա մանկավարժական քուրայով են անցել հանրապետության տասնյակ ուսուցիչներ, ովքեր թրծվել ու կոփվել են նրա մասնագիտական արհեստանոցում և սիրով այդ ձեռք բերած փորձը այսօր կիրառում են մանկավարժության մեջ: Նույնիսկ ամենատկար վիճակում, երբ անգութ հիվանդությունը չէր խնայում նրան և գամել էր անկողնուն, Ռ.Պողոսյանը չէր վարանում օժանդակելու խնդրանքով դիմած ուսուցչին, միաժամանակ հորդորում՝ զբաղվել ինքնակրթությամբ և չբավարարվել ձեռք բերածով:

Ռ. Պողոսյանի անձնական արխիվում այսօր խնամքով պահպանվում են մեծ թվով պատվոգրեր, շնորհակալագրեր, պետական գերատեսչական պարգևներ: Չնայած ուսուցիչը համեստորեն սիրում էր պնդել, թե կարևորը մրցանակ շահելը չէ, այլ մրցության մեջ առավել բարձր արվեստ դրսևորելը, սակայն մենք՝ այդ գործի երախտավորներս, շատ լավ գիտենք՝ ինչպիսի ներդրում է պահանջվում նման գնահատանքի արժանանալու համար:

Բազմաթիվ հրապարակումների, գրքույկների կողքին Ռ. Պողոսյանը երազում էր հրատարակված տեսնել բառարան-ձեռնարկ, որը խիստ անհրաժեշտություն է կրտսեր դպրոցի սաների համար: Ցավոք, մեծ մանկավարժի հեռահար նպատակը մնաց անկատար: Չնայած նա լուռ խոնարհումով գործող համեստ մշակի կենսակերպ էր դավանում, այդուհանդերձ, նրա ապրած կյանքը, ժամանակի անհուն հարահոսքում մնայուն հետագիծ թողեց՝ քչերին վիճակված ազնիվ ու նվիրումի ճանապարհ, ով իր համակ երկրային կյանքը ի սպաս է դրել բարձրարժեք գործի՝ անմնացորդ ծառայելով մատաղ սերնդի գաղափարական դաստիարակությանը:

...Օրերը կբոլորեն, ամիսներ կդառնան, եղանակները կհաջորդեն մեկը մյուսին, նոր գարուններ կգան, սակայն այս ծմեռը ամենից շատ կհիշենք. այն մեզնից տարավ մի թանկ ու արժանավոր մարդու, մի մտավորականի, ու մի դրական լիցք էլ պակասեց չարից ահագնացող մեր երկրային կյանքում: Փոխարենը ղողանջեցին զանգերը երկնային, արևն իր գիրկն առավ նրան, որ հետո գիշերային ժամերգության չքնաղ ժամերին լուսնի ու աստղաբույլերի իշխանությանը հանձնի նրան, որպեսզի մենք՝ ապրողներս, հավերժի մեջ խնկարկենք Ռիտա Պողոսյան մարդու անունն ու հիշատակն անմար:

Լորեպա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի պատմության ուսուցիչ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ԼՂՀ Քաշաթաղի շրջանի ներքոնշյալ դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար

1. Բերձորի հ.1 մ/դ - ֆիզիկա՝ 7ժամ, մաթեմատիկա՝ 15 ժամ,
2. Քարեգահի մ/դ – ֆիզիկա՝ 10ժամ,
3. Վարդուտի մ/դ - ռուսաց լեզու՝ 17 ժամ,
4. Ղազարապատի մ/դ – օտար լեզու՝ 10 ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ, պատմություն՝ 15 ժամ,
5. Գանձայի մ/դ – ռուսաց լեզու՝ 8 ժամ,
6. Բազմատուսի մ/դ – հայոց լեզու և գրականություն՝ 6 ժամ,
7. Դրախտաձորի հ/դ - ռուսաց լեզու՝ 11 ժամ, օտար լեզու՝ 10 ժամ,
8. Վաղազինի մ/դ - օտար լեզու՝ 8 ժամ, պատմություն՝ 12 ժամ,
9. Արտաշավիի մ/դ - հայոց լեզու և գրականություն՝ 22 ժամ,
10. Շալուայի մ/դ – մաթեմատիկա՝ 6 ժամ, ֆիզիկա՝ 6 ժամ,
11. Մովսեսաշենի հ/դ - ռուսաց լեզու՝ 6 ժամ,
12. Սուսի մ/դ – աշխարհագրություն՝ 6ժամ, պատմություն՝ 15 ժամ,
13. Արվականի հ/դ – դասվար՝ 2 դրույք, հայոց լեզու և գրականություն՝ 12 ժամ, օտար լեզու՝ 6 ժամ, մաթեմատիկա՝ 13 ժամ,
14. Մշենիի մ/դ - օտար լեզու՝ 10 ժամ,
15. Սոնասարի մ/դ – մաթեմատիկա՝ 12 ժամ, օտար լեզու՝ 19 ժամ,
16. Տանձուտի հ/դ – ռուսաց լեզու՝ 11 ժամ, մաթեմատիկա՝ 6 ժամ, ֆիզիկա՝ 5 ժամ,
17. Մոշաթաղի մ/դ – պատմություն՝ 15 ժամ,
18. Միրիկի մ/դ – ռուսաց լեզու՝ 8 ժամ, օտար լեզու՝ 10 ժամ,
19. Աղանուսի մ/դ – հայոց լեզու և գրականություն՝ 9 ժամ, դասվար՝ 1 դրույք,
20. Վուրգավանի մ/դ – մաթեմատիկա՝ 11 ժամ,
21. Ուռեկանի մ/դ – դասվար՝ 1 դրույք, հայոց լեզու և գրականություն՝ 28 ժամ, ֆիզիկա՝ 7 ժամ,
22. Սարատակի մ/դ – աշխարհագրություն՝ 10 ժամ,
23. Տիգրանավանի մ/դ – ֆիզիկա՝ 8 ժամ,
24. Իշխանաձորի մ/դ – մաթեմատիկա՝- 20 ժամ, ռուսաց լեզու՝ 15 ժամ,
25. Արծվաշենի հ/դ – օտար լեզու՝ 8 ժամ,
26. Աղաձորի մ/դ – ռուսաց լեզու՝ 21 ժամ, զինղեկ՝ 1 դրույք, ՔՊՇՊ՝ 0,5 դրույք,
27. Կումայրիի մ/դ – ռուսաց լեզու՝ 22 ժամ,
28. Վանի մ/դ – ռուսաց լեզու՝ 22 ժամ, օտար լեզու՝ 12 ժամ, ինֆորմատիկա՝ 6 ժամ,
29. Դիցմայրիի հ/դ – մաթեմատիկա՝ 15 ժամ, հայոց լեզու և գրականություն՝ 12 ժամ,
30. Ալաշկերտի մ/դ - օտար լեզու՝ 11 ժամ,
31. Ծորքաձորի հ/դ - ռուսաց լեզու՝ 6 ժամ, պատմություն՝ 11 ժամ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան մարտի 16-ից 20-ն ընկած ժամանակահատվածում:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

Հայտարարվում է մրցույթ ԼՂՀ Շահումյանի շրջանի ներքոնշյալ դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար

1. Ակնաբերդի մ/դ – հասարակագիտություն՝ 6 ժամ, ռուսաց լեզու՝ 6 ժամ,
2. Նոր Բրաջուրի մ/դ – զինղեկ՝ 1 դրույք, դասվար՝ 19 ժամ, ֆիզիկա՝ 10 ժամ,
3. Նոր Գետաշենի մ/դ - քիմիա, կենսաբանություն՝ 14 ժամ, պատմություն՝ 11 ժամ, ֆիզկուլտուրա՝ 9 ժամ, օտար լեզու/ անգլերեն/՝ 12 ժամ
4. Դադիվանքի մ/դ - քիմիա, կենսաբանություն՝ 12 ժամ, օտար լեզու/ անգլերեն/՝ 10 ժամ, ֆիզկուլտուրա՝ 12 ժամ,
5. Եղեգնուտի մ/դ – օտար լեզու /անգլերեն/՝ 14ժամ, աշխարհագրություն՝ 9 ժամ,
6. Զուարի մ/դ – ռուսաց լեզու՝ 9 ժամ,
7. Նոր Էրքեջի մ/դ – հայոց լեզու և գրակ.՝ 10 ժամ, դասվար՝ 20 ժամ, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ, քիմիա-կենսաբանություն՝ 14ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ, զինղեկ՝ 1 դրույք,
8. Նոր Խարխափուտի հ/դ – զինղեկ՝ 0,5 դրույք, դասվար՝ 20 ժամ,
9. Ծարի հ/դ – մաթեմատիկա, ֆիզիկա՝ 7 ժամ, աշխարհագրություն, պամություն՝ 8 ժամ, հայոց լեզու և գրակ.՝ 11 ժամ,
10. Հավսաթաղի հ/դ – քիմիա, կենսաբանություն՝ 8 ժամ, օտար լեզու/ անգլերեն/՝ 8 ժամ
11. Նոր Ղարաչինարի մ/դ – ֆիզիկա՝ 8 ժամ, մաթեմատիկա՝ 16 ժամ, պատմություն՝ 6 ժամ, ռուսաց լեզու՝ 18 ժամ, հայոց լեզու և գրակ.՝ 24 ժամ,
12. Նոր Մանաշիդի հ/դ – պատմություն՝ 20 ժամ, ռուսաց լեզու՝ 15 ժամ, ֆիզիկա, ինֆորմատիկա՝ 18 ժամ, օտար լեզու / անգլերեն/՝ 12 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ,
13. Չարեքտարի մ/դ – ֆիզիկա՝ 10 ժամ, դասվար՝ 22 ժամ, օտար լեզու/ անգլերեն/՝ 14 ժամ, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ, դասվար՝ 20 ժամ, շախմատ՝ 6 ժամ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենա մարտի 16-ից 20-ն ընկած ժամանակահատվածում:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2012թ. 25-26, առարկայական հարցաշարերը՝ 2014թ. 23-24 համարներում և տեղադրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. անձնագրի պատճենը,
4. ինքնակենսագրություն (Ձև 4),
5. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 28.02.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: